


№16



ԻՈՒՆ

ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՍՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՓ
ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

ԾԹ ՏՄԻԻ

ԺԱ-ԺԲ

1985



ՄԻՈՆ

ԱՄԱՍԳԻՐ
ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԾԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1985

Նոյեմբեր — Դեկտեմբեր

Թիւ 11 — 12

1985

November — December



No. 11 — 12

SION

VOL. 59

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԻ

«ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՏԱԳՆԱՊԸ»

Ե.

«Հնացուցիչ հոգևոյս մասնացի»
Ն Ա Ր Ե Կ

«Հողիս հինցնողը ինք փճանայ», կ'ըսէ Նարեկացին: «Դու՛ն պիտի անցնիս պատմութեան, գուցէ շրջուած հասկացողութեամբ», կը սիրէր ըսել Օշականը, երբ խօսէր ապագայի մասին: Այն միամիտ օրերուն, չէի անդրադառնար ինծի եղած այս մարզարէութեան, մեծ զրագէտի կողմէն զուշակուած, և դժբախտաբար ցարդ կը մնամ տակաւին շրջուած՝ բոլոր կովարածներէն:

Արդ, Եղիվարդը շրջուած հասկացուած եղերաբախտ եկեղեցական մըն է, քառասուն տարիներէ ի վեր: Թէ ի՞նքն է հեղինակը իր այս ճակատագրին թէ ուրիշներ՝ արդիւնքէն ոչինչ կը փոխուի: Զարմանալին այն է սակայն, որ տակաւին մինչև երէկ Եղիվարդը նախախնամութիւն նկատողները կը ժպտին այսօր մոռնալ իրենց ըսածը և նոր նախադրեալներու առջև կենալ, ուրացողի անարդ կեցուածքով, երեսուն արծաթի հաշուոյն: Մուրացկանները սկզբունք և բարոյական չունին, ով որ շատ վճարէ՝ անոր գերին կը դառնան: Ամօթ անոր որ գերի է նիւթին, վասնզի այդպիսին կը դաշնակցի շարիքի մը՝ որ մեծագոյնն է բոլոր շարիքներուն: Առանց հոգեկան կառոյցի, մարդը զազրելի վիժուկ մըն է, զինով մը՝ իր փսխուքին մէջ ինկած, վիրալից մը՝ իր փտութեան վրայ պառկած, բայց մանաւանդ կարկտան մը՝ սատանայի յետոյքին նետուած: Անոնց՝ մուրիկներուն դէմքերը դիմակ ունին և ձեռքերը ձեռնոց: Անոնք աւանդութեան ոսկեգեղմ որոնող արգոնաւորդներու նման կը մոռնան ամէն ինչ, ի խնդիր ոսկեգեղմին, որ այս պարագային հարուստներն են, որոնք միամտօրէն կը կարծեն թէ նիւթականով կրնան աննիւթականը գնել:

Սակայն կեղծպարիշտներն ու ոսկեբարձները կը պղծեն ճշմարտութիւնը այս կերպով, պարպելով հոգիները այն գերագոյն և միակ հարստութենէն, զոր մարդկութիւնը ունի: Աշխարհի բոլոր օրէնքները չեն կրնար ուղղել և արդարացնել մարդը, եթէ գերի է ան նիւթին: Ընչաքայցութիւնը հոգիին մէջ բուսած մազ է, դժոխքին կրակներն անգամ չեն կրնար այրել զայն:

Տակաւին մինչև երէկ, Եղիվարդը ամենէն բարձրաթոիչ եկեղեցականներէն մին էր, որ նախընթաց շուրջ քառասուն տարիներուն ունեցաւ իր դործն ու դերը, թէ՛ Երուսաղէմի Պատրիարքարանէն ներս և թէ՛ մեր եկեղեցական կեանքի վերջին իրադարձութիւններու պարագային: Որուն առջև իրենց զոյգ փեղկերով բացուեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետութեան բարձրագոյն Աթոռին դուռները:

Երուսաղէմի Պատրիարքութեան ինչպէս Հայ Եկեղեցւոյ շահերուն նկատմամբ իր նախանձախնդրութիւնը աննահանջ կորովի վերածուած է յաճախ, ա-

ևսնց արտաքին ցոյցի և պոռոտ արտայայտութիւններու, որոնք շատ յաճախ այդ առաքինութիւններու աղքատութիւնը կը մատնանշեն ենթակային մէջ։ Երուսաղէմի երկու աթոռաքանդ պայքարներու պարագային, Հայ եկեղեցականի իր կեցուածքը անոնց նկատմամբ՝ որոնք տրտում անձնականութեան, կիրքի և փառասիրութեան հաշուոյն, իրենց հոտած հաւկիթը խաշելու համար, պատրաստ էին այս սրբազան Տունին լշահն ու իրաւունքը կրօնի տալու, պիտի չմոռցուի Երուսաղէմի Պատրիարքութեան տարեգրութեան մէջ։

Հակառակ իր խիզախութեան, խորշած է միշտ ծայրայեղութիւններէ, քաջ զիտնալով թէ ամէն չափազանցութիւն կը պլտորէ մարդկային առաքինութիւններու աղբիւրը։ Միրտն է եղած առաւելաբար կեդրոնը իր էութեան, և այդ սիրտը յաճախ շատ լայն բացած է իր թևերը, դառն հիասթափութեան առաջնորդելու աստիճան զինքը։ Քանակով քաշուած զիծերու և թիւերով ճշդուած հաշիւներու մարդը չէ եղած երբեք, ինչպէս չէին իր մտատիպարները։ Ձևէն, տարագէն ու տառէն վեր, ողիին բարախուն ճշմարտութեան իր մտասեռումը, յաճախ իր նկատմամբ սխալ հասկացողութիւններու տարած է մեր օրերու Փարիսեցիները, որոնք ուղտը կլլելու համար մտեղին սակարկութիւնը փորձած են ընել։ Փառասիրութիւնը, այն զգացումը՝ որ կրնայ լկել տխեղձ հոգիները, իր սիրտէն միշտ հեռու մնացած հրայրքներէն մին է եղած։ Ըրած է իր լաւագոյնը, կարողութիւններու իր սահմանին մէջ, ոչ թէ ի ինդիր անուան կամ համբաւի, այլ պարտականութիւն մը կատարողի զիտակցութեամբ։

Պոռոտ ցոյցերէ խորշած է, նկատելով զանոնք ծանծաղամիտ մարդերու զոհացում տուող կերպեր միայն։ Արնամարնանքով կը նայի բոլոր սուտ բաներուն, սուր քմծիծաղով մը՝ որուն իմաստը կը փոխուի մարդէ մարդ և պարագայէ պարագայ։ Բայց իր այդ կեցուածքը մարդոց վերէն նայիլ մը չէ, այլ արնամարնելն է զոռոգութիւնն ու սնափառութիւնը անոնց՝ որոնք իրենց շուսնեցածովը աշտարակներ կը փորձեն կանգնել օդին մէջ։

Իբրև զրչի և բեմի մարդ, անիկա մին է մեր արդի եկեղեցականներէն, որուն խօսքն ու մտածումը իր հոգիին մէջէն զիտէ բանալ մեր անցեալի արժէքները, մեր կրօնքին լոյսերը, մեր ժողովուրդին առաքինութիւնները։ Երբ քերթողութիւնը յարատև ձգտումն ունի ազգային և հոգեշունչ գծով մը կերպադրել Աստուածաշնչական և հայրենական պատկերներ, դէմքեր ու դէպքեր։ Անոր ողին, գործելու եղանակը, կեանքը ըմբռնելու իւրայատուկ կողմերը թէև կը գատեն զինքը որոշ չափով իր մտատիպարներէն, բայց չեն հերքեր զանոնք։

Գրական կարողութեան զուգընթաց, կայ իր խօսքին շնորհ, ուրիշ ապացոյց մը իր զգայնութեան, գտնելու համար հոսումին ահօսը դէպի զանգուածներու սիրտը։ Մեծ հեռապատկերներ ընդգրկող, բարձունքներու սևեռաբիր անձնաւորութիւն մըն է Եղիշէ Պատրիարքը։ Գիտէ միշտ հաստատ և վեր մնալ հոն՝ ուր ուրիշները կը զայթին։ Դժուարութիւններուն զիմանալու, ապերախութիւններ մարսելու և իր գաղափարներուն ի ինդիր պայքարելու ուժը շատ քիչեր ունին իրեն հաւասար։ Ոչ ոք կրնայ շեղեցնել զինքը իր տեսած ճամբայէն։ Իր քիչ մը սկեպտիկ բայց քաղցր ժպիտին տակ պահուած կայ կամքին ամենէն մաքուր և պինդ մետաղը, զոր ան ցոյց տուած է բոլոր պայքարներու ընթացքին։

Այսօր մարդեր կան, վերի և վարի խաւերէն, որոնք կը մեղադրեն Եղիվարդը, «Սիոն»ի մէջ «Երուսաղէմի Տագնապը» խորագրով իր արտայայտութիւններուն համար: Մարդեր՝ որոնք Տիրան - Եղիշէ պայքարի օրերուն նոյն խարդախ կշիռքով կշռեցին իրողութիւնները, յետոյ չքմեղելով իրենց ըրածը, փորձեցին արդարացնել ինքզինքնին, թէ ըրին այդ բոլորը իրենց վրայ եղած ազդեցութիւններու պատճառաւ...: Այսօր նոյն ողբերգութիւնն է որ կը կրկնուի, աւելի տխուր և ձախաւեր կերպով:

Անշուշտ առանց կրակի չէ բարձրացող ծուխը, սակայն շարժառիթն ու արդիւնքը, ըսուածն ու իրականութիւնը գիրար չեն մտողջացներ: Որովհետեւ ով որ սխալէ մը կը մեկնի, չի կրնար յանգիլ ճշմարտութեան: Այլապէս պիտի չպաշտպանուէին զոյն ու վատշուէրը, մուրիկներն ու անոնց ապարարոյ պաշտպանները, Երուսաղէմ եկող խարդախ հաշուեքննիչները և տակաւին կարգ մը թերթերու ամբաստանիչները, և այս բոլորը՝ անարդար և անզգած համակերպութեամբ, արցունք չունեցող յուզարկաւորներու նման: Առայժմ մեղադրանքները ամբողջովին մասնաւորել չենք ուզեր, սակայն որքան բաղձալի պիտի ըլլար, եթէ իւրաքանչիւր մեղապարտ անդրադառնար իր արարքին և արժևորէր զայն հասարակաց չափանիշերով: Որովհետեւ ինչ որ մարդուն կրնայ ներուիլ, մարդկային չէ ապահովաբար:

Վէճը իր արտաքին ձևին մէջ, անձերով ներկայացուած կողմերու պայքար մը չէ, խճողուած մեղադրանքներու ցանկով մը, որ բռնաճիզով գոյութեան կը բերուի, իրաւունք մը շահելու նպատակով: Տագնապը արդիւնք չէ նոյնպէս եկեղեցական նուիրապետութեան դէմ ուղղուած ըմբոստութեան մը, ինչպէս փորձեցին ցոյց տալ հեղինակութիւններու օժանդակութիւնը մուրացող իմաստակները: Ոչ ալ հաշուական զեղծումներու, որոնք իբր զրդուիչ դեղահատներ չգործածուեցան, միամիտները խարխալելու համար և իմաստ մը ճարելու գոյութիւն չունեցող տապնապին, որ ամբողջապէս արուեստական է, ծրագրուած կարգ մը դաւադիրներու կողմէ: Տակաւին չենք ուզեր մակերեսել այն իրողութիւնը, թէ այս շինծու պայքարին մէջ իրարու կը բաղխին շահեր, ռիսեր և հեռահայեաց նկատումներ, որոնցմէ ոմանք տակաւին կը մնան առկախ, գտնել կարենալու իրենց արդար լուծումը վաղուան մեծ հաշուեյարդարին մէջ: Նոր հոսանք մը իր խիստավարակ ոգիով կը փորձէ փոխել իրերու դրութիւնը, նոր բարոյական մը բերելու այս շինծու պայքարին: Այդ ոգին չի ճանչնար եկեղեցական և ազգային իրաւունքներն ու սրբութիւնները, բայց կ'ուզէ օգտագործել զանոնք, որովհետեւ դժբախտաբար դէզմն ետեւ մարդ չկայ: Ոգին որուն կ'ակնարկենք և որուն դերակատարներն են սուտակասպասներ և անդիմազիծ աղջկորդիները, կը հետապնդեն նպատակ մը՝ որ խոտոր կը համեմատի կրօնական և ազգային բոլոր նուիրապետական կապերու և սկզբունքներու: Այդ ոգին է որ այսօր կը ջանայ և կը նիւթէ մեր բոլոր տրտմութիւնները, այդ ոգին է որ զողունի ներս մտաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանէն և փորձեց զործելու իր աւերը, նուիրական նախադրեալներու կարգախօսով: Չենք բացատրեր բայց զիտենք թէ ինչ կ'ըսենք:

Ժամանակէ մը ի վեր Սփիւռքէն ներս ընթացք առած տխուր ախտանշանները կը հարկադրեն մեզի խորհելու թէ մեր մէջ տկարացած է ողջմտութիւնը, որ ժողովուրդներու ինքնապահպանման ամենէն հզօր բնազդն է, իր փորձառութիւններու բիւրեղացած ապահովութիւնը: Ողջմտութիւնը որ փոխանակ տրամախօնութեան պոզոտային, ուրկէ սոփեստներն ալ կ'անցնին երբեմն, կ'ընտրէ պարագաներուն յարմարելու ճկուն իմաստութիւնը, փոխանակ շարժելու արտաքին և անձնամէտ ազդեցութիւններու ներքեւ, կամ ուրիշներուն հաճելի ըլլալու տկարամտութեամբ, առանց անդրադառնալու թէ այս կերպով կը քանդուի Եկեղեցւոյ իրաւունքներու և հասկացողութեան արդէն խարխաւած պատր:

Սակայն պէտք չէ մոռնալ թէ չարիքներէն յաճախ բարիք կը ծնի, կ'ըսէ մեր իմաստուն ժողովուրդը, որուն բովանդակ պատմութիւնը շարք մըն է եղած իր վրայ խուժող աղէտներու, իսկ կեանքը՝ գերազայն գինը չարիքը բարիքի վոխոյ իր ճիգին և իմաստութեան մեծ սկզբունքին: Ճիշդ է թէ երբեմն շատ սուղ գնած ենք այդ բարիքը, աւելին՝ անարդարութիւնները քառուած են մոխիրով և արցունքով, ազատագրելու մեր հոգին այս աշխարհի կեղերէն և որդերէն, անցնելու կեանքի սովորական երեւոյթներէն անդին: Այն ատեն միայն չարիքը կը գործէ իր աւերը, երբ չենք կրնար փոխել զայն բարիքի: Երբ պարտուած ենք մեր հոգիէն և զօհերն ենք մեր մարմնի մտածունքին, ենթակայ մեր մակադամտութեան և մեր արջառային բնազդներուն: Որքան պատշաճ է հոս կրկնել հայ մատենադրին խօսքը. «Խոզի հարսնացելոյ կոյալուր բաղանիս»:

Ժողովուրդի մը գէշ օրերը, բարոյական ինկածութեան շրջաններ են, ուր սուտը, կեղծիքը, չարաշահութիւնները, արդար նկատուած լրբութիւնը զիրար կը լրացնեն հոգիներուն խորը: Հոգեկան այս ամուլ շրջաններուն է որ սրբութիւնները կը վաճառուին և բողոքութիւնը իր թմբուկը կը գարնէ, խլացնելու արդարութեան և ճշմարտութեան ձայնը: Բանասիրութեան ասպետները, հեռացնելու համար ուշադրութիւնները իրենցմէ, շնականօրէն ուրիշներու կը վերագրեն այն բոլոր մեղքերը, որոնց գործարանն է իրենց հոգին: Այս տխուր պատկերին է որ կ'ակնարկէ Առաքելաբէր երբ կ'ըսէ. «Մարդք ապականեալք մտօք անպիտան ի հաւատս»:

Չենք ուզեր հոս խօսիլ կարգ մը որձևէզ նախանձաւորներու մասին, որոնք կրօնական և ազգային ամէն շարժումի և պայքարի կը նային ձիարշաղի գացող մարդոց մտայնութեամբ, նախապէս ընելով իրենց ընտրութիւնը: Տակաւին ուրիշներ, որոնք մեղսակիցներ կը մնան գուաղիւրներուն, պարարելով իրենց պարտուած եսը և խորտակուած արժանապատուութիւնը: Մենք նաև անոնցմէ չենք կրնար ըլլալ, որոնք կեանքի մութ ժամերուն կը փորձուին տարակուսիլ ազգի հոգիի մեծութեան վրայ: Այդպիսիներ թող դան հոս, Ս. Երկրի այս վեհավարին մէջ, տեսնելու մեր քանակով միայն փոքր ժողովուրդի կամքի և հաւատքի արդիւնքը եզրով ազգային իրաւունքները, ուր կը հանդիսադրուին մեռնիլ չզիտցող ցեղի մը առաւելութիւններն ու յաղթանակը: Մենք կուզանք այդ ժողովուրդէն, զինուորներ ենք այդ ժողովուրդի դարաւոր իրաւ-

ւունքներուն և աւանդապահը այդ սրբութեանց: Չենք վհատած երբեք, որովհետև դիմակալած ենք յաճախ մեզմէ աւելի մեծ ուժերը, հաւատալով հրաշքին՝ որ պատմութիւնն է մեր ժողովուրդին և Եկեղեցիին: Յետոյ, թող ամէն մարդ զիտնայ թէ ըստածները այս էջերուն վրայ ուրիշներ նախատելու և ինքզինքնիս արդարացնելու փորձ մը չէ, ոչ ալ գործուած չարիքները ուրիշներուն վերագրելու աժան անպարարութիւնը, այլ ըսելու միայն ճշմարտութիւնը: Մենք անոնցմէ չենք որ կրնան ազդուիլ ու մանաւանդ սաստուիլ լրագրային անմիտ և վարձուած բարբանջանքներէ: Մեզի համար կարեւորը փաստն է և մենք ունինք այդ փաստերը: Ահա թէ ինչու այնքան կարծր և խիստ են մեր արտայայտութիւնները: Գիտենք թէ մեր ըսածներուն ընթերցումը անթարգմանելի սարոտւններով պիտի լեցնէ հոգիները անոնց՝ որոնք կը կարծեն թէ կարելի է ամէն բան ըսել և ընել, և ոնպատիժ մնալ: Իրենց շինծու և փայտոյիլային հնարամտութիւնը մեզի չի հիացներ, ոչ ալ իրենց ձայներու դողդոջուն ստութիւնը՝ միամիտներու ականջին սաղմոսերգուած: Միւս կողմէն սակայն չենք կրնար հանդուրժել կեղծիքի արհեստաւորները, յարգուած խաչագողները, մարդոց միամտութիւնը շահագործող անպարարները, աներես իմաստակները, և մութին մէջ պահուող նենգութեան և սադրանքի գործակալները. աւելին՝ իրենց տողարները արեւին տակ փողոջ շտեմները, տնոնցմով գնել փորձելու այն՝ ինչ որ զբամով չի գնուիր:

Պայքարը այժմ մնացած է պնակալէզներուն, որոնք միշտ խնճոյքի աւարտումէն յետոյ կու գան խնդրելու իրենց բաժինը: Խօսք չունինք մարդկային արժանապատուութենէ զուրկ այդ խլեակներուն, որոնք կրնան պայմանաւորուիլ ինքզինքնուն հետ, այսինքն զիտակցօրէն ընդունիլ թէ կարելի է բարոյական ամէն հարց տարբեր անկիւնէ դիտել և կշռել, հաշտուելով հոգեկան արկածախնդրութեան մը հետ, և իմաստութիւն նկատել յարմարցնելու իրենց խիղճը դէպքերու ընթացքին, և պարագայապաշտութեան ամենէն դձուձ մտածումներով խեղդել պատուոյ, համոզումի և նկարագրի ամէն անկեղծութիւն:

Իբրև վերջաբան մեր այս տողերուն և յառջաբան ճերմակալէզի Տաղնապը՝ յօդուածաշարքին, կը յայտնենք թէ մենք պէտք չունինք լարծուն խրատներու: Գիտենք թէ ինչ կը զրենք և ինչու կը զրենք: Անձնականութիւն, շահագանցութիւն, կանխամտութիւն, վրիժառութիւն և տակաւին շատ մը այս կարգի ստորակ սոփեստութիւններ, մեզի չեն կրնար կեցնել արդարութեան և մաքրագործումի ճամբուն մէջ: Որքան զիտենք, Աստուած է միայն որ հաճոյք կը զգայ՝ երբ կը լսէ ճալէլուիտան ուրացիկին և մուրացիկին: Իսկ մենք որ Աստուած չենք, կ'ուզենք որ մեզի խորհուրդ տուողը առնուազն իբաւունք ունենայ: Աւելին՝ կուշտ ենք մեզի տրուած բարոյական դասերէն և անոնցմէ՝ որ մեզի դրել սորվեցնել կը փորձեն, իրենց Հիթիթական Հայերէնով:

Պարզ և յստակ են մեր խօսքերը:

(Շարունակելի՛ 5)

Ե.

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Դ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐ

ՁեկնիճՈՒՄը Միսակամ-արարողակամ խնդիրներու կարգին իբր երկ-
որդ կը դնէ «Եկեղեցական տօներ»ու պարագան:

Արդարութիւն պիտի լինէր ըսել թէ այդ խնդրոյն առթիւ իբր առաջարկ
կամ թելադրութիւն եղածները շատ աւելի նուազ խրտուցիչ են քան նախն-
թաց հատուածներուն մէջ եղածները, թէ՛ իբր սկզբունք և թէ՛ իբրև մանրա-
մասնութիւն, և յընդհանուրն ոչինչ ունին ստանաող Հայ Եկեղեցւոյ ոգւոյն:

Առաջարկներու դասաւորումէն առաջ եղած են երկու նկատողութիւն-
ներ, որոնց առաջինին համեմատ, «Հայ Եկեղեցւոյ տօներ հետզհետէ զարգա-
ցել են ընդհանուր քրիստոնէական եկեղեցու ազդեցութեամբ և հետևողութեամբ»:

Թող ներուի՛ այստեղ ճշդում մը ընել այս դատումին մասին: Մինչև
ե. դար, այսինքն մինչև Քաղկեդոնական վէճին հետևանքով Ընդհանրական Ե-
կեղեցւոյ միութեան խանգարումը, առհասարակ մէկ տօնացոյց կար, որ կը
զործածուէր ամէնքէն, այսինքն բոլոր այլալեզու պաշտամունքներուն մէջ:
Այդ է պատճառը որ Հայ, Յոյն, Լատին, և երբեմն նաև Ասորի եկեղեցիները,
որոնց այն տօները, որոնք այդ խանգարումէն առաջ հաստատուած են կը կա-
տարեն գրեթէ նոյն օրերուն մէջ, ու այդ մասին տեսնուած փոքրիկ տարբե-
րութիւնները արդիւնք են իւրաքանչիւր Եկեղեցիի սոմարական դրութեան
յետադայ փոփոխութեանց:

Այս տեսակէտով է որ բոլորովին ուղիղ չէ ըսել թէ մեր տօնացոյցը
զարգացած է միւսներուն ազդեցութեամբ և հետևողութեամբ. բայց փոքր մա-
սով մը ուղիղ է այն, որովհետև Եկեղեցիներու բաժանումէն ետքն ալ, երբ
Յոյն և Լատին Եկեղեցիներու մէջ հաստատուեցան ինչ ինչ տէրունական տօ-
ներ, ինչպէս Վերափոխումը և Այլակերպութիւնը, և այլն, Հայ Եկեղեցին չը
կրցաւ անտարբեր մնալ քրիստոնէական դաւանութեան և բարոյականի տեսա-
կէտով նշանակալից այդ տօներու պանծացման մտածումին հանդէպ, և, Եկե-
ղեցւոյ ընդհանրականութեան գործին երբեմն այնքան փարած՝ իսկ զաղափարին
մշտապէս բարեկամ, ինքն ալ իր մէջ իր կերպով նուիրագործեց անոնց հաս-
տատումը:

Ճիշդ չենք զաներ սակայն յալորդ նկատողութիւնը որ ամէնօրեայ աս-
տուածպաշտութեան կարգի առաջ զայուն պատճառ կը համարէ տօներուն զար-
գացումը. մինչ հակառակը թերևս աւելի ճշմարիտ պիտի լինէր, այսինքն աւելի
բանաւոր պիտի լինէր խորհիլ թէ՛ վաղուց ամէն օր ժամասացութեան զոյ ըլլալն
էր որ քաջալերեց կամ հնարաւորեց տօներուն բազմաթիւ չափի վրայ տարա-
ծումը և բազմակերպ կատարումը:

Բայց անցինք թէ՛ այս կրկին նկատողութեանց: որոնց վերջինը մանա-
ւանդ ծնունդ է հանապազորդ ժամասացութիւն չունենալու ձգտումին, և թէ՛
1917ի հոգկասանայ համազումարին և կեդր. Յանձնաժողովին ուղղուած զրու-

թեանց առջևէն, որոնց մէջ կրճատումին խիթքն է որ կը կոտտայ նորէն, ու նկատի առնենք երեք սկզբունքները, որոնց համեմատ կ'առաջարկուի կատարել Տէրունի և Սրբոց տօները :

Ըստ այս սկզբունքներէն առաջինն՝ պէտք է պահել այն տէրունական տօները, որոնք Փրկչի կեանքի և գործունէութեան շեշտուած մոմենտներն են պատկերացնում :

Կ'ակնարկուի՝ արդեօք միմիայն Ծնունդի կամ Յայտնութեան, Տեառն-ընդառաջի, Աւագ Եօթնեակի խորհրդական յիշատակութեանց և Զատիկի, Համբարձման, Վարդավառի տօներուն, և առհասարակ Կիրակի օրուան . . . : Ի՞նչ պիտի խորհուի այն ատեն ի մասին Հոգեզալտեան, քրիստոնէական տօներուն ամենէն նուիրականներէն այս մէկին, որ պատկուծի է Զատիկական օրերու տօնախմբական շրջանին, իբրև յիշատակութիւնը խաչով արօրադրուած Աւետարանի դաշտի պողաբերութեան և Եկեղեցւոյ ընդմիջտ հիմնաւորման : Ի՞նչ պիտի խորհուի Աստուածածնի տօներուն մասին, որոնց մէջ կը փառաւորուի ամբիժ կնոյ և բարի մօր սուրբ դէմքը, և առանց որուն Հայ Եկեղեցին շատ բան պիտի կորսնցնէր իր առաքելական, վաղնջական և ազգային Եկեղեցիի յատկանիշներէն, քանի որ Ս. Կոյսի յարգանքը, որ կը վերանայ մինչև առաքելական ժամանակներ, թէ՛ իբրև կրօնական զգացում և թէ՛ իբրև կեանքի ինչ ինչ ըմբռնումներու համար բարոյացուցիչ ազդուութիւն, այլևս արմատացած է մեր բարքերուն մէջ, սկիզբէն ծնունդ տալով կրօնական գրականութեան ուրոյն սեռի մըն ալ. և վերջապէս ի՞նչ պիտի խորհուի Խաչի տօներուն համար, որոնք Աւետարանի խորհուրդին, վիշտին և քաջութեան մտածումին ամենէն շքեղ պատկերագրումն են Եկեղեցւոյ՝ այսինքն հաւատացելոց կեանքին մէջ :

Եթէ այս երկուքին, Աստուածածնի և Խաչի տօնախմբութեանց մասին հոս պահուած լուծիւնը կանխատաժման մը հետևանք է, չենք կրնար հանդուրժել արևմտեան չենք գիտեր ի՞նչ նորադանդական հովերէ եկած այդ գաղութեանց : Կը խորհինք թէ ոչ ոք պիտի ընդունի որ Հայ Եկեղեցւոյ տօնակարգէն ջնջուին իր ամենէն մաքուր և թանկագին խճապատկերներէն մին կամ միւսը, Տիրամօր դէմքը և Խաչին նկարը, ու ժամագիրքէն պատուովն այն տողերը, որոնք կանխազոյն ժամանակներէ ի վեր ողբկոչել տուած են և ցարդ կու տան. «Վասն սուրբ Խաչի քո պատուականի և վասն Սրբունւոյ Աստուածածնի, մօր քո և կուսի . . . » :

Ի՞նչ պիտի խորհուի, չմոռնանք աւելցնել, Եկեղեցւոյ տօներու մասին, որոնք խաչին կեանքը, այսինքն քրիստոնէական զագափարին անձնաւորեալ կենդանութիւնը կը պատկերացնեն ընդհանուր մարդկութեան և մեր ազգային գոյութեան կրկնակ տեսակէտներէն դիտուած . ո՞ր սիրտը պիտի ներէր նուիրագործ հնութեան այդ զմայլելի մոզայիքներուն — ուր մէն մի կիտուածի տակ սրաի տրոփիւն մը կը բաբախէ — վրայ փորձուելիք վանտալականութեան :

Թող չըսուի թէ այդ տօները յետ-ժամանակեան հաստատումներ են, և թէ պէտք է անպատճառ նախնականին վերանալ՝ բարեկարգութեան հասնելու համար :

Ձի կրնար ըլլալ ատկէց աւելի տղայամիտ դատում, ատկէց աւելի աս-
միկ խօսք: Ուր որ կեանք կայ և աճումի օրէնք — և քրիստոնէութիւնը ամե-
նէն սքանչելի հանդիսարանն է այդ երկուքին ալ — հոն միշտ ընդլայնում կայ
և բարձրացում, իբր՝ իրողութեան, անհատը՝ ընկերութեան և գործը՝ դրութեան
վերածուելու ընդունակութեամբ: Ս. Կոյսը, Խաչը և Եկեղեցին, իբրև զգացում,
քրիստոնէութեան նախկին շրջաններուն մէջ կրնան նօսք դիժեր միայն եղած
ըլլալ հաւատքի տախտակին վրայ և հետևաբար հազիւ նշմարելի ներգործութիւն
մ'ունենցած ըլլալ. պարզ է սակայն թէ որչափ Աւետարանի հասկցողութիւնը
գարգացաւ խիղճներուն մէջ և որչափ ընդարձակեցան անկէ ծննդագործուած
կրօնքն ու կեանքը, այդ դիժերը փոխուեցան նկարներու, խօսուն ձևերու, ու-
րոնց մէջ հաւատաւոր սիրտերը կրցին կարգալ աստուածային և մտերիմ խոր-
հուրդներ: Անոնց մասին ի սկզբան եղած յիշատակութիւնները հետզհետէ փոխ-
ուեցան տօներու. այդ տօները բազմացան երբեմն, զազափարին մէկ կամ միւս
կողմը լուսաւորելու համար, երբեմն նոյն ատեն դիցարանական հին տօն մը
կափուցանելու սնօրէնութեամբ, բայց միշտ փրկութեան գործին եղանակաւոր-
ումները ներկայացնելու համար: Այսպէս, Ս. Կոյսին տօնը, որ ի սկզբան գրեթէ
կը խառնուէր Յիսուսի ծննդեան և ի Տաճարն ընծայման տօներուն, հետզհետէ
անջատուելով ծնունդ տուաւ անոր մէկէ աւելի տօնախմբումներուն. այսպէս,
խաչին մտածումը, որ նախապէս Յիսուսի խաչելութեան դէպքին մէջ կը տար-
բանար, ժամանակին հետ, այսինքն որքան քրիստոնէական կեանքը ինքնին
սկսաւ դառնալ խաչակրութիւն մը կամ համատարած խաչելութիւն, դուրս բե-
րաւ Խաչի վերացման, Գիւտին, Երևման և՛ մեր մէջ՝ ազգայնացման (վարա-
զայ Խաչ) հանդիսացումները. նոյնպէս նաև Եկեղեցւոյ իմացման համար:

Ո՞վ պիտի կրնար արգիլել իրերու և զազափարներու յառաջատուութեան
այս ընթացքը, որ ո՞րքան բանաւոր նոյնքան բնականոն է այն բոլոր մարզե-
րուն մէջ ուր կեանք կայ, ինչպէս ըսինք, և աճումի օրէնք:

Եւ յետոյ, եթէ աճումի այդ ընթացքը տարադէպ պարագայից ազդեցու-
թեան տակ՝ երբեմն տեղի տուած է պատահական անկանոնութեանց, ինչո՞ւ,
փոխանակ այդ անկանոնութիւնները զգուշութեամբ ուղղելու կերպին վրայ
մտածելու, յանկարծ՝ իբրև անհրաժեշտ սեռականէտի մը՝ յառիչ նախնականին
կեանքի մ'ը ճամբուն վրայ կը կիրարկուի այդ կերպը. ի տես ճարտարապետա-
կան շէնքանքի ամէն օր բազմապատկուած բարդութեանց, որոնք բնականոր-
ման գործը տնտեսական և յաճախ նոյնիսկ առողջապահական դժուարութիւն-
ներով կը կնճռոտեն, մարդիկ ե՞րբ օր մը խորհեցան դառնալ քարանձաւային
տուներու նախնականութեան, . . . Այ՞ն, ինչպէս ուզեցինք ակնարկել, տօներու
կնգմութեան մէջ ևս պատահած են թէև ոչ անբացատրելի բայց արդարև ան-
հարկի բազմացումներ, ինչպէս Գիւտ Տփոյ և Գիւտ Գօաւոյ յորշորշուածները,
որոնց ինչպէս նաև նմաններու մասին պիտի յայտնենք ի վերջոյ մեր տեսու-
թիւնը. քայքայ արտեղձ երբ մեր դիտողութիւնները յառաջ կը բերենք Ձեկի-
ՑՈՒՄի պրամագրութեանց առթիւ միայն, ասոք մէջ Ս. Կուսի, Խաչի և Եկե-
ղեցւոյ տօներու մասին պահուած այդ լուսութեան առթիւ չենք կրնար արգիլել
ինքզինքնիս ըսելէ թէ՛ զոչացած կտոր մը մամուլին համար չեն կտրեր ծաղը-
ժբը քերելը և մաքրելը աւելի դիւրին է և փրկաւոր:

Ընդունուած երկրորդ սկզբունքը կը տրամադրէ «պահել այն սրբոց տօները, որոնք համաքրիստոնէական կամ հայկական ընոյթ և արժէք ունին» : Գեղեցիկ և արդար նկատողութիւն ստուգիւ . և պէտք է աւելցնել անմիջապէս թէ մեր Տօնացոյցը, որ ամենամեծ մասամբ կազմուած է Եկեղեցիներու բաժանման թուականէն առաջ, այդ սկզբունքին համեմատ է արդէն յօրինուած : Մեր Տօնացոյցի սուրբերուն մեծամասնութիւնը Ընդհանրական Եկեղեցւոյ սուրբեր են . և ասիկա, հակառակ երբեմն անգիտակցօրէն յարուցուած տրտունջներուն, մեզի համար աւելի առաւելութիւն մըն է քան թերութիւն, լինելով վերլամաց նշաններէն մին մեր Եկեղեցւոյ ընդհանրական նկարագրին :

Քիչ է Ե. դարէն ետքը մեր Տօնացոյցի սուրբերուն վրայ աւելցած սուրբերուն թիւը : Այս վիճակը հետևանք է զգուշաւորութեան մը, որ հետի է անխմաստ ըլլալէ : Չենք ուզած կործնա որ ուրիշ Եկեղեցիներու և մերիսին միջև դաւանաբանական պատճառներով զոյացած խրամը աւելի խորանայ . այս պատճառաւ, եթէ չենք կրցած նորեր առնել անոնցմէ, չենք ուզած մերժել նաև արդէն առնուածները : Նոյն զգուշաւորութիւնը ունեցած ենք նոյնիսկ ազգային սուրբերու համար, որոնցմէ Ե. դարէն յետոյ առնուածները կամ արդէն այդ դարէն առաջ ապրած են և կամ յետոյ հոգևորական բացառիկ արժէք ներկայացնողներ եղած են : Այդ թուականէն յետոյ օտարներէն առնուած սուրբերուն մէջ կան այնպիսիներ, որոնց պաշտամունքը պատահաբար կամ դիպուածօրէն, զոր օրինակ՝ իրենց նշխարներէն մասունք մը Հայաստան բերուելուն կամ իրենց վարքին հայերէնի թարգմանուած լինելուն առթիւ, մուտ գործած է մեր մէջ . պարագայ՝ զոր թերևս կարելի է նկատի ունենալ Տօնացոյցի վերաքննութեան ատեն :

Վերաքննութեան այդպիսի ձեռնարկի մը միջոցին, արդար պիտի ըլլար անշուշտ նկատի ունենալ պարագան այն հայ սուրբերուն ևս, որոնց երբեմն տօնուած լինելուն մասին մատենագրական ապացոյցներ կան, բայց չենք զիտեր թէ յետոյ ի՞նչ պատճառաւ դադրած է անոնց տօնախմբումը : Քաղաքական զգուշաւորութիւններն էին արդեօք որ ստիպեցին Եկեղեցին այդպիսի վերաբերմունքի մը՝ հանդէպ անոնց յիշատակին : Որևէ ժամանակէ աւելի այժմ մանաւանդ ի վիճակի ենք մտածելու այդպիսի հաւանականութեան մը մասին, երբ մէկ կողմէ բերաւոր նահատակներու զգացումը կը լեցնէ ահա մեր սիրտը և միւս կողմէ անոնց փառաւորման մասին զգոյշ լինելու հարկը կը ճնշէ մեր խղճմտանքին վրայ :

³ Երրորդ սկզբունքը կը տրամադրէ «Համախմբումներ կատարել մարգարէից, հայրապետաց, և մի օր էլ նուիրել ամենայն սրբոց տօներին» . կանխենք ըսել թէ այդ կարգադրութիւնն ալ, որուն մէջ օր շահելու կամ խնայելու դիտումը կը քօղարկուի, հետևանք է ամէն օր ժամասացութիւն չունենալու փափաքին : Քիչցնել տօնախմբութեան առիթները, որպէսզի շաւեն ամէնօրեայ ժամասացութեան զեղումով մնացած շարաթական մէկ և երբեմն երկու օրերը . . . :

Ըստ նախնական սովորութեան, սուրբերը պէտք էր տօնել իրենց նահատակութեան կամ մահուան տարելիցին օրերը . ու մեր Տօնացոյցին մէջ մասամբ պահուած է դեռ այդ սկզբունքը : Բայց որովհետև կարելի չէր միշտ ճշդել

մէն մի սուրբի մահուան օրը, միւս կողմէ, որովհետև ատկէց կրնար տօնախմբութեանց համաբարդութիւն յառաջ գալ, ճշդիւ չգործադրուեցաւ այդ կանոնը, և յաճախ պարագայից համեմատ կարգադրուեցաւ այդ կէտը: Սովորութիւն եղաւ նաև սուրբերը տօնել ոչ միայն իրենց նահատակութեան, այլ նաև իրենց նշխարաց զիւտի կամ փոխադրութեան տարեկիցին, ինչպէս ունինք ցարդ Ս. Յովնաննու կարապետի և Ս. Լուսաւորչի և այլոց համար, ու նշանաւոր սուրբերու յիշատակը լաւագոյնս փառաւորուած ըլլալու պատեհութիւն մը նկատուեցաւ ասիկա:

Թէև սրբութեան մեծագոյն փաստը նահատակութիւնն է, բայց որովհետև եղած են բազմաթիւ սուրբեր, որոնց կեանքը և անոր զանազան կողմերը կամ դրուագները իսկապէս եղած էին անսուտ հաւաստիքներ իրենց սրբութեան, այս պատճառաւ, ըստ այդմ սովորութիւն եղաւ մէկէ աւելի անգամ տօնել այնպիսիները, մէն մի տօնախմբութեան կապիւով անոնց անձէն ըլխած կամ կեանքով արդիւնագործուած պատմական երջանիկ եղելութեան մը յիշատակը. ինչպէս Թադէոս առաքեալինը, որ առաքելական խումբին հետ և ապա իբրև առաջին լուսաւորիչ երկիցս տօնուելէ վերջ, երրորդ անգամ կը տօնուի Սանդուխտ կոյսին հետ, ի յիշատակ հայ աշխարհի լուսաւորութիւնը խորհրդաւորոյ այդ անմոռանալի դէպքին. կամ Ս. Լուսաւորչինը, որուն երեք տօները, — Մուտն ի վիրապն, Են ի վիրապէն և Գիւտ նշխարաց — հանգրուանները կը մատնանշեն քրիստոնէութեան մեր մէջ եկեղեցական կազմակերպումի գործին. կամ Ս. Գրիգորիսինը, որ Որդւոց և Թոռանց հետ անգամ մը տօնուելէ վերջ, դարձեալ կը տօնուի առանձին՝ ի յիշատակ Աղուանից երկրի հայկական քարոզութեամբ լուսաւորութեան. կամ Ս. Սահակինը և Ս. Մեսրոպինը, որոնց երկաքանչիւրը երկիցս կը տօնուին, առանձին, միասին և համախումբ, նախ՝ Սահակի յիսնամեայ հայրապետութեան, յետոյ՝ երկուքին համասիրտ գործակցութեան խորհուրդով. և յետոյ Մեսրոպի՝ իբր կազմակերպիչ ճաստուածագործ մշակութեան, յաւերժական աշակերտութեան ի զուխ, և այլն:

Տօնակատարութեան այս բոլոր կերպերէն զատ, մեր Եկեղեցին ընդունած է նաև սուրբերը տեսակաւորեալ համախմբումով տօնելու եղանակը. այսպէս, մարգարէները, առաքեալները, Հ. Բ. աշակերտները, երկոտասան վարպէս, մարգարէները, և այլն, մի առ մի և կամ զոյգ առ զոյգ տօնելէ վերջ, զանոնք կը դապեաները և այլն, մի առ մի և կամ զոյգ առ զոյգ տօնելէ վերջ, զանոնք կը տօնէ նաև խմբովին ի միասին, անձէն անշատաբար կարծես մարգարէութեան, առաքելութեան, աշակերտութեան և վարդապետութեան զազափարն ու գործը տօնած ըլլալու մտածումով, ինչ որ արդարև զեղեցիկ է և տպաւորիչ:

Արդ, փոքր ի շատէ տեսնելէ վերջ սուրբերու տօնախմբութեան մասին մեր Եկեղեցւոյ կողմէ գործադրուած զանազան կերպերը, կարոն է մտածելու թէ՛ որքան բանաւոր է և զործնական՝ այլամբօթօրէն համախումբ կերպը, զոր թէ՛ որքան մեր Տօնացոյցը, և կը կարծենք որ եթէ բոլորովին չէ ընդհանրացուցած արդէն մեր Տօնացոյցը, և կը կարծենք որ եթէ բոլորովին չէ ընդհանրացուցած զայն՝ առանց պատճառի չէ այդ: Համախմբումը կը պատշաճի ընդհանուր զազափար մը պատկերացնող տեսակաւորութեան միայն: Այդ տեսակէտով Եկեղեցւոյ կեանքին համար որոշ արժէքներ կը ներկայացնեն արդարև մարգարէից,

առաքելոց, աւետարանչոց, աշակերտաց, վարդապետաց խումբերը, որոնք
 ամիւթիւն ի բազմութեանս են իրապէս, քանի որ իւրաքանչիւրը պատկերն է
 աստուածային նախաձայնութեան, փրկչական գործակցութեան, աւետարանա-
 կան քարոզութեան և քարոզչութեան և ուղղափառ ուսուցումի կամ վարդա-
 պետութեան գաղափարներուն. բայց բոլորովին նոյնը չէ կարելի մտածել, զոր
 օրինակ, հայրապետաց, թագաւորաց, զօրովարաց, կուսանայ և այլ խումբե-
 րուն մասին, քանի որ, ինչ ալ լինի, այդ խմբաւորմանց մէջ միութենէն աւելի
 անհատական բազմացման մտածումն է որ կը շեշտուի, գործունէութեան և ար-
 դիւնաւորութեան բազմազան պէսպիսութեան մէջ առանձնաւորելով այդ խում-
 բերը կազմող մէն մի դէմքը:

Եւ յետոյ, եթէ Եկեղեցին իր ծխական և այլ մարդերուն մէջ քրիստո-
 նէական գաղափարն ու կեանքը պէտք է արտայայտէ շարժուն ու գործօն ինք-
 նաբերականութեան մը մէջ, լաւագոյն չէ՞ միթէ որ սրբոց տօնախմբումի գործը,
 փոխանակ աղիւսակաձև համաչափութեամբ բաշխուած ցուցակի մը համեմատ
 կատարուելու, կատարուի ինքնիրմէջ ոչ անպատճառ համանման յաջորդակա-
 նութեան մը ընթացքով, մերթ մարտիրոսի մը կամ մարտիրոսներու, մերթ
 թագաւորի մը, երբեմն առաքելներու, և այլն, տօներու պէսպիսուն, խմբա-
 կան և անհատական կատարմամբ: Եւ յետոյ, անհրաժեշտօրէն համախումբ
 կերպով եթէ կատարուին տօները, ի՞նչ պարտինք ընել բազմաթիւ շարական-
 ները, որոնք յօրինուած են թէ՛ սրբոց խումբերու և թէ՛ մասնաւորներուն
 համար. ինչո՞ւ լուութեան ստուերներուն մէջ նետել հոգևոր ներշնչումով յօ-
 րինուած զրական այն գեղեցկութիւնները, որոնց մէջ յաճախ մեր հաւատքին
 գանձերը կը ծածկուին: Այս ամէնը՝ որպէսզի հնար ըլլայ իրականացնել ամէն-
 օրեայ ժամասացութեան ջնջումի ծրագիրը . . . :

Ոչ, մեր խոնարհ կարծիքն է թէ բացի քանի մը աննշան փոփոխութիւն-
 ներէ, որոնց պիտի անդրադառնանք յետոյ, պէտք է անփոփոխ պահել սրբոց
 տօնակատարութեան հաստատուած կարգն ու կերպը, օտարներու վերաբեր-
 մամբ նոյնութեամբ, իսկ ազգայիններու մասին՝ քիչ մը աւելի ընդարձակելով
 Միմէոն Կաթողիկոսի կողմէ գանոնք աւելի հանդիսաւոր և աւելի ժողովրդական
 ոգևորութեամբ տօնելու համար մտածուած եղանակները, զանազան դարերու
 մէջ տօնուած և յետոյ դարբնուած և վերջին ժամանակներու մէջ ևս իրենց
 կեանքովն ու մահովը այդ պսակին ստուգապէս արժանի նկատուածները, յետ
 պարտուպատշաճին մուծելով Տօնացոյցին մէջ. այսինքն աւելցնել Տօնացոյցին
 պարունակութիւնը և ոչ թէ անպատճառ կրճատելու մարմաջէն ղլեռանիւ:

(ԱԽՈՆՆ, 1938 Մարտ)

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԿ

(Շարունակելի՝ Ծ)

ԿՐՈՆԱԿԱՆ

Գ Ա Յ Յ Ա Կ Ղ Ո Ի Յ Ի Ի Ն

Քրիստոս իր երկրաւոր կեանքի ընթացքին յաճախ շփման մէջ եկաւ մարդկային զանազան խմբաւորումներու հետ: Ան, ճեղքիներու բժիշկը, դրաւ հրաշագործ իր աջը մարդոց մեղքէն վիրաւոր ու մեղքով բեռնաւոր հոգիներուն վրայ ու բուժեց զանոնք: Կարեկցութեամբ մօտեցաւ իրենց բարոյական խաւարին հոծութեանը գիտակից և փրկութեան ճամբան որոնող մարդերուն, սիրեց մանուկներն ու մանուկի նման ամբիժ հոգի մը կրող չափահասները, ու մինչև անգամ ընչաքաղց բայց օրինապահ երիտասարդք արգիլեց Նոյնիակ ամբիժը, երբ կը ջանար պոռնկութեան յանցանքի մէջ ընքուած կնոջ աւել իր արժանի պատիժը:

Սակայն, այս բոլորով միասին, Յիսուս ամենէն խիստ կերպով ձաղկեց ու գատապարտեց կեղծաւորութեան մարմնացումը եղող դասակարգը Փարիսեցիներուն, իսկ ամենէն ծանր պատիժը սահմանեց փոքրիկները գայթակղեցնող մարդերուն — վզին երկանաքար մը կապել և ծովամոյն ընել (Ղկս. ԺԷ. 2): Ասկէ աւելի դժգոհ վախճան կա՞յ արգեօք մարդ արարածին համար:

Ինչո՞ւ այս ծանր պատիժը: Այս հարցումին պատասխանելէ առաջ, ջանաք սահմանել գոյթակղութիւնը, որ մեղմէ շատերուն համար բարեպաշտ ու միամիտ մարդոց ուղեղներուն մէջ անհաւատութեան, անաստուածութեան սերմեր ցանկու արարքէն անդին չ'անցնիր: Անկրօն ու նիւթապաշտ գաղափարներու տարածին է միայն մեղի համար մարդը գայթակղեցնող կամ ուղիղ ճամբէն մոլորեցնող անհասը:

Չինք ժխտել այս իրողութիւնը: Բայց ասիկա պատկերին մէկ երեսն է միայն: Ոչ նուազ կարևոր է նաև միւս երեսը, ուր կը կենան մարդեր, ընդհանրապէս պատասխանատու դիրքերու վրայ գտնուող — ծնողք, սուսուցիչ, կրօնաւոր —

որոնք յաճախ իրենց կենցաղով ու վարք ու բարքով լոկ, առանց նոյնիսկ քարոզչութեան ու փրօփոխմանի նպատակին, ոչ նուազ աւեր կը յառաջացնեն մանուկներու — կամ իրենց ստորագասներուն, իրենց անմիջական շրջանակին մէջ եղողներուն — հոգիներէն ներս: Աւելի պարզ խօսելով, իրեն վստահուած պարտակաւորութեան մէջ թերացող ամէն անհատ գայթակղեցնող մըն է առաւել կամ նուազ չափով, համաձայն իր դիրքին ու պաշտօնին բարձրութեան ու կարեւորութեան:

Ծնողք մը, որ իրար և զաւակներուն հանդէպ սիրով ու հանգուստօղորութեամբ յարաբերելու փոխարէն քամահրանքի և հայտնութեան կը դիմէ և Տիրոջ առնէն ու քրիստոնէական վանքաղէ հետև կը մնայ, դաստիարակ մը, որ գերին դարձած է խաղին ու խմիչքին, անփոյթ է ու անպարտաճանաչ, Եկեղեցւոյ պաշտօնեայ մը, որ դժուարութիւնը ունի հոգեւորականի վայել բարոյական բարձունքին վրայ կենալու, բոլորն ալ գայթակղեցնող անհատներ են, Աստուծմէ իրենց արուած զաւակները, իրենց խնամքին ու հոգածութեան յանձնուած աշակերտները կամ հօտը իրենց անին չար ու գէշ օրինակով մեղքի ու մոլութեան առաջնորդող:

Թէ ինչու մարդ արարածը հակամէտ է իր մեծաորներուն նկարագրէն ազդուելու և ծուռ ու սխալ ճամբու մէջ իյնալու, գիտենք բոլորու շահառակ երբեմն մեր արարքներուն արժանի հատուցումը ստանալու մասին ունեցած մեր անճկելի հուստաքին, մենք կը մոլորինք յաճախ վասնզի կը գերադասենք ներկան ապագայէն: Շատեր պիտի կրկնէին ձանթ յանկերգը, մեր ափին մէջ ունեցած վառեակը գերադասող ծառի զագաթէն մեզի նայող տառը թաշուներուն: Վատեմ թէ թէ մեղմէ շատեր պիտի տատամուէին որոշում մը յայտնելու, եթէ դրուէին ընդհուպ այս պշխարէն բաժնուելու և ըկրրահամի գողքը երթալու և քանի մը տասնեակ տարիներ ևս հոս մնալու և անորոշ ճակատագրով մեկնելու երկընտրանքին առջև, նախընտրելով երկրորդը ի վերջոյ:

ԳԵՈՐԳ Ս. ՃԻՆԵՎԻՉԵԱՆ

Ս Է Ի Ե Ի Ե Ր Կ Ի Ի Ղ

«Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է», կ'ըսէ Հին Ուխտի մեծ իմաստունը (Առակ. Ա. 7): «Սիրէ զու Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր մտքովդ ու բոլոր հոգիովդ», կը պատգամէ նոյն Սրբազան Մատենանը (Ղեա. ԺԹ. 19): Ու այս երկուքին միտտեղ ներկայութիւնը անլուծելի (լաւազոյն պարագային՝ դժուարալոյծ կամ դժուարեմբռնելի) առեղծուածի մը առջև կը դնեն յաճախ մեզ: Արդարև, ինչպէ՞ս կրնանք մէկը օրիբլ ու անկէ վախնալ նոյն աստն: Այլ խօսքով, ինչպէ՞ս հաշտեցնել սէրն ու վախը (կամ երկիւրը) իրարու հետ:

Մենք կը վախնանք ընդհանրապէս մեր թշնամիներէն, այլ խօսքով անոնցմէ՝ որոնք կրնան շարիք ու փնաս պատճառել մեզի: Իսկ ընդհակառակն, անվախօրէն կը մօտենանք մեր հարազատներուն ու մտերիմներուն, ուրիշ խօսքով բոլոր անոնց՝ որոնք կեա կապուած ենք սիրոյ զգացումով:

Փարսոսօսալ այս իրողութեան պարզաբանումը մեզ կը հարկադրէ առաջին առիթով զատորոշում մը ընել, այլ բառերով՝ օտանման մը գծել ընդմէջ վախին ու երկիւրին: Տալ իսկական ասուգաբանութիւնը երկուքին: Վախը հոմանիշ է սարսափին ու սոսկումին, ու մինչև իսկ զարհուրանքին, մինչ երկիւրը յարգախտուն վախն է, որուն յատկեր պատկառանք կայ ու ազնւածանք: Մենք կը վախնանք գիշատիչ անասուններէ ու բնութեան այգէտներէն, առանց երկնչելու անոնցմէ:

Այս ձևով միայն ըմբռնելի կը դառնայ կնոջ ուղղուած Սուրբ Գրական պատգամը. «Եւ կին երկնչիցի առնէ իւրմէն, զոր կը կարգանք Ս. Պսակի Խորհուրդին: Հարսէն սչ թէ վախ ու սոսկում (ինչ որ նուստատցուցի ըլլալով՝ խոտոր պիտի համեմտէր քրիտոնէական բարոյակաւնով պատգամուած մարդերու հաւատարութեան սկզբունքին — «Ձիք խտր. ու սչ արուի և ոչ իգի» (Գաղա. Գ. 27), այլ յարգալից կեցուածք, պատկառանք ու հնազանդութիւն է օր կը պահանջուի:

Եւ այդ զգացումը չի ժխտեր սէրը, որ շողախն է ամուսնական կեանքի գոյաւեւումն: Ընդհակառակն, կարեւոր է ըսել թէ կ'աւելցնէ ամուսնութիւնը անոր հիմնրուն: Սէրը երբ չէ խարսխուած երկիւրի — յարգանքի ու պատկառանքի — վրայ, ծանծաղ է ու մակերեսային. ամէն փշոզ կով կրնայ մեղմել անոր թափը:

«Աստուծմէ չվախցող մարդէն վախցիր, բայց վախցիր նաև անոր հաշուոյն», կ'ըսէ արաբական առածը: Առաջին եզրը մեկնութեան չի կարօտիր, քանի որ մեր շուրջը տեսադրուած բոլոր չարիքները կը ներթափանչեն անասուած՝ ուրիշ խօսքով՝ իրենց խիղճը ստատային ծախած մարդերէ: Իսկ երկրորդ եզրը անոր համար, որովհետև անասուածը ընկերութեանն առաջ ու աւելի՝ թշնամին է ի՛ր իսկ անձին, անոր մնայուն ու լաւազոյն կէսը կորսնցնելու յիմարութեան զինք առաջնորդող: Ահա թէ ինչու Տիրոջ երկիւրը գերագոյն իմաստութիւնը համարուած է մարդերէ, իսկ Տիրոջ սէրը՝ գլուխը՝ մարդը իր իսկական կոչումին — կատարելութեան — առաջնորդող պատուիրաններուն: Վասնզի ով որ Ղեւտացուց քրքէն վերեւ մեր մէջըբրած պատգամին համաձայն — որ կրկնուած է Փրկչին կողմէ՛ նոր կտակարանի մէջ (Մատթ. ԽԲ. 37) — կեանք կը վարէ, ոչ միայն բարիքի ու օրհնութեան աղբււր կը հանդիսանայ իր շրջապատին, իբրև այ համեմտով ընկերութիւնը որուն մէջ կ'ապրի ու կը գործէ, այլև չունի վախը աշխարհի չարիքներէն ու գերագոյն չարիքը նկատուող մահէն: Ի մի խօսք, կամ՝ երկնչելու ենք Տիրոջմէ (Անոր պատուիրաններուն համաձայն ապրելով մեր կեանքը) և կամ՝ վախնալու ենք աշխարհի չարիքէն ու մահէն: Այլ բտտերով, կամ՝ մեր ամբողջ էութեամբ կը սիրենք զԱստուած (և մեր նմանները) և կամ՝ մամոնան (որ խտացումն է այս աշխարհի մեղսաթաթալ վախիքներուն): Նախընտրութիւնը ձգուած է մեր կամքին: Երանի անոր որ իմաստութիւնը ունի զինք իր երջանիկ ապագային առաջնորդող ընտրութիւնը կատարելու:

ԳԵՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՉԵԱՆ

ULTIMA VERBA

Շ Ա Ր Ք

ՆՈՐ ԽՈՐՏԱԿՄԱՆ ԳԻՇԵՐՆԵՐՈՒ

Ե.

Եղիվարդն եմ այս գիշեր,
Սիրսւ է բարի, չեմ ցանկար
Ոչ մէկ մարդու ես չարիք,
Սակայն բաժինըս կ'ուզեմ
Ձեռներովն իմ պատրաստուած
Հոգեհաւէն անցեալին:
Հակառակ ֆաղցր բարիս,
Կը փափաքիմ վերջապէս,
Գինովութիւնն ռազմիկին
Երկարաւունջ ըմբոխնել:

Փրջեր է հով մը ցրտին,
Բոցերուն վրայ օրերուն,
Տուր ինձի, Տէր, ֆաջութիւն
Նուանելու չարիքն այս
Նորէն բացած իր թելեր:
Տէր բարեբար, շրնորնէ
Որ բաժակիս խորն իյնայ
Կաթիլ մը սուրբ,
Քու գինիէն՝ ոսկեփայլ:

Թեթեւցած միտս կ'անցնի
Յամբ մէզի մը մէջէն,
Հպած իրերս բոլոր
Անիրական կը թուին,
Ու մտածումս է տարտամ,
Թեւաբախում մ'անորոշ:

Արեգակ մը հիւանդկախ
 Կը հեղու լոյսն իր կպչուն,
 Օրերուն դէմ այս զառամ:
 Անպարարներ՝ շի, ազահ,
 Զուր կը ծածկեն դէմն իրենց
 Շիկնումին մէջ ամօթին,
 Բայց չեն դադրիր աղալէ
 Աղունն իրենց զազրէլի:
 Դիմակաւոր շաղփաղփներ
 Կը կարկսնեն յուսահաս
 Իրենց մաւած մաւկեակներ,
 Ու չեն տեսներ զազրաթորմ
 Բռածարանին մէջ իրենց,
 Մահացու եօթ մեղէրու
 Ոսկի իծերն սուրսուն:

Արդ կը ցաւիմ հրայրին՝
 Որ կրակի պէս մեկեց
 Տարիներս լաւագոյն,
 Երբ սիրս երկինք էր Զակի,
 Զանգակներով ալըրցուն:
 Այդ օրերուն երջանիկ
 Աւխարհի մէջ լաւն ու վատ
 Կ'ընթանային նոյն համբէն:

Հոգիիս մէջ այդ մ'ամբողջ
 Կը բարձրանայ
 Կամարին սակ երագիս.
 Նուէն կ'երթամ լեցնելու
 Կուծը արքիս սրբազան,
 Աղբիւրէն այն հիմնաւորց
 Որ չէ ցամաձ դարերու
 Երաւեսներէն տօրաւունց:

Ու կը զգամ թէ կը շողան
Ասդեր բոլոր արժիւ մէջ,
Մարմինս ածու բեղմնաւոր,
Ծաղիկներու բազմաթոյր,
Ծխացող շուրջս ու հեռուն,
Խունկի բոյրով անանուն:

Ո՞ւր են մարդերն այն բոլոր,
Բարեկամներս երէկուան:
Շատեր մեռան յուսավէրէպ
Դեղնասեմնդէն հալումաւ,
Իսկ ուրիշներ պատկեր լոկ
Որմերուն դէմ օրերուն:
Արեւն անգամ կը ցրտի,
Երբ կը հըպի ապամայ
Ներիմներու մարմարին:

Տարիները սահեցան,
Շուրերու պէս վաղանցուկ,
Ուրուականներ սրնոտի,
Ծուխերու պէս ցնդական,
Զիս այլայլել չկրցան:
Անցան անոնք քառամած
Ծաղիկներու հանգունակ,
Բայց արժիւ մէջ բողբոջ է
Անհաղելի ծաղիկն իմ,
Երազի մը պէս ամբիծ:
Զեմ մուրար ես ապաստան,
Դաւնակիցներ պայքարի,
Համբերասար ու լրոին,
Կեցած եմ արդ անխիտ
Ուժերուն դէմ չարիքին:
Եղիվարդը լոկ կրնայ

Եղիվարդը նուանել :
 Ձկայ եղբայր, բարեկամ,
 Մեր ցաւերը ամոռող,
 Այս անկայուն աշխարհի
 Հողին վրայ լարծուն,
 Ա.սոր համար ինչ էի
 Նոյն չեմ այլերս հիմա.
 Գարունս լուրք, ամառս շէկ,
 Լուսամուտէն օրերուս
 Թրուան գացին դեռ երէկ :

Եթէ նոյնիսկ գերանի
 Ըստրնոթիւնը մարդոց,
 Մուրիկներուն նողկալի,
 Որոնք գիտեն բաղխել միշտ
 Դարպասները հարուստին,
 Իրենց շողով խօսե՞նով,
 Եթէ նոյնիսկ գձուձներն
 Այդ անարի, վաճառէր,
 Երիվներէն դուրս հանեն
 Չոհուածներու օրհնեալ դին,
 Չեմ ընկնուիր,
 Մուրիկներէն այդ լայրե,
 Ու կը ծալեմ թելերս իմ,
 Ցասումնալից, բայց ժպտուն,
 Նման Անոր օր մը երբ
 Պարտէզին մէջ Չիթենեաց
 Բագուկներն իր առաւ վեր,
 Երկնքին դէմ աստղագուրկ,
 Ու ըզգաց դաւը իր դէմ
 Մարդերուն չար, անգապիդո՛:
 Սակայն անհուն երկինքէն
 Երբ շողաց կայծն իր աչիքն՝
 Ա.րցունքն իր Հօր նրալոյս,

Ըզգաց ցար մարդերուն
 Եւ գութն անհուն Աստուծոյ :
 Այդ ցան է որ ունիմ ես
 Իբեւ վերին բալասան :

Հրեւսակ լի բարութեան,
 Ծանօթ ես դուն անձկութեան,
 Խղնի խայթին,
 Հեծեծանքին, ամօթին,
 Որ ժանգոսած սուրի պէս
 Կը խոցէ սիրսն լռելեայն :

Հրեւսակ լի բարութեան,
 Ծանօթ ես դուն աներկբայ
 Արցունքներուն դառնաղի,
 Երբ հասուցուողը դժնեայ,
 Մոռցած պարսքը հասուցման,
 Կրնայ ինքզինքը ծախել
 Մամոնային անվարան,
 Հերկելու չափ վեհութիւնն
 Իր պաշտօնին սրբազան :

Աւխարհը մեր հրուանդան,
 Կը խրրէ նեւն իր թունտ,
 Եկեղեցւոյ վիրաւոր
 Կողերուն մէջ հողմակոծ,
 Որ օրերուն այս սրտում,
 Խըսիրի մը վերածուած,
 Կը սարածուի անպաշտպան,
 Անմտօրէն սոնֆացող
 Ազուաւներու ոսկերուն՝
 Քրտան դարու սնութեանց
 Մախառումէն վերջ, աւաղ :

Ա՛հ, սարածէ՛, Հայր գթած,
 Աջրդ Յարկին վրայ սուրբ,
 Որ կ'արսասուէ սրգաւոր,
 Անմխիթար մօր մը պէս:
 Գիւերին մէջ թող հնչէ
 Զարթօնքի երգը նորէն,
 Որ արթննան ոգիներն
 Նախնիներուն արսաթունդ:

Զարիները օրերուն,
 Եզերայորդ բացեր են
 Երախները իրենց ժանց:
 Յոխորսանկէն հարուստին,
 Մուրիկներուն վաճուէր,
 Կեանքն վերածուած է սուտի,
 Զրպարսութեան զագրելի,
 Որոնք կ'անցնին ամպերու
 Կռապարիս ծիծաղով:

Ժամանակն է որ մարդիկ
 Դիմակալեն չարին այս,
 Առաջնորդուած հրաւալօյս
 Ասուածային սեսիլի
 Ոսկի ասդէն մեծասանց:
 Արսասու՛մով մայրերուն
 Եւ արիւնով սուրբերուն,
 Կը գընուի լոկ հաւասքին
 Մարգարիսը անսգիս:

Պանէ, Տէր, Տունն հրաւակե՛րս,
 Ապասան փոքր հօտիդ,
 Տես, աղէճներ առած թեւ,
 Այսօր իր դէմ կը դաւեն:
 Խլեակի պէս հողմակոծ,

Կը սասանի դիր ու դար,
Մեր հաւասփի նաւը սուրբ:
Նաւաստիներ անտարբեր,
Աղէտին դէմ վերահաս,
Յուրաներու պէս ազահ,
Նստած՝ ոսկի կը համբեն:

Եկեղեցի Հայկական,
Դուն ցեղի մը դարաւոր,
Ճիգին հուժկու յիշակերտ,
Երկիններու թելին թափն
Կամարներդ կ'առնէ վեր,
Ինչպէս բոցէ փունջ մը պերն:
Կողերուդ մէջ կը սարսուայ
Ցեղին երազն ոսկեթել:

Հրաւճ մը լոկ կը փրկէ
Տէրունական սանառն մեր.
Հրաւճ անհուն, անվարան,
Որ դառնայ խօլ աղաղակ,
Զսպուած ցաւի սուրբ վրէժ,
Յորձանքներուն դիմաց թուփ,
Գիշերուան մէջ պատարագ,
Հայցորդներու պասուփին
Հանապազօր հացն օրհնեալ,
Երէկ, այսօր, յաւիտեան:

ԵՂԻՎԱՐԳ



ՉԱՅԼՏ ԿԱՐՈՒՄՆԻ ՈՒՂԵՒՈՐ ՈՒԹԻՒՆԸ

CXX

Օ՛. Սէր, բընակիչ չես դուն մեր երկրի,
Անեսա Սերովբէ, կը հաւատանք բայց —
Հաւատք՝ որուն վկայք բեկուած արեւի
Տէրերն են — թէն բնաւ ինչ չեն սեսած,
Ոչ ալ պիտի՝ սեսնեն իրենց աչնով բաց,
Զի մտքին տուածն է այս ձեռն ու նըկար
Քեզի, նաեւ ողջ երկնի բընակչաց՝
Իր քուզածին պէս՝ հոգիին անմար
Իբրեւ այցընկեր — այրուած, նզմուած, պակուած, յոգնա-
սպառ :

CXXI

Հիւանդ է միտքն՝ իր սեպհական գեղով,
Եւ կեղծ ըստեղծման ջերմին մէջ է ան :
Ո՛ւր են ձեւերն, որ հաննարին շողով
Կու տայ արձանագործն լոկ : Կրնա՞յ գեղն այն՝
Բընուծիւնը տալ : Ո՛ւր՝ պարմանութեան
Թովչանն մեր յղացին ... : Զայն իրացնելու
Մեր հասունութեան ... մեր վընասութեան՝
Ճիգին մէջ, դրախտին չհասնող՝ գրել-վրձնելու
Եւ զայն յաղթական էջով նորէն ծաղկեցնելու :

CXXIII

Սիրողն կ'մոլեգնի ... բայց դեղն զայն բուծող՝
Գառն է սոսկայի երբ կը քակէ ան :
Մաս-մաս պատմութեան մեր կուռքն զարդարող,
Եւ մենք կ'սեսնենք թ'ալ արժէք, գեղ չկան
Մտնն դուրս. իսէալ ձեռն մտքին մէջ է միայն
Որ մերթ կ'կապէ մեր Գիրն եւ մերթ կը մղէ առաջ՝
Ցանած հովերէ՛ն հնձելու բորան :
Հագիւ թ'ալ իմիայի փորձերն ըսկըսած՝
Ցամառ սիրտըն մտն մրցանակին՝ դեռ ոչինչ ըրած :

CXXIV

Մանկութենէ մենք կը բուսնինք, մինչեւ
Հիւանդ, շնչահաս, մեր ծարաւն անյագ,
Հուսկ քայքայուի մեր գոյութիւնն : Թէն

Զերդ շուր գիւթող մնայ դեռ նախկին պատահանք.
 Բայց շա՛ս ուր ... ուրեմն կրկնակ նըզովանք
 Սէր, համբաւ, սին փառք եւ ազահութիւն —
 Ողջ, ունայն, հիւանդ, իրար՝ չափ անառգ,
 Իյնող աստիւր, սարբեր, բայց էութեամբ նոյն,
 Մահն ալ՝ սեւ մուխ՝ ուր կ'անհետի բոցը լուսոյն :

CXXV

Քիչեր — ոչ ոք — են սիրածնին զսնող,
 Թէպէտ պատահմունք — կոյր հանդիպում, հզօր
 Պէտք սիրոյ ըլլան հակակրանքն վանող —
 Բայց շա՛ս չանցած՝ ետ կու գայ թունաւոր
 Անարբագրելի Չարիքը, ինչ՝ որ
 Պայմաններ՝ մըղող այն ծըռաստեղծող
 Չասուածն՝ Չարիքի, անհոգի բնոր.
 Վերջն ալ անթագուպք օգնութեան զրկող ...
 Տեսն որոնց կ'ընէ Յոյսը փոքի, իսկ փոքին կոխած հող :

CXXVII? (CXXVI սխալը գրին մէջ է)

Բայց իորհինք անվախ — բանականութեան
 Լըբումն է բնոր՝ հրաժարումն յաւէտ
 Մեր մտածման շնորհէն, ապաւինութեան
 Մեր վերջին դիրքէն — «Այս իմն է դեռ գեք»,
 Ծնունդէն՝ երկնային մեր շնորհն եւեք,
 Կապուած, չարչարուած մէջ խուցի մ' բանսին,
 Սնուած մութին մէջ, նիւզն, որ լուսաւէտ
 Չըլլայ թէ շողայ անպատահան մտքին
 Եւ ներխուժէ հոն, զի խելք, ժամանակ բոյժ եւ կոյր աչքին :

CXXVIII

Կամարք իրար վշայ, գոգցես Հոռոմ - քաղաք,
 Հաւանելով ողջ ռազմաւարքն ցեղին,
 Յոյց է դրեր զանոնք նոյն զմբէթին սակ,
 Քոլլոգիտման անդ, սակն լուսնի շողին
 Զերդ ջահին բնական (լոյսով կ'ողողուի)
 Զ՝ասուածային է՝ ինչ հոն կը հոսի,
 Որ քննուած թ'եւ, դեռ հանք է մտածողին,
 Եւ կապոյտ ու խոր երազ մտուքի ...
 Իսպախական ցայգերանգներ՝ որոնք կը խօսին :

CXXIX

Քեզ՝ խորհրդաւոր երկնի մասին,

Որ կը ծածանի եւ կու սայ ըսուեր՝
 Հրաւարի ու լայն այդ փառքի յուրին.
 Երկրի բաներուն է ոգեզգալ տուիլ
 Ու ժամանակն է քիչ մ'անոծք պլլեր,
 Կոտրեր՝ օգնութեան պարզած իր մանգաղն:
 Ոյժ կայ մոգական բերդին մէջ աւեր,
 Իրուն պալասն այս ժամուս անյապաղ
 Պիտ' յանձնէ պերճանքն, սպասէ որ դարերն ըլլան օծիտ չհնաղ:

CXXX

Մեռելները գեղեցկացնող դուն ժամանակ,
 Դուն աւերակներն զարդարող, սփոփող
 Սիրսն արնահոս եւ զայն բուժող միակ,
 Ժամանակ, մեր դիւր դատումներն նրբող,
 Միակ իմաստաւէր՝ նիւրն ու սէրն փորձող,
 Քեզմէ զաս սոփեստ ողջ. դուն խնայասէր,
 Կ'ուսանաս թէեւ՝ բայց չես վրնասող,
 Ժամանակ վրիժառու, կ'ուղեմ ձեռքերս վեր,
 Աչքերս ու սիրս ու կը բաղձամ քեզմէ նրւեր,

CXXXI

Միջեւ աւերածիդ այդ մատունքին
 Եւ այս սահարէն Աստուծմէ լրբուած,
 Մէջն ընծաներու պերն՝ տե՛ս աւերն եմ,
 Տարիներով քիչ, բայց ցաւով լրցուած —
 Եթէ դուն գոռոզ ըլլալս ես տեսած,
 Մի՛ լսեր զիս երբեք, իսկ եթէ հանդարտ
 Կրած եմ ցաւս հրպարտ, յիսերու դիմաց
 Ու չեմ ընկերուած, ուրեմն թող երկաթն
 Այս՝ զուր կըրած չըլլայ հոգիս — Զը սրգան անդ:

CXXXII

Դուն, մեծդ Նեմեսիս, որ բնաւ կեփոն դեռ,
 Մարդոց իրաւանց, անտես չես թողած,
 Հոս՝ ուր նախնիք քեզ պատիս են ըրեր,
 Դուն կատարիներն վիհէն դուրս բերած,
 Որիտէսի տուրջ ռոնալ ես տրած,
 Այն անբընական հասուցման համար . . .
 (Երնէ՛կ թ'օտար ձեռք մ'ըլլար հասուցած):
 Արդ, քեզ կը կանչեմ, փոքրն մահուան ա՛լ
 Թօթուէ: Լսէ սրբիս — Արթընցի՛ր, պիտի ելլես անպատանառ:

Քրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼՈՐԵ ՊԱՅՐԸՆ

(Շարունակելի)

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Չեմ երգեր ես բնութիւն, արեւ, աստղեր ու լուսին,
Անիրական, անկենդան մտորումներ ցած ու սին.
Քայլերս ամուր են կառչած սրտին վրայ մայր երկրին,
Ու խոհերս չունին մտքի ծոցը կապոյտ եթերին:

Կ'երգեմ միտքը մարդկային՝ հանճարափայլ ու ներհուն,
Քերոզ՝ կապոյտն երկնին, խորաչափող՝ վիհն ծովուն.
Կ'երգեմ ես սիրքը մարդուն՝ սիրոյ ովկիան լայնահուն,
Ճռուողիւնը մանուկին, ժպիտը լոյս՝ մայրերուն:

Եթէ կ'ուզես դուն երգել, հեզ նիւթ երբեք չի պակսիր,
Տրեզերն է անսահման, խոհերդ՝ անթիւ ու անծիր.
Բայց թէ կ'ուզես խորանալ, պեղել սիրքը իրերուն,
Ինֆինիտիդէն հանապազ հաս ու անկեղծ եղիր դուն:

Հազար ձայնով ֆերթողներ երգած են հեզ, Հայրենիք,
Անոնց վրայ ես ալ թող դնեմ իմ դրոշմն ու կնիք.
Հազար ձայնով, հազար հեղ երգած են սէրը կեանքին,
Աւելնայ ձայնըս ալ թող այդ բազմաճախ համերգին:

Նման ըլլայ կեանքը իմ գուցէ գաւաթ մը չուրի,
Ուր նետուած օփ մը բախարհ դեռ կը մնայ յատակին.
Մեծ մասն արդէն ըմպեցի, անոյ՛ց համը բայց չառի,
Շախարհ վերջին օրերուս գոնէ հպէր իմ հիմքին:

1985

Գ. ՀԱՐՏԱՐ

ԲՆՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ Ա Ն Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

1. — Համաբարբառ. — Բազմավէպի մէջ կը կարդանք (1983, էջ 259). «Yarutiwn (Տ. Տ. Մկրտչի Ա. Ամեն. Տ. Յարսթիւն, Տ. Մաթէոս). Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Տպ. Սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ, 1895». — Համաբարբառը պատրաստողն է Թադէոս Վրդ. Աստուածատուրեան, Արապկեցի:

2. — Ամեյայնուսեք. — Նոյն հատորին մէջ (էջ 279) կը տեսնենք «amenaynustek» և «amenaynurek» բառերը: Ասոնք բարդ բառեր չեն՝ այլ պէտք է որ զատուտ կարդացուին՝ ամենայն սևտեք, և ամենայն ուրեք:

3. — Ամիս. — Նոյն էջին վրայ դարձեալ կը կարդանք. «The initial a of Arm. amis presents insurmountable problems». Կարելի էր նկատի ունենալ նման երեւոյթով կարգ մը բառեր, ինչպէս, Ագուաւ, Անուն, Ասող, Ասամն, որոնք հայերէնի մէջ ունին ա սկզբնատուր, որ կը պակսի ցեղակից լեզուներուն մէջ առհասարակ: Նշելի են նաև յունարէն ծոյւս (անուն), ձտիր (ասաղ) և ծծան, ձծսն (ատամն) բառերը, որոնք ձայնաւոր տառ մը ունին առաջին բաղաձայնէն առաջ:

4. — Ան. — Նոյն հատորին մէջ կը կարդանք (էջ 299). «Ան (arn) «male lamb» (arin) . . . Derivatives include *arnabar* «manly, vigorously», *arnakin* «married woman», *arnakoy*s «betrothed», *arnamoli* «Sodomite», *arnanos* «men's room», *arnaci* «manly», *arnaci andamk* «genitals». — Վերոգրեալ բոլոր բառերը՝ առնաբար, առնակին, ևայլն, անանցուած են այր բառին սեռական ճշդութեն (անն):

5. — Առոզանեմ. — Նոյն հատորին մէջ

կը տեսնենք (էջ 301), «Առոզանեմ, to sprinkle, to wet, to pronounce carefully . . . Առոզանութիւն, prosody, pronunciation». — Առոզանեմ բայը երկու իմաստ ունի և երկու տարբեր արմատներ. մին առոզ, որոզ, սոռոզանել (ջրել), սոռոզում, միւսը առոզ, առ ոզ, որել (ասել), առոզանութիւն: Հետեւաբար հարկ է իբրամէ զատել երկու տարբեր արմատներէ անանցուած համանման բայց այլիմաստ բառերը:

6. — Արզն. — Նոյն հատորին մէջ կը կարդանք (էջ 315-6), յոնկարծօրէն ձիւնն Եցամաք (-) արջն լինէր առաջի նորա . . . «suddenly in front of him the snow became utterly black». — Փաւստոսի այդ տողը (Գ. Ժդ) աւելի ճիշդ ձևով կը թարգմանուի, suddenly in front of him the snow became black ground: Կ'արժէ դիտել նաև որ բարդութեանց մէջ արզն կը գտնուի բառերուն սկիզբը:

7. — Զընդունայնկարծ կուրծիսն. — Բաղաձայնական Արարչութեան գրքին (Երևան, 1984) մէջ, էջ 326, ծանօթութիւն 17, կը կարդանք. «Զեռագրերի զընդունայն կուրծիս (նաև՝ զընդունայն, զընդունայնակարծ) պատշաճ նկատեցինք ընթերցել զընդունայնկարծ (= սնուպարծ, սնուփառական), թէև առ այդ չունենք գրչական վկայութիւն: Սակայն, թուում է, այս դէպքում գործ ունենք պ - կ շփոթի հետ, որի պատճառով առաջացել է անհասկանալի բառաբարդում և անհարկի կրկնութիւն (զընդունայնակարծ կարծիսն)»:

Կ'արժէ դիտել սակայն որ զընդունայնակարծ կարծիսն (էջ 49) ընթերցուածը կը պարտապանուի թարգմանչին կողմէ կիրարկուած նմանակերպ ստեղծեանց զօրաւոր ջոկատով մը, այսպէս. — զորդաբուղիս ըլխումն (էջ 107), մեղմագնաց գնացիւքն (190), առանձնազորք գործոցն (263), մեծազաւր դաւրութեամբ (41, 42), մեծազաւր դաւրութեանն (116), անզաւր դաւրութեամբ (109), միախառն խառնուածովք (137, 222), ամաքախառն խառնուածովք (156, 222), քաղցրախառն խառնուած (196, 198), երազածադ ծա-

գումն (54), յանկարծածին ծննդեամբք (221), ջրածին ծնունդք (222), ինքնակամ կամաւք (5), ծնկակապ կապովքն (135), այլակերպ կերպարանաւք (259), հասարակակիւն կշռոց (172), կարաձմեռն ձմեռայնոյ (298), երկայնատարած տարածիւք

(54), ամենատես տեսչութեամբն (163),

8. - Ուղղելիք. - Աւելորդ չէ թերեւս մատնանշել նաև հետևեալները, առաջարկելով ընթերցման քանի՜ մը ճշգումներ, ոչսպէս.

- էջ 3, տող 19. - մարթիցէ - մարթ իցէ
- » 68, » 8. - մարթէր - մարթ էր
- » 103, » 14. - գերագընաց - գերագաղնաց
- » 105, » 14. - խաղացեալք - խաղաղացեալք
- » 156, » 14. - գիտակաւ - գտակաւ
- » 160, » 17. - մեծագաւրն - մեծագաւրին
- » 174, » 4. - մարթիցէ - մարթ իցէ
- » 195, » 10. - արդար - արդարագինաց
- » 212, » 11. - լուկ - լսել
- » 263, » 1. - արժանուոր - արժանաւորս
- » 275, » 11. - դադարեցուք - դադարեցուցուք
- » 280, » 7. - մինչև - մինչևև
- » 286, » 3. - ուրախարար - ուրախ արար:

9. - Փիլիսոփայութիւն Կոնցիլի - 1984 թուին Ստանպուլ տպուած Յովհաննէտ Պատրիարք կոլոտ գրքին մէջ (էջ 294) կը կարդանք. «Պողարեան Սրբազան՝ թէև սոյն թարգմանութեան ալ կոլոտ Պատրիարքի յունձնարարութեամբ կատարուելիք նշած է, սակայն իր արձանագրած՝ և յայտնի միակ օրինակը եղող Արմաշու թիւ 64 ձեռագրին մէջ, այսպիսի յիշատակութիւն մը գոյութիւն չունին»:

Կուտաինի փիլիսոփայութեան թարգմանութիւնը, կատարուած Խարբերոցի Ղուկաս վարդապետի կողմէ, ծանօթ է քանի՜ մը ձեռագիրներով, որոնցմէ Արմաշի թիւ 64 ձեռագրին գրիչը և ստացողը համարուած է Ղուկաս վրդ. Խարբերոցին: Այնտեղ պակասող տեղեկութիւնը

կը գտնուի Ս. Յակոբեանց թիւ 654 ձեռագրին մէջ, գրուած 1736 ին, որուն յիշատակարանն կ'առնենք հետևեալ տողերը:

«... աւարտեցաւ թարգմանութիւն սորին ի լատինական բարբառէ ի հայ լեզու, որ կոչի գիրք փիլիսոփայութեան ... արդեամբ գոյիւք, օժանդակութեամբ Յօաննիսի Աստուածարանութեան վարդապետի, և որչի և պանծալի եպիսկոպոս վենալուսար Պատրիարքի կոստանդինուպօլսոյ ... ձեռամբ անարժան Ղուկաս վարդապետի Խարբերթացոյ ... ի կոստանդինուպօլիս, թուին 1736, յունիսի մատոյ» (Տուցակ 2եռ. Ս. Յակոբեանց, Գ. Հատոր, 1968, էջ 79-80):

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

ՀԻՆ ՅՈՒՂԵՐ

ՆԱՄԱԿԱՆԻ Կ ՊՈԼՍՈՅ Տ. ԶԱԻԷՆ ՊԱՏՐԻԱՐԳԻ

ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Համար ...

Կոստանդնուպոլիս, Օգոս, 25/7 Սեպտ., 1915

Գերաշնորհ
Տ. Ղևոնդ Եպո. Դուրբան
Առաջնորդ Պուլիարահայոց

Ի Ֆիլիպպե

Գեր. Եղբայր,

Օգոստոս 2 թուականաւ նամակս անշուշտ ստացած էք: Եթէ այդ մտոն գրած էք ինձի, չեմ ստացած, որովհետեւ արտասահմանէն եկած միայն թուրքերէն նամակները կը յանձնուին այժմ մեզի: Անկէ ի վեր ո՛չ մի մխիթարական և ապահովիչ լուր ունիմ տալիք, ընդհակառակն, եկած լուրերը լիովին կը հաստատեն նախորդ նամակիս պարունակութիւնը:

Հալէպէն վատահելի աղբիւրէ կը գրուի Յուլիս 19 թուականաւ. Ե... Տիգրանակերտ զացողներէն լուր չկայ դժոխք գացողներու պէս: (Զոհրապի և Վարդգէսի կ'ակնարկուի, որոնց մեռած կամ սպաննուած ըլլալը կը հաստատուի կառավարական և իթթիհատական աղբիւրէ): Այնթապի և Քիլիսի գաղթին ալ ազդարարութեցաւ և այս գիշեր 51 ընտանիք Այնթապէն հասան: Այս կրկին քաղաքացի հայ բնակչութիւնը Դամասկոսի Հաւրան քաւառը կը տեղափոխուի (սոյն քաւառին բնակչութիւնը կիսավայրենի Արաբներէ և Տիւրքիներէ (Druze)՝ կը բաղկանայ):

Ուրֆայէն ալ, թերեւ Տիգրանակերտցի, ութ հարիւր հոգի հասնելու վրայ են: Քիլիէն, Պարբերդէն ևն. բերուածները Բաս-իւլ-Այնէն ուղղակի Տէր-Զօր կը զըրկըւին, հիւանդութիւնը համաճարակ է, երկիցս դեղ և նպաստ զրկուեցաւ (այս մասին գրած է եղբր նախորդ նամակով մը որ մեզ չէ հասած), սակայն կաթիլ մը ուժ կրանէն, 20,000էն աւելի են այդ քաւառի գաղթականք, Հալէպի մէջ համախառնուած են աւելի քան 15,000 և օր ըստ օրէ նեղելի պէս կը հասնին:

Անթուրիւրը հիւանդութեան չափ կոտորած կ'ընէ, քայիմար Հալէպի մէջ քրեթէ կանոնաւորապէս կը սրուի (կառավարութեան կողմէ միակ չնչին նպաստը մտրոջը գաղթականութեան), բայց դուրսերը հաց կ'աղաղակեն: Կա'մ Քրիստոսի հրաշտգործ գորութիւնը և կամ թագաւորական գանձ պէտք է որ կէս միլիոն կիլիկեցիք, թերեւ նոյնչափ կամ աւելի՝ արեւելեան քաւառներէն գալիքները կարողանան կերակրուիլ Սիւրիոյ անապատներուն մէջ:

Թողունք Ամերիկայի և Եւրոպայի մարդասէրները, ի՞նչ կ'ընեն Յարաբնակ (Յարական Ռուսիոյ է ակնարկութիւնը — Մ. Ս.), Եգիպտոսեան և Ամերիկաբնակ Հայերը: Ժամանակ է որ գաղթականաց հոսանքին պէս նպաստի հոսանքներ կազմուին: Աշխարհ տեսած չէ և չպիտի տեսնայ այսքան արևալիք, այսքան թշուառութիւն և կարտուրութիւն: Երուսաղէմի աւերը (կ'ակնարկուի 70 թուականին, Տորոսի կողմէ Սուրբ Քաղաքին աւերման — Մ. Ս.) քաղաւորութիւն է Հայութեան ակերանաց բաղդատմամբ: Կոտորած քաղաքներէն քաղաքները կը կոտորուին: Կոտորուածներու անհամար առեւանգութիւնք, գեղատես կանանց, հարսներու և կոյսերու վաճառում, մինչև անգամ երեք մէճէտիէի, չի համարուիր և չի բացատրուիր:

... Ո՛ւր են խաչի ըլկերութիւնները, խաչին զոհուող ցեղի մը եթէ ձեռք չերկնցնեն, ինչու խաչին անունը կ'աբաբաւորեն, վիրաւօր կը փնտռեն: Նիւթապէս, բարոյապէս, կրօնապէս և մասաւորապէս վիրաւոր է հայ ժողովուրդը. Դրամ հասուցէ... Անշուշտ բնութիւնը, քարերն ու ապառաժները կու լան, որտեղ

թող լան, ըլլան օտար, ըլլան ընտանի, ի՞նչ պիտի ըլլան Աստուծոյ ասեաները, ի՞նչ պիտի ըլլան վանքերն ու մենաստանները, ի՞նչ պիտի ըլլան եկեղեցագոտական կալուածները ևն. ևն. ... խորհուրդ տուէք, մինակ եմ, խելք չմնաց գլուխս, արտասուք չմնաց աչքերուս մէջ, զգացում չմնաց սրբոյ մէջ: Զօրս կողմն, գիշեր և ցերեկ մերկութիւն, անօթութենէ նուազում, լաց ու վայնասուն ...:

... Երէկ վաղիկն անդեկացանք որ Կիլիկիոյ ոչ մէկ քաղաքի և գիւղի մէջ ճանամերձ Հայ մը անգամ չպիտի ձգուի. ի՞նչ անսահման պատիժ, Ասանա, Տարսան, Մերսին ալ պիտի պարպուին և արդէն Տարսոնէն 40 տունի չափ հասան Օսմանիէ: ... Քիլիսցիներէն բուական ընտանիք իսլամութիւնը ընդունելու առաջարկ ըրած են տեղական կառավարութեանը:

Իսկ Յուլիոս 28 թուով կը գրուի նոյն աղբիւրէ. «... Ամբողջ ազգը բնաջընջուելու վրայ է, որբանոց չմնաց, Տէօրթեօլի որբանոցը կառավարական պէտքերուն յատկացուած է ու որբերը ցրուած, Հաճընիւր վաղուց փակուած է, Հասան Պէլիլիինը՝ մասամբ: Առայժմ կայ Մարաշինը՝ 100 երկսեռ որբերով, բայց այն ալ պիտի փակուի, քանի որ Մարաշի հոյներն ալ պիտի ցրուին և արդէն ազգարարուած է: ... Այնթապի և Քիլիսի քաղթումը սկսած է, Այնթապէն ելած առաջին երկու կարաւանները բոլորովին կողոպտուած էին, մանաւանդ երկրորդը, որ յարձակման ենթարկուած էր, մէկ սպաննուած և տասներկու վիրաւոր ունէր. տեղական կառավարութեան գիմուսները եղան, պէտք եղած կարգադրութեանց շնորհիւ երրորդ կարաւանը թէև հանգիստ և ապահով հասած էր Հալէպ, սակայն Քիլիսցիներուն պէտքուրս չհաննեցին, ուղղակի տարին Դամասկոսի նահանգը և այսուհետև զալիքներն ալ, ըլլան Ատանայէն, Տարսոնէն և Մերսինէն, Հալէպ պիտի հանուին: Հալէպի մէջ համախմբուած գաղթականաց օէվքիսթի ալ շատ խտուութեամբ սկսած կատարուելի: Կ'ըսուի որ խիստ հրամաններ տրուած են որ տասներկինգ օրէն Հալէպի մէջ գաղթական չմնայ: Իօքէնտէրուն և Պէլլան հանուեցան ...: Եթէ միայն Կիլիկիացոց գաղթումն ըլլար, 400,000 էն աւելի պիտի ըլլային թշուառութեան մասնուած Հայերու թիւը, բայց արևելեան նահանգներու հազարաւոր այրիներէ և երկսեռ մանկաբոններէ զատ թոմարգայէն 200 էն աւելի այր մարդիկ, Եոզղատի Պէլլիերէն գիւղէն քահանայով 52 հոգի, ետեէն ալ գալիքներ կան, եկան Հալէպ. ճանապարհին աճէնքն ալ կողոպտուած են, հետեւաբար աճէնքն ալ անօթի են, և կառավարութիւնը այս կարգի տարազրկուց, իբրև փնտասկար անձանց, քսյլն չի տար, տեղական ազգային յանձնաժողովը օրական 5-6 (մէկ խանթար 120 օխա) հաց կը բաշխէ, բայց ընդհանուր անօթութիւնը չի կրնար փոքր ի շատէ մեղմացնելը: Ինչպէս նախորդներով, նոյնպէս ներկայիս կը կրկնեմ, ազգային առավջն առնել անկարելի է: Դիմում, աղաչանք, լաց ու ողբ ոչ միայն անգոր են, նաև ծողբ ու ծանակ ու ծիծաղ կը պատճառուեն: Իրայն աշխուտեօ ենք ողջ մնացողները ապրեցնելու: Հազարաւոր մերկեց ու քոպիկներ կան, ներկայիս եկած այրիներու ռանսմանները անգամ կողոպտուած էին, աճէնքն ալ մաշուած, վիրաւորուած և ուռած սաքերով հասան, դեղ ու դարձման տարուեցաւ, համաճարակ հիւանդութիւն ալ կայ Բաա-իւլ-Այնէն Տէր-Զօր փոխադրուողներու մէջ: Օրական մահերու թիւը քսանէն աւելի է: Անսահման զուճարաներու պէտք կայ հացի, զգեստի, դեղի, բժիշկի և այլնու հովիւներու: Եթէ պատկերներ քուճարներ կան, ի՞նչ անուսով ալ ըլլան, պէտք է այս նպատակին յատկաօք ջրնել: ... Ուրֆայի համար ալ արիւննա լուրեր սկսան հասնել: առաջին անգամ 42 երեկներ, որոց մէջ պատուելիներ և քարազիկներ, նաև առաջնորդը նահապառկած են: ... անկէ վերջը 17 հոգիի համար ալ լուռեցաւ: Տխարպէքիքի սպանդանօքը անկառ ծուլիլի: Կը մօտենայ Հալէպի սահմաններուն, աղօթքները սպանեցան, սըրը անկառ հայեցան, շրթունքները՝ երթացան, լսող, հասկցող չկայ ոչ յերկրի և ոչ տեղը Կայեցան, շրթունքները՝ երթացան, լսող, հասկցող չկայ ոչ յերկրի և ոչ տեղը Կայեցան, Գրամ. հասուցէք: Տէր-Զօրի ասանեով հազարաւոր հայեր անօթութենէ և հիւանդութենէ կը շարքուին: ... Ե. Գ. Այս բազէիս սողող տեղեկութիւն տրուած է:

թէ Մարաշէն 15-45 տարեկան բուրբ այրերը Այնթապ զրկած են դէպի Տէր-Չօր փոխադրելու համար: Կը վախճուի որ ասոնց կեանքը վտանգի ենթարկուի: Երէկ երեկոյ ալ Սըվադի և Կարնոյ շրջակայքը գանձուող զիւղերէն 2000 ի շափ այրի կի- ներ և արբ տղաքներ հասան հոս: Տղայոց ասորիքը 11ը չ'անցնիր, ճանապարհին առևանգուած աղջիկներ ու տղաքներ ալ կան: ասոնց ապրելուն հնարաւորութիւն և յոյս չկայ, անհրաժեշտ գարմանի կը կարօտին: Ասոնք ամէնքն ալ դէպի Արաբիոյ անապատները պիտի զրկուին:

Սամոնցի ճամբորդ մը հետեւեալը պատմեց մեզի անձամբ. «Բնիկ Սամոնցի եմ և Չարշապա դիւնուորական ծառայութիւնս կը կատարէի. հոն լսեցինք թէ ամե- նուրեք Հայերը տեղահան կ'ըլլային և ճամբուն վրայ զոհ կ'երթային չէթէներուն յարձակմանց և աղջիկներն ու կիները կ'առևանգուէին և կը լլկուէին: Չարշապա- ցիք քարսափած որոշեցին իսլամանալ առժամաբար: Կառավարութիւնը նախ ընդու- նեց և պաշտօնական գործողութիւնք կատարուեցան, բայց յետոյ ամէնքն ալ տեղա- հան ըլլալով դէպի Մուսուլ քաղաքն Գուլիսի սկիզբը: Ես Սամոնս փախայ ընտա- նիքիս քով: Հոն հրամայուեցաւ Հայոց վտարումը: Տեղացի երեւելիներէն 120 ընտա- նիքի շափ իսլամութեան դիմեց, սակայն չընդունուեցաւ: Առաջնորդ Համադապ վրդ. իսլամացումի այս սիտումը տեսնելով յայտարարեց. «Ով որ քրիստոնէս մնալ կ'ուզէ թող ինծի հետեւի», և առաջին առիթով, ինքը, Չ քահանայ և 400 տուն մեկնեցան դէպի Մուսուլ: Վերջին խումբը Գուլիս 7ին մեկնեցաւ, որուն մէջ կը գտնուէի ես ալ: Ճամբուն թշուառութիւնն ու տառապանքը աննկարագրելի են: ա- ռաջին օրերուն իսկ ծերեր և գէրեր ճամբուն վրայ մնացին. մայրեր իրենց մանկիկ- ները լքեցին: Ոստիկաններու մտրակը շատերու մահուան պատճառ եղաւ: Ութ օրէն հասանք Ամասիա, ուր ոչ մէկ հայու հանդիպեցանք: Գանի մը իսլամացած հայ ըն- տանիքներ թէև ժամանակ մը մնացած են, սակայն յետոյ, պատճառ անհիշ հրդե- հին պատճառ նկատուելով, անոնք ալ վտարուած են: Ժողովուրդին 100ին 30ը ար- դէն փճացած էր երբ հասանք Եւգոկիա. հոն ոչ մէկ հայ մնացած էր, ո՛չ ալ Սե- բաստիա: Իսլամի անցագիր մը ձեռք ձգելով, Սեբաստիայէն ճամբորդեցի դէպ Գօ- լիս զին. սպայի մը և Երզնկայի կողմերէն եկած Գասըի մը հետ: Գասըն հետեւեալը պատմեց. «Երզնկայի կողմերը Հայոց դէմ գործուած արբքները ոչ Գուրանը կ'ըն- դունի և ոչ ալ Շէրիաթը. Երզնկայի կառավարիչը՝ Սէմուել Գէյ, Հայերը կողպու- տելով 50,000 լիբայի տէր եղաւ և հիմա ալ ի վարձ իր գործած վայրագութեանց կուտակալ կարգուեցաւ Գասթէմուլիի: Սրտի մարմնքուսով կը պատմէր թէ ինչպէս Երզնկայի և շրջականերուն 30,000է աւելի Հայերը բնաջինջ եղան. քաղաքէն կէս ժամ հեռու, նոյնիսկ կիներ և մանուկներ սղջ սղջ թաղուեցան. եփրատ զետը հա- րիւրաւոր կիներ և այրեր նետուեցան: Հաղարաւոր այր մարդիկ սպանուեցան, կիներ և աղջիկներ առևանգուեցան և թանարարուեցան, իսկ մանուկներ թուրքերուն քանուեցան: Երկինքի վրէժնեղբուրութիւնն ու զ կամ կանուխ պիտի հասնի մեզի, կ'ըսէր:

Իսկ թուրք սպան պատմեց. «Շար Գըշլան կեզրունն է Սև Մովի եզերքներէն և Սեբաստիոյ նահանգէն գնացող բուրբ գաղթականներուն. գաղթականները մինչև հոն կրնան ապահով հասնիլ, բայց հոն զարհուրելի վայրագութիւններ տեղի կ'ունե- նան: Մինչև 10-11 տարեկան մանուկները ամբողջովին կ'առևուին անոնցմէ և իս- լամներուն կը բաժնուին, նոյնպէս գեղեցիկ կիներն ու չափահաս աղջիկները: Եւ սպա յորեք. Հոն ակնուցաւոր Գոյմագամ մը կայ, ամէն երեկոյ զեղանի հայ աղջիկ- ներէն 2-3 հարբ իր տունը կը տանի և ժամտարմա Գոմանուանի և ուրիշ կառու վարեկան պաշտօնեաներու: հետ կը զուարճանայ. երկբորք օրը այդ անպատուած աղջիկները իրենց ծնողաց կը յանձնէ: Հայերէն եղած կողպուտի մասին յայդ պաշտ- օնէից մէջ զե՛հ նագեղով: խնդիրը կուտակուի: հարցած է և Գոյմագամը այլքը տեղափոխուած է այժմ:»

ուրբ գաւաիններն ու ամուսինները ուզած են: Երկու-երեք տը ի վեր հայ գինուոր-
ներ գէպ պէզ կողմը կը զրկուին, հաւանաբար իրենց ընտանեաց միացնելու համար:

Ամսոյս սկիզբը սոսկալի ջարդ մը տեղի ունեցած է էնկիւրիւի մէջ: Նախ
Հայոց այր մարդիկը հաւաքելով ճամբայ հանուած են և ջարդուած ամբողջովին,
իրը 500 մարդ: այնուհետև քաղաքին մէջ նախճիրը սկսած է, որուն զոհ գացած են,
կը հաւաստուի, աւելի քան 5000 հոգի, այր, կին, մանուկ են: Սպանուած են 17
երկաթուղւոյ պաշտօնեայ, 10 քահանայ Հայ կաթողիկոս, անոնց եպիսկոպոսը, մեր
առաջնորդական փոխանորդ Թէոփորոս վրդ-ը, քահանաները են: Մինչև իսկ 25
հոգի ալ յոյներէ: Յայտնի է թէ իրը Հայ Եկեղեցւոյ զաւակ հազիւ 4-500 տուն կը
գտնուի հոն, մինչ Հայ կաթողիկէները 2000 տունէ աւելի են:

Պոլսէն Այաշ և Չանղրի աքօթրեալներէն մեծագոյն մասը էնկիւրիւ բերուած
էին, այսօր ալ մէկ լուր կայ անոնցմէ, ոչ ալ Այաշ կամ Չանղրի մնացողներէն, կը
վախցուի թէ անոնք ալ ջարդի զոհ գացած ըլլան: Արդէն ընդհ. պահանջութեան
տնօրէնին մէկ ազգականը սա խօսքը ըսած է. «Հայերը ցոյցեր կ'ընեն Ռուսուք,
Սօֆիա և ուրիշ տեղեր և բողոքներ կը տեղացնեն, անոնց պատասխանը տուինք Ա.
յաշի բանտարկեալներուն գործը լինցնելով»:

Ասոնք իրև վերջին երեք շարժումն լուրեր Չեզ կը հաղորդեմ, զանոնք օգլ
տագործելու համար, որպէսզի գիտնայ արտասահմանի Հայու թիւնն ու քաղաքակիրթ
աշխարհը թէ ինչ է մեր կացութիւնը: Պէտք է ընդունիլ որ մեր կորուստը մինչև
հիմա 500,000 անձէ պակաս չէ, և հետզհետէ պիտի աւելնայ, ցորչափ այս հալածանքը
պիտի շարունակուի և մեր ժողովուրդը ծայրայիղ կարօտութեան մէջ մնալով հեղ-
եմտէ հազարաւորներ զոհ պիտի տայ անօթութեան, թշուառութեան, հիւանդութեան
և խժգժութեան: Քանի որ քաղաքակիրթ ազգերը այժմեան կացութեան մէջ իրենք
իրենցմով միայն կրնան զբաղիլ և մեր մահուան գալարումներուն միայն հանդիսա-
տես են, առանց կարենալու օրէէ կերպով մեր այս ստուապանջներուն մեղովցում
մ'իսկ առջը բերել, աշխատեցէք և դիմեցէք ամէն կողմ, թէ՛ արտասահմանի Հա-
յու թիւնն և թէ օտար մարդասէրներուն, որ իրենց նիւթական օժանդակութեամբ
կանգնեցր փրկեն: Զգացուցէք թէ յառաջիկայ ձեռք հազարաւորներ անօթութեան զոհ
պիտի երթան: Մեր այս ընաջնջումին ու մահացումին հաշիւը մօտաւոր պապայային
կը մնայ, ազատեցէ հիմա ինչ որ կրնանք: Նպատակ հասցնելու է, ամէնուն սիրտը
բաղինցէք, մեր մայրերն ու եղբայրները անօթի կը մեռնին: Պատրիարքարանը
ըբաւ մինչև հիմա ինչ որ կրցաւ, մեր ձեռքի տակ գտնուած գումարները անխտիր
կը գործածուին, բայց կարօտութիւնն ու պահանջը այնքան շատ է որ մեր ունեցած
գումարները բան մը չեն: Ցարդ 8000 ոսկի զրկած ենք կարօտելոց, որուն հազիւ
2000ը դուրսէն նպաստ եկած է մեզի: Ըսէք մեր եղբայրներուն, իրենց 10 փարան
անգամ հայու մը օրական ապրուստ է: Ըստ այսմ, գրեցէք Ամերիկա, Եգիպտոս,
Ռուսմանիա և ամէն տեղ որ Հայ կայ, և ըսէք նաև Պուլկարահայոց, զհողութեան
մամը հիմա է, իր Աստուածն ու ազգը սիրողը թող ձեռք երկարցնէ մեզի:

Եղբայրական սիրով և Ձեր աղօթից ապաստան,
Դժբախտ Գոտրիարքն Հայոց Թուրքիոյ
ԶԱԻԷՆ ԱՐՔԵՊՍ. ՏԻՐ ԵՂԻԱՅԵԱՆ

Ե. Գ. Ձեր քոյրը զրկելու համար հեռագիրնիդ ստացայ: Առայժմ անկարելի է
Ձեր քոյրը և Զաքարեանի կինը ըլլալուն համար: Ինքը հանգիստ է և մեր հագածու
առարկայ է:

Վառնայէն Քուրտեան կարապետ մեզ կը գիմէ, խնդրելով որ իր վերածուա-
նութեան հրամանը վճանայի Քաղ. Խորհուրդին զրկեմք: Այսպէս գրած էր նաև
Տ. Սարգիս Բենյ. Ղարիպեան. այս մասին պաշտօնականին իսկ նշուած չէ քոստացած
Որէէ ձեռով մարդը ամուսնացուցէք, մենք թաղ. Խորհրդին չենք կրնար քրքելու:

ՀԱՅ ՆԿԱՐՈՂՆԵՐ

Ժ Ա . Դ Ա Ր

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Վ Ո Ռ Ե Ց Ի

(1000 ? - 1070 ?)

Գրիգոր Գհն. Ակոռեցի՝ ճարտար գրիչ եւ ծաղկող: Մնած է ԺԱ. Դարու սկիզբը: Որդին էր Անանիա բազմաշնորհ քահանայի՝ մեռած Ի Բիւզանդիոն (շ. 1026): Աւելի եղբայր մը Գէորգ անունով, յայտնի գրիչ, որուն որդիին՝ Յովհաննէսին կը կտակէ իր գրած Աւետարանը:

Մանկութեան տարիքին, ինքը եւ եղբայրը աշակերտած են Փիլիպպոս քահանայի, եւ անոր որդիներուն՝ Ստեփանոսի եւ Սահակի:

Սենեքերիմ Թազու որի գաղթէն յետոյ, Այրարատի Ակոռի գիւղէն ինքն ալ ընտանիքին հետ կը գաղթէ եւ կը հաստատուի Սեբաստիա:

Իր գրչական գործունէութենէն ծանօթ է մէկ Աւետարան, զոր գրած եւ ծաղկած է իր անձին համար, 1066 թուին, Սեբաստիոյ մէջ. — Ձեռ. Երեւանի, թիւ 311: Յիշտ. Ձեռագրաց, թիւ 113:

Այս Թանկարժէք Աւետարանը հետագային սեփականութիւնը դարձած է Ներսէս Շնորհալիի, որ նուիրած է զայն իր եղբոր Ջորավարի որդիին՝ Դրիգորիսի. — Յիշտ. Ձեռ., էջ 575-6:

Սա ալ 1194 թուին նուիրած է զայն իր քրոջը ամուսին, Ներսէս Լամբրոնացիի հօրեղբոր որդի, եւ Պապեդոն բերդին տէր, Բակուրան իշխանին. — Նոյն, էջ 583:

Լ. Ռ. Ազարեանի տեսութեամբ, «Սեբաստիայի 1066 թ. ձեռագիրը մեծ չափով օգնում է պարզաբանելու Կիլիկեան մանրանկարութեանը վերաբերող մի շարք հարցեր»։ — Կիլիկեան Մանրանկարութիւնը ԺԲ. - ԺԳ. Դարերում, Երեւան, 1964, էջ 30-31:

Այլուր ան կը գրէ. «Այս ձեռագրի մանրանկարներում եւ զարդապատկերներում առաջին անգամ հանդիպում ենք մի շարք այնպիսի մոտիւլներ, որոնք հետագայում բնորոշ են դառնում Կիլիկեան ձեռագրերի համար»։ — Նոյն, էջ 67:

ՅՈՎՀՆԱՆՆԵՍ ՍԱՆԴՂԿԱՎԱՆԵՑԻ
(1010 ? - 1070 ?)

Ճարտար գրիչ եւ նկարիչ Յովհաննէս երէջ ծնած է ԺԱ. Դարու սկիզբները: Հօրը անունն էր Դաւիթ, մայրը կը կոչուէր Մարիամ: Ձինքը կը կոչեն Սանդղկավանցի, այնտեղ գործած ըլլալուն պատճառաւ: Իր գործունէութեան կարճ մէկ շրջանը միայն ծանօթ է, որ է ԺԱ. Դարու երկրորդ կէսին առաջին տասնամեակը: Այդ թուականներուն գրած եւ ծաղկած, կամ լրացուցած կը համարուի երեք նշանաւոր Աւետարաններ, որոնք են,

1. — Աւետարան, 1053, Սանդղկայ վանք: Գրող եւ ծաղկող՝ Յովհաննէս երէջ, որդի Դաւթի եւ Մարեմայ. — Ձեռ. Երեւանի, թիւ 3793: Յիշտ. Ձեռ., թիւ 165:

2. — Աւետարան (Բեգիւնց), գրուած 1060 թուականէն առաջ, ձեռամբ «Ստեփանոսի անարժան քահանայի եւ փանաքի արուեստաւորի եւ յետին գծագրի»: Պակաս

Գամէր էֆ. Ձեր գրած մէկ քառթէն իմացեր է որ իրեններուն բռնած տունը Չերմոս գիրքի մը վրայ է եւ այս պատճառաւ նոր տուն մը վարձելու հետաճուա են եղեր: Կը խնդրէ որ գուշք ալ հոգածու գտնուիք յարմար եւ օգուէա ու առանձին տուն մը գտնուելու, հոգ չէ թէ վարձքը քիչ մը աւելի ըլլայ: Նոյնպէս կը խնդրէ հազարդէկ իրեններուն որ աղոցը աղէկ նային, միշտ գրեն, եւ մասնաւորապէս զգոյշ եւ քաշուած ապրին:

Երուսաղէմ վրդ. ի ընտանիքը 3-4 շաբաթ է ի վեր մեկնած են Պոլսէն եւ գերուսուածին նայելով Ֆիլիպպէ հաստատուած են, թող գրեն իրեն թէ ինչու՞ Ամբրիկա սչեն մեկնած քարդ:

ՁԱԽԷՆ ԱՐԳ.
Պարտիարք Կ. Պոլսոյ

մնացած ցանկերը եւ աւետարանառօջները լրացուցեր եւ կազմեր է Յովհաննէս Երէց 1060ին: Այս Աւետարանէն այժմ կը մնան 21 թերթեր, Երեւանի Մատենադարանը, թիւ 10099. — Յիշտ. Ձեռ. թիւ 109, 111: Բանբեր Մատենադարանի, թիւ 8, էջ 140-141, Տ. Ա. Իզմայլովա:

3. — Աւետարան (Մողնու) ԺԱ. Դար, գրիչ եւ ծաղկող՝ Յովհաննէս. — Ձեռ. Ե-Քեւանի, թիւ 7736: Բանբեր Մատենադարանի, թիւ 10, էջ 379-398, Արտաշէս Մաթեվոսեան:

«Մողնու Աւետարանի նկարները հոխ են, կերպարները՝ հանգիստ, գրչու թիւնը շքեղ: Վարպետ գրիչը նկարների եւ գրչութեան մէջ մարմնաւորել է քրիստոնէութեան նկատմամբ հաւատացեալի ունեցած սէրը, յոյսը եւ հաւատը, որը պատճառն է ձեռագրի ներգործող հանգիստ տրամադրութեան» (էջ 394):

«Մուղնու ձեռագրի տեսարանների յորինուածքներում դետալների բաշխման, թանձր ներկերով թէ եւ լայն, բայց մանրակրկիտ գեղանկարչական կատարմամբ աչքի ընկնող վարպետութեան մէջ զգացում է որոշ դպրոցի երկարատեւ պրակտիկա եւ հմտութիւն» (Հին Հայկական Մանրանկարչութիւն, Երեւան, 1952, Լ. Ա. Դուրնովո):

Ժ Բ . Դ Ա Ր

ԿՈՍՏԱՆԴՆՊՈԼՆ ԿՈՇԻԿ
(1125?-1195?)

ԺԲ. Դարուն ապրող նշանաւոր մանրանկարիչ: Ծնած է մօտաւորապէս 1125 թուին: Դործած է ընդհանրապէս Սկիւռայի մէջ: Եղած է ուսուցիչ Միհնցի Գրիգոր գրչի, որ գիրք կը ներկայացնէ, 1174 թուին, իրրեւ «պատուական ծերունի».— Յիշատակարանը Ձեռագրաց, էջ 458:

Կոստանդին գրչի գործերէն ծանօթ են չորսը. կը թուենք ժամանակագրական կարգով:

1. — Աւետարան, գրուած 1173ին Գրիգոր Միհնցիի կողմէ, Կոստանդին քահանայի համար, ծաղկուած Վարդանի եւ Կոստանդինի ձեռքով: — Յիշտ. Ձեռագրաց, էջ 448:

2. — 1191ին նկարագրած է Ներսէս Լամբրոնացիի Սաղմոսաց Մեկնութիւնը. — Յիշտ. Ձեռ., էջ 566, ծանօթ. 4: Սիոն, 1949, էջ 185 (Ե):

3. — Աւետարան, գրած եւ ծաղկած է 1193ին, Սկիւռայի մէջ, Ներսէս Լամբրոնացիի եւ եղբորը՝ Հեթումի համար. — Ձեռ. Վենետիկի, թիւ 126: Յիշտ. Ձեռ., թիւ 253:

Լ. Ռ. Ազարեանի համաձայն, «Կոստանդինը, Վենետիկի 1193 թ. Աւետարանում համամասնութիւնների եւ առանձին մոտիւների դասաւորութեան քնազաւառում, հանդէս է բերում ներդաշնակ կոմպոզիցիայի արտակարգ զգացողութիւն».— Կիլիկիան Մանրանկարչութիւնը ԺԲ. — ԺԳ. Դարերում, 1964, Երեւան, էջ 70-71:

4. — Աւետարան, գրած եւ ծաղկած է 1195 թուին. հաւանօրէն Սկիւռայի մէջ, Ներսէս Լամբրոնացիի եղբոր՝ Ապիրատ իշխանին պատուէրով. — Ձեռ. Նոր Զուգայի, թիւ 24:

Կ'արժէ դիտել որ 1173էն մինչեւ 1191 տասն եւ եօթ տարիներու միջոց մը պարպ կը մնայ:

ԳՐԻԳՐ ՄԼԻՃՅԵՏԻ (ՍԿՆԻՈՒՍԵԻ)

(շ. 1150 - + 1215)

Մեծահռչակ գրիչ եւ մանրանկարիչ, որ ընդհանրապէս աշխատած է Սկիւռայի մէջ, 1173-1215 թուականներուն: Կարճ ժամանակով գտնուած է Հռոմկլայ (1174) եւ Միհնոյ անապատը (1198): Իրեն ժամանակակից Սկիւռացի Գրիգոր Վարդապետէն (1150?-1230?) զանազանելու համար յարմար եղած է զինքը կաշել Միհնցի, Սկիւռացիի փոխարէն:

Գրիգոր աշակերտած է Վարդան գրչի (+ 1173) եւ «Կոշիկ» մականունով յորջորջուած Կոստանդինի (+ 1196): Իր կարգին ուսուցիչ եղած է իրեն անուանակից, եւ թերեւս նաեւ հայրենակից, Գրիգոր օտրկաւագին, որուն վիճակուած է լրացնել այն երկու Աւետարանները, որոնք անաւարտ մնացած էին իր ուսուցչին մահով:

Միհնցի Գրիգոր գրիչը բազմադղեւ արուեստագէտ մը եղած պէտք է ըլլայ, նկատելով որ ան աշխատած է քառասուն

երեք տարի, եւ մեզի ծանօթ իր վեց գործերէն առաջին երեքը իրագործուած են երկու տարուան մէջ, 1173-1174, իսկ վերջին երկուքը կը կրեն 1215 թուականը, միջանկեալ քառասուն տարիներէն յայտնի է մէկ ձեռագիր միայն: Այնպէս ահաւոր աւեր գործած են ժամանակի ժանտաժուտ ժանկըները, եւ չար մարդոց քանդիչ կիրքերը, որոնցմէ փրկուած են սակաւ երկեր սոսկ: Հետեւեալ ձեռագիրներու մասին ծանօթութիւններ կը գտնուին ներկայիս:

1. — Աւետարան, երկաթագիր, գաղափարած է Սկեւռայի մէջ 1173ին, Լամբրոնացի Ներսէսի տրամադրած օրինակէն, Կոստանդին քահանայի համար: Ծաղկագարդումին մասնակցած են իր ուսուցիչները՝ Վարդան եւ Կոստանդին. — Յիշատակարանք Զեռագրաց, Անթիխաս, թիւ 204:

2. — Նարեկ, փոքր երկաթագիր, գրած եւ ծաղկած է Սկեւռայի մէջ 1173ին, Լամբրոնացի Ներսէսի պատուէրով. — Յիշտ. Զեռ. թ. 205: Զեռ. Երեւանի, թ. 1568:

3. — Աւետարան, մեծ երկաթագիր, գրած եւ ծաղկած է Հռոմիլոյի մէջ 1174ին, Ներսէս Ենտրահլի եւ անոր յաջորդող Գրիգոր Տղայ կաթողիկոսներու պատուէրով. — Յիշտ. Զեռ., թիւ 209:

4. — Աւետարան, միջին երկաթագիր, օրինակած է 1198ին, Մլէնի եւ Սկեւռայի մէջ, Աղամ մակղիրով յորջորջուած Ստեփանոս քահանայի համար. — Յիշտ. Զեռ., թիւ 278:

5. — Աւետարան, երկաթագիր, օրինակած է Սկեւռայի մէջ 1215ին, «բանի սպասաւոր» Ստեփանոս քահանայի պատուէրով: Լրացումը կատարած է իր աշակերտը՝ Գրիգոր սարկաւազ, Տարսուսի մէջ 1216ին. — Յիշտ. Զեռ., թիւ 350: Զեռագիր Նոր Զուղայի, թիւ 25:

6. — Աւետարան, միջին երկաթագիր, օրինակած է Սկեւռայի մէջ 1215ին, Սարգիս քահանայի խնդրանքով: Լրացումը կատարած է Գրիգոր սարկաւազ 1218ին. — Զեռ. Նոր Զուղայի, թիւ 26:

Մեծ հաւանականութեամբ իր գործն է նաեւ.

7. — Նարեկ, ուղղագիծ երկաթագիր: Ստացող՝ Կոստանդին. — Զեռ. Երեւանի, թիւ 4036:

Մլինեցի Գրիգորի մանրանկարչական արուեստը շահեկան է այն հստգամանքով, որ Հայաստանի մէջ ծաղկած հին ոճէն դէպի Կիլիկեան Նոր ոճ տնցումի ընթացքը կը ցուցաբերէ:

Ժ Գ . Դ Ա Ր

ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՂԱՆԱՅ

(1155? - 1215?)

Ծաղկող Ստեփանոս քահանայ ծնած է ԺԲ. Գարու երկրորդ կիսուն ենթադրաբար: Զինքը կը տեսնենք Երզնկայի Աւագ Վանքը, ԺԿ. Գարու սկիզբը. իրրեւ նշանաւոր ծաղկող: Իր գործերէն ծանօթ են երկու հատ, Աւետարան մը եւ Տօնական-ձառընտիր մը:

1. — Աւետարան, 1201ին, Աւագ Վանքի մէջ, գրած եւ մասամբ ծաղկած է Ստեփանոս քահանայ, իսկ Յովանէս երէց մասնակցած է ծաղկումին եւ նկարած է պատկերները: Ստացող՝ Ստեփանոս քահանայ (ոչ գրիչը). — Զեռ. Երեւանի, թիւ 10359: Արտաշէս Մաթեւոսեան, Բանբեր Մատենադարանի, թիւ 9, էջ 155 հ.:

2. — Տօնական - ձառընտիր: Գրիչ՝ Վարդան ԳՅՆ. Կարնեցի (1200 - 1202), Աւագ Վանք, Երզնկա: Նկարող՝ Ստեփանոս: Ստացող՝ Վասուսի եւ Հռիփսիմէի որդի պատրոն Աստուածատուր Բաբերդցի (+ 1202): Կազմուած է 1205ին, Ղազարու Վանքին մէջ (Մուշ). — Յուցակ Զեռ. Մշոյ, էջ 1: Յիշտ. Զեռագրաց, թիւ 319: Զեռ. Երեւանի, թիւ 7729:

Ըստ Գարեգին Կթղ. Յովսէփեանի, «Զեռագիրը մանրանկարչութեան տեսակէտով առաջնակարգ արժէք ունի . . . ուշադրութեան արժանի հայ-արար եւ սելջուկեան արուեստների համեմատութեան տեսակէտով» (Յիշտ. Զեռ., էջ 722):

Այս ձեռագիրը այլպէս նշանաւոր է իր մեծութեամբ, զրուած հաստ մագաղաթի վրայ պատրաստուած 600 հորթերու կաշիէն, կը կշռէ 32 բիւրկրամ: Այն ոչ միայն մեծագոյն ձեռագիրն է հայերէն լեզուով, այլ նաեւ աշխարհի մագաղաթեայ մեծագոյն ձեռագիրն է:

ԿՈՁՄԱ ԳՐԻԶ

(1155 Գ-1220 Գ)

Կողմա գրիչ եւ ծաղկող ծնած է ԺԲ. Դարու երկրորդ կիսուն սկիզբը հաւանաբար: Իր գրչական գործունէութիւնը կ'ընդգրկէ 1205-1219 թուականները: Այդ շրջանէն ծանօթ են չորս Աւետարաններ, գրուած միջին երկաթագրով եւ նկարազարդ: Ատոնք են.

1. — Աւետարան, 1205, Խարբերդ: Ստացող՝ Երաժիշտ Թորոս քահանայ. — 2. Բ. Վ. Սարգիսեան, Մայր Յուցակ Հայ. Ձեռագրաց Վննետիկի, Ա. Հատոր, 1914, էջ 397-402: Գարեգին Կթղ. Յովսէփեան, Յիշատակարանք Ձեռագրաց, Սնթիւիաս, 1951, էջ 603-4:

2. — Աւետարան, գաղափարուած «ի ճշմարիտ եւ փառաւոր աւրինակէ, որոյ մականունն Կողուան»: Պատուիրատուն՝ Վարդան Կրօնաւոր. — Թորգոմ Արք. Գուշակեան, Հանդէս Ամսօրեայ, 1924, էջ 520: Յիշտ. Ձեռագրաց, էջ 663-4:

3. — Աւետարան: Ստացող՝ Կոստանդին Եպս. Ռապնայ. — Տրդատ Վրդ. Պալեան, Ծաղիկ լրագիր, Կ. Պոլիս, 1891, Մայիս 18, էջ 3:

Ըստ ցուցակագրողին, այս ձեռագրին խորանները, զարդերը, պատկերները եւ զարդագրերը «ճաշակաւոր շինուած, սքանչելի, զմայլելի գեղարուեստ են եւ ոսկեզօծեալ»:

(1)

4. — Աւետարան, գաղափարուած Բարչանճա Անապատին մէջ (Խարբերդ), «ի փառաւոր աւրինակէ, որոյ Մուրղանեցի կոչիցի», Խաչիք քահանայի համար. — Յիշտ. Ձեռագրաց, էջ 601-604: Սիոն, 1958, էջ 220-221:

ՄԱՐԳԱՐԷ ԱՐԵՂԱՅ

(1160 Գ-1230 Գ)

Իր անունով ծանօթ է մէկ Աւետարան, որուն գրիչն է Յակովբ: Գրուած է Հաղբատ՝ 1211 թուին: Ձեռագրին ուղղիչը եղած է Մխիթար Բորայրեցի: Նկարչական աշխատանքը կատարած է Մարգարէ արեղայ: Աւետարանը կազմուած է Հոռոմոսի Վանքին մէջ, Արրահամի ձեռքով: Ստացողն է Սահակ արղ. Անեցի, որդի Ռոմանոսի եւ Կատայի: Սահակ արեղայ Աւետարանը նուիրած է՝ իրենց կողմէ Արջուառնի վանքին մէջ շինուած եկեղեցիին:

Այս Աւետարանը ունի մանրանկարչական բարձր արուեստ, եւ մեծարժէք է Հաղբատի դպրոցի գրչութեան ուսումնասիրութեան համար:

Սոյն ձեռագիրը հետագային կոչուած է Գետաշէնի Աւետարան, երկար ժամանակ Գանձակի մօտ՝ Գետաշէնի եկեղեցիին սեպհականութիւն լինելուն պատճառով. — Ձեռ. Երեւանի, թիւ 6288:

«Նկարիչ Մարգարէի Արուեստը» խորագրով յօդուած մը գրած է Վ. Հ. Մաթեվոսեան, Պատմա-Բանասիրական Հանդէսին մէջ (1972, Ա., էջ 77-89):

Ն. ԱՐԳ. ԾՈՎԱԿԱՆՆ



նակին կարծեց թէ խառն նիւթեր ղնելով՝ պիտի կրնայ շատ բաժանորդ շահիլ, բայց յուսախոր եղաւ և նորէն նախկինին դարձաւ: Բազմամիտը հաստատուն մնաց իր փոխուած կերպարանքին մէջ, բայց այն ո՛չ թէ գրականութեան ծառայութիւն մատուցանելու համար է, այլ կարծեմ գիտական նիւթ ղուներնալուն համար: Ես Համբարձումի 14 տարուան աշխատակիցը և վնասող բաժանորդն եմ. իմ համակրանքս խոր, շատ խոր է. կ'ուզեմ որ թերթը մնայ այսպէս: Իսկ եթէ յոյս ունիք որ բովանդակութիւն փոխելով բաժանորդները կը շատնան, այն ժամանակ կարելի է թերթը բաժնել երկու բոլորովին անջատ մասերու. գրական բաժին և հայագիտական բաժին. Ուզողը կրնայ մէկուն կամ միւսին բաժանորդ գրուիլ: Այն ժամանակ, եթէ գրական բաժինը իրօք շատ բաժանորդ ունենայ, կրնայ նպաստ մատուցանել գիտականին և անոր ծախքերը ծածկել: Այսպիսի ոճի մը կը հետեւէր նախկին Հրատարակչական ընկերութիւնը՝. կը տպէր այնպիսի գրքեր՝ որոնք աւելի շատ կը ծախուէին և անոնց եկամուտը կը պառկեցնէր չժախուելու հայագիտական գրքերու վրայ: Ամէն պարագայի մէջ կը մտղթեմ կար և կարողութիւն թէ՛ Ձեզ անհատապէս և թէ բովանդակ իմրագրական մարմնոյն ու Միաբանութեան: — Կ'ուզարկեմ նամակիս հետ և վեց բուրլի. խնդրեմ հաճեցէք յայտնել թէ ի՛նչ տարուան պարտք ունիմ:

Խնարձ յարգանք
Զ. ԱՃԱՌԵԱՆ

Նիթէ Կ. Բաժանցիանի «Բանասէր» հանդէսը նկատի ունի, ապա այն դադարել էր 1907ին: Նաևանբար նկատի ունէր «Քիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութիւնը, որ մեծ ծառայութիւններ է մատուցել հայերէն գիրքը մատչելի դարձնելով:

14.

[1910 Նոյ. 10
Նոր - Նախիջևան]

Գերապատիւ
Զ. Ն. Ակինեան,
Խմբագիր Հանդէսի,

Պր. Զամինեանին՝ յայտնեցի Ձեր գրածը. ուրախ եղաւ և խոստացաւ եկող ապրիլէն նորոգել իր բաժանորդութիւնը: Յոյս ունիմ երկու բաժանորդ ևս գտնել, երկուքն ալ լեզուաբանութեան հետեող, մէկը ուսուցիչ, միւսը սկսնակ աշակերտ: «Հայոց գրեր»էն 3 գլուխ միայն մնաց. ինչպէս ըսած եմ կանխաւ, աշխատութիւնը երկար չէ. կէսէն աւելին տպեցինք արդէն: Ես չորրորդ կ'ուզարկեմ Դանիէլեան գրերու վրայ գլուխ մը, որմէ յետոյ կը մնայ այլ ևս երկու գլուխ: Շատ շատ փազանց զբաղուած եմ այժմ, որովհետեւ մէկ կողմէ կը տպուի Classification-իս հայերէն ընդարձակ թարգմանութիւնը և միւս կողմէ Արմատական Բուսարանն ապել կը պատրաստուի: Յոյժ ցաւալի կորուստ մը ունեցայ. Պօլիսէն վերադարձիս, ծնողներս հետ բերի. և ահա շուտով հիւանդացաւ ծերունի հայրս և երկու շաբաթ շարձարուելէ յետոյ վախճանեցաւ: Այս ցաւը, կրած նեղութիւններս բոլորովին խանազարեցին ինձ. և ահա ասոր համար «Հայոց գրեր»ը շատ ետ մնացին. քայքայ հոգ չէ՛ կը վերջացնենք շուտով:

Ձեր առիթ մատենագիտական տեղեկութիւնները՝ առանձնապէս պիտի հետաքրքրեն ինձ և նմաններս: Հեռո՞ւ անկիւն մը նստած, Ձեր շնորհիւ միայն պիտի իմանանք թէ ի՛նչ կը կատարուի Եւրոպայի գիտական կեանքին մէջ: Կը խնդրեմ նակնայն որ լեզուաբանական յօգուածներու մէջ երբեմն շատ փոքրիկ ամփոփումներ տաք: Այսպէս ըրած էք արդէն՝ ձեր երկու Arm. Bibliographicներուն մէջ, զորս փոքրով ու մեծ շնորհակալութեամբ ընդունեցի: Մէկ յօդուած մը գտայ որ ինձ անծան

նօթ մնացած էր, Սա ալ կը պատրաստեմ կատարեալ հայագիտական ցուցակ մը՝ միայն նուիրուած Հայ լեզուաբանութեանն³, Սակայն շատ մանրամասն, որովհետեւ մինչև իսկ Խաթարաւայի⁴ յօդուածները յիշուած են, եթէ բարբառով գրուած են, Ձեր հրատարակելի ցուցակը ամենէն առաջ ի՛նչ պիտի օգնէ և կանխաւ ու ջերմապէս շնորհակալ եմ:

Ձեռագրաց Ցուցակը եթէ աւարտի, պիտի խնդրեմ որ մէկ օրինակ իմ հաւելոյս կազմելով հաճէիք ուղարկել ինձ: Նոյնպէս մէկ օրինակ ալ Սանտասրեան Ցուցակէն եթէ կայ՝ կազմելով ուղարկել ինձ (առանձին հատորով և մ'չ թէ Թաւրիզի Ցուցակին հետ կազմելով):

Շէֆաւալովիցի⁵ հասցէն եթէ որ և իցէ միջոցով Ձեր ձեռքն անցնի, խնդրեմ հաճեցէք ուղարկել: Բազրտտ Խալաթեանը⁶ գիտնուաւ է, բայց անոր հետ թղթակցութիւն չունիմ: Հայ ծանօթի մը հետ թղթակցութիւն ունենալը շատ անգամ աւելի դժուար է քան թէ օտար եւրոպացի սնծանօթի մը հետ:

«Մեր Զայն»⁷ի պակասած թիւերը և Հ. Բ. Պիլէզիկեանի⁸ խնդրած գրքերը կը գտնեմ ու կ'ուղարկեմ: Այս առթիւ խնդրեմ հաճեցէք յայտել իրեն:

Նոր լուսանկար մը առ այժմ արամադրելի չունիմ. բայց կը խոստանամ, խնդրելով Ձեզմէ փոխադարձը, որպէս զի զէ՞ք պատկերի վրայ ուրախութիւնն ունենամ արժանանալու Ձեր տեսութեան:

Խոնարհ յարգանք
Ձերդ ն. ծ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

1910 Նոյ. 10
Ն. Նիշ.

[Առաջին եջի լուսանցում]՝ Տեղւոյ տպարանպետ Աւագեանը կը խնդրէ Ձեզմէ վիեննայի ձուլարանիդ մէջ գտնուած հայ. տառերու մէկ ցուցակը⁹. կրնաք ինձ դրկել:

¹ Զամինեան Աբրահամ (1861-1937), հայագէտ և մանկավարժ. 1908-1909ին Նոր Նախիջևանում հրատարակել է «Հայոց Եկեղեցու պատմութիւն», երկհատոր, 1914ին՝ «Հայ զբոսականութեան պատմութիւն» (1ին մաս). մահացել է Երևանում:

² Հ. Գր. Գալէմբեքեանը ՀԱ-ում 1887-1897ին հրատարակել է 1887-1896 թթ. լոյս տեսած «Եւրոպական-հայագիտական հրատարակութիւն», որից յետոյ այս բաժինն ընդհատուել է: Հ. Պ. Ֆերհաթեանը շարունակեց 1910ի յունուարից և լոյս ընծայեց 1897-1910ին տպագրուած գործերի ցանկը:

³ Հր. Ահառեանն այսպիսի մասնագիտական ցանկ չի հրատարակել:

⁴ «Խաթարաւայ», երգիծական շարաթաթերթ, Քիֆլիս, 1906-1916, 1922, 1925-1926:

⁵ Եւրոպացի լեզուաբան:

⁶ Խալաթեան Բազրտտ (մտ. 1860-1935), բանասէր, պատմաբան:


⁷ «Մեր ձայն», քաղաքական, հասարակական և գրական շարաթաթերթ, տպ. եւօրեայ, Նոր Նախիջևան, 1907-1909:

⁸ Հ. Բառնարա Պիլէզիկեանը (1862-1917) տարիներ շարունակ եղել է վանքի մասնադատարանի պատասխանատուն և շատերի հետ նամակակցելով հարստացրել է այն:

⁹ Վիեննայի Միլիթարեան տպարանը վաճառքի համար ունէր հայերէն տառեր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

(Գարունակելի՛ 7)



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԿԱՆԱՑ

ժ) Սուրբ Ներսես Շնորհալի: Շարահանների ցանկը Շնորհալուն վերագրում է զգվառ ձայնն աւագ օրհնութեանց, ըզեթթանասնիցն, զիննուէացւոցն, զաղու-

Շարահանների ցանկերը

1) զվառ ձայն աւագ օրհնութեան, 2) զԹօրանասնիցն, 3) զՆինուէացւոցն, 4) զաղուէացիցն, 5) մաննայն կիւրակէիցն, 6) զԾաղկազարդի հարցն, 7) զՀագոյ Գալըստեան չորս պատկերսն, 8) զՎարդավառի երկու պատկերսն, 9) զՅօհաննու զձ. հարցն, 10) զմարգարէից զձ. հարցն, 11) զհրեցակապեաց, 12) զՆոցահրեցեան Վարդանանց, 13) զՂեւոնդեանցն, 14) և զայսօր անձառն, 15) զՆորոգողն, 16) զԱճ անեղն, 17) զԱրարչականն, 18) զԱրեւազալի շարահանսն, 19) զՕրհնեմք ըզքեզն, 20) զՆայիաց սիրովն, 21) և զ'ի քէն հայցեմքն, և ըստ ոմանց (22) զսուրբ Յակոբայն սորա է ասացեալ:

հացիցն, աժ. կիւրակէիցն, զԾաղկազարդի հարցն և ին. յ:

Համեմատաբար դնենք շարահանների ցանկում Ն. Շնորհալուն վերագրուածները և Գոնձակեցու ասածները:

Գոնձակեցու յիշատակածները

«... Բազում ինչ կարգեաց յեկեղեցի քաղցր եղանակաւ Խորովեան ոճով շարահանսն և մեղեդիս և տաղս ոտանաւորս, քանզի նորա է.

1) Յարուբեան օրհնութիւն երբող կողմն, 2) Աճածնի փոխման երկուց աւուրցն, 3) Պետրոսի և Պողոսի օրհնութիւն և մանկունքն և համարձիս, որոյ սկիզբն է Յնձա՛ այսօր ս. եկեղեցի, 4) և որդւոց Որոտմանց օրհնութիւնն շոր էն յեւթեան որդի, 5) և շարահան մի Անասի և 6) երկու Թէոդոսի, 7) և մի առաքելուցն, 8) և աւագ շարաթիւն երից աւուրց օրհնութիւն Բշ. Գշ. և Դշ., 9) Երկու շարահան յարութեան Ճաշու, 10) Նինուէացւոցն, 11) և հրեցակապեաց, 12) և սրբոց Վարդանանցն և բազում շարահանսն: Արար նա քարոզս սրբոյ պատարագին քաղցր եղանակաւ և տունս շարահանաց նմին խորհրդարար...» (Կիրակոս Գոնձակեցի, էջ 66-67):

Արարամու, Նորոգող տիեզերաց, Նայաց սիրով, Նորաստեղծեալ, ի քէն հայցեմք, Նոյն և նման, Հոգւոյ գալստեան երրորդ աւուր օրհնութիւնը: Իսկ ցանկի միւս յիշածները կարող են Ն. Շնորհալունը լինել ունենալով միևնոյն ոճն, լեզուն, բառերը, գաղափարը և ին.:

Որովհետև Ն. Շնորհալին ունի տաղեր Աճածնի վերափոխման, Աւետեաց, Ճրագութեցի Ծննդեան, մկրտութեան, յարութեան Ղազարու, Ծաղկազարդի, մեծի ուրբաթու, 'ի խաչելութիւն Տեառն, 'ի յարութիւն Տն., Ս. Երրորդութեան, Վարդավառի, 'ի փոխումն Կուսի, Խաչի, սրբոցն հրեշտակապետաց, և մաննայն երկնային զօրացն, 'ի ս. առաքեալսն, 'ի ս. մարգարէսն, սրբոց հայրապետաց,

Վերոյիշեալ երկու աղբիւրների մէջ միանման յիշատակուած են յարութեան վառ ձայն օրհնութիւն, Նինուէացւոց, Հրեշտակապետաց և Վարդանանց:

Մի կողմ թողնելով մասեանագրի ցուցմունքը, որովհետև Գոնձակեցու թուածները բոլորը ճիշտ են, տեսնենք Շարահանների ցանկում յիշատակուածներից էլի որոնք են Ն. Շնորհալունը բացի այդ չորսից: Նախ այն շարահանները որոնց վերայ մակագրուած է Վարդ Տն. Ներսիսի շնորհալուոյ և այն երգերը, որոնց սկզբը նատաւերը կազմում են անունս Ներօէս. առաջիններից և երկրորդներից են՝ Այսօր անձառ, Աճ անեղ, Արարչական, Օրհնեմք զքեզ, Յարեւելից, Ճգնաւորք, Հոյս Արարիչ լուսոյ, Ճանապարհ, Նահապետին

Յովհաննես կարապետին, որդոցն Որոտման, Նախավկային, 'ի ս. լուսաւորիչն, որոնցից մի քանին համեմատելով մերոյ նման գաղափարով, մտքով, լեզուով, ոճով իւր գրած շարականներին, ուստի կարելի է ասել որ շարականների ցանկում յիշատակուած երգերը բոլորը Ն. Շնորհաւունն են:

Ներսէս Շնորհաւորին ժամագիրքը կարգաւորեց, նորա մէջ մտցրեց իւր շարադրած երգերից շատերը, որոնք այժմ երգուած են գիշերային, տաւառտան, ճաշու և երեկոյեան պաշտաման միջոցին:

Աւարտ նա (Ն. Շ.) երգս և ուսոյց իսկ այնոցիկ որք փանէին զբերդն (Հռոմկայու), զի փոխանակ վարպար ձայնիցն կայն ասացեն, որոյ սկիզբն է 'ի սողմոսէն Դաւթի ախշեցուք 'ի գիշերի զանուն քո Տէր» և այսպէս խորհրդաբար ըստ կարգի Աւարթիք փառք իմ», որ այժմ ասի յեկեղեցի 'ի ժամ գիշերային պաշտաման», էջ 67. Գանձ. Կիր.:

Բոլոր վերոյիշեալները կ'ապացուցանեն, որ Ն. Շ. գրել է ստուար քանակու. թեամբ հոգեկոր, հոգեբուղիս և հիասքանչ երգեր:

ԺԶ) Միւս հեղինակներից Ներսէս Լաւերոնացին յօրինել է «Այսօր յարեաւ», «Նորոգեալ կղզիք», «Որ զլոյս»: Աւանդութիւն կայ, որ իւր Հնթնով երբօր շինած եկեղեցու օժման ժամանակ յօրինել և երգել է «Նորոգեալ կղզիք»:

ԺԷ) Գրիգոր Ալեւուային ըստ աւանդութեան գրել է «Արեգականն արդարութեան» շարականը:

ԺԸ) Իսկ Խաչատուր Վարդ. Տարօնացին «Խորհուրդ խորին», որը երգուած է այժմ էլ Պատարագի սկզբին և որի տների սկզբնատառերը կազմուած են Խաչատուր անունը: Այս երգը իւրեւել և երգել է այն ժամանակ, երբ Ջաբրիա Սպասարի հրամանով պիտի զգեստաւորուէի պատարագի համար յունական եկեղեցական զգեստներով:

ԺԹ) Վարդան մեծ Վարդ. Բարձրեղոյցուն վերադարձուած է «Որ նախիմաց», որը երգել է Կիլիկիայում եղած միջոցին:

Այս մասին մի անգամ էլ պնդակն ենք: Բարձրեղոյցունն ևն ճի յանսանման ծովէն», «Որք զարդարեցին» (Թարգմանչաց) և Ս. Սարգսի օրհնութիւն՝ «Ամենաուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ»:

Ի) Յակովբ Վարդ. կլայեցի, «Երգեցէք որդիք», որ Մարիամ Աճածնի ծննդեան համար է գրուած: Հաւանական է, որ այս տօնը սրա օրօք լինի Եկեղեցու տօնակատարութեանց մէջ, որովհետև այս տօնի շարականների մէջ մի հատ հին երգչկայ: Եւ այս հանգամանք մեզ կարծել կը տայ այս տօնի ուշ մանկը Եկեղեցու տօների մէջ:

ԻԱ) Յովհաննէս Վարդ. Պուզին շարականների ցանկը նուիրուած է «Որ զլոյսն անճառ», Հուսուորչի Այսօր զուարեացեալ» և «Լիբինք ամենայն», յօթն քոտաւարակայն «Յաւուրց վերջին», «Յայս յարկ նուիրանաց»:

Ս. Ներսիսի կանոնի Տէր յերկնիցը հետքերքի է յառաջ բերել, թէ ի՞նչ գրութիւն է ներկայացնուած:

1. Այսօր զուարեացեալ տօնն երկնայինքն ընդ մարդկան պարակից եղեալ փրկութեան մերոյ, քանի յայտնեցաւ մեզ հոգեկոր . . . պարզեալս՝ զխաղաղութիւն Հայաստանեայց աշխարհի:

2. Այսօր վերստին նորոգեցաւ քահանայական գաւազան գեղեցկպէտ ծաղկեալ պայծառութեամբ, քանի շնորհեցաւ հովիւն քաջ բանաւոր հօտի յարմատոյ Հռուսուորչին: . . .

3. Այսօր մեծապէս փառօք ցնծայ թագաւորական գաւազանն ընդ հաշտութեան օրոյ սր. հայրապետին, քանի եկաւ 'ի յօգնութիւն . . .

Այս երգի մէջ ներկայացրած է թագաւորի և հայրապետի հաշտութիւնն ու յարաբերութիւնը:

Յովհաննէս Պուզին է «Յամենայն ժամ օրհնեմք», «Այսօր ձայնն հայրական» Զօրհնեաց երգերը:

Ի Կիրակոս Վարդ. Երզնկացի կամ Կոստանդին Երզնկացի: Սորա մասին խօսեցինք շարականների խմբագրութեան մասին խօսելիս: Սորա է «Արեւելք Գերարքին», որի վերջին տան առգերի սկզբը նատառերը կերպուած անունն են կազմուած:

Հայր Ղ. Ալիշան Գրիգոր կաթ. Անա-
 ւարզեցու մասին պատմելիս, Միսուանում
 յիշում է նորա 33 կանոնները, բայց թէ
 ինչո՞ւ չարականներ կարգը չեն մտել
 սորա գրուածքները, կարծում եմ պատ-
 ճառը իւր հասած կրօնական խնդիրները
 պիտի լինին:

Անհետաքրքիր չի լինի յառաջ բերել
 Միսուանի այս մասին ցուցմունքը և շա-
 րականների վերատառութիւնները:

Ճ. . . միւս գրաւոր և ոչ աննշան
 գործք Անաւարզեցույն են՝ շարականքն,
 աւելի քան զերեսուն կանոնքն ի յաւել-
 ուածս ասորից և մեծ մասն չափական բա-
 նիւ, որոյ եթէ չիք վստմական ոճ նախնի
 շարականաց, ոչ պակասն իմաստք գե-
 ղեցիկք պարզադասք և հոգեխօսք, հան-
 դերձ վայելուչ հիւսուածով, յոյժվից
 տնազուկ դասք կապին զանուն իւր և
 զինդորոշացն, որ են կոտանդին թագա-
 ւոր և Հէթում, մերթ այսու և մերթ
 կրօնաւորական Յովհաննէս անուամբ նո-
 բին, երբեմն տնկապետ Վովհաննէս
 տէրն, որ նախ արքայն Հէթում, և եր-
 բեմն Վովհաննէս թագաւորահայր և Հևոն
 արքայ ընկալիլք՝ ոմանց վերատառու-
 թիւնն նուիրեալ առ երգիչսն սուրբս,
 որպէս Գրիգորիս առ Գէորգէոս վկայոյ:
 Արարել է և երիս երիս շարականս
 Մննդեան և Յայտնութեան, յառանձին
 աւուրս զատուցեալ զասոնս ըստ Հատի-
 նաց. նշանաւոր ինձ թուի և յոյժ վայե-
 լուչ թուի կանոն ՚ի սկիզբն այսոցիկ շա-
 րականաց իբրև նախերգան իմն կարգեալ
 և պատարտութիւն ճրագալոյցի աւուրն
 որպէս տեսցի ստորև: Միսուան, էջ 241:
 Ան այն ցանկը, որ յառաջ է բերում
 Հ. Ալիշան:

Շարականք Գրիգորի կաթողիկոսի Ա-
 նաւարզեցույ:

- 1) կանոն Անարատ Յղութեան Ս. Աճա-
 ծնի, 2) Ընծայման Ս. Աճածնի, 3) Ճրա-
 գալուցի, Մկրտութեան և Յայտնութեան,
 4) ք աւուր Մննդեան, 5) ք աւուր Մննչ-
 դեան, 6) ք աւուր Մննդեան, 7) Ճրագա-
 լոյցի Մկրտութեան, 8) ք աւուր Յայտ-
 նութեան, 9) ք աւուր, 10) ք աւուր, 11)
 Թլիփատութեան ՅԹ., 12) Ամենասուրբ Եր-
 ոսրդութեան, 13) 14) 15) Աւագ օրն. բշ.

- գշ. և գշ., 16) Ամենայն սրբոց այրուբե-
 նական, վերջին երեք տունքն նուիրեալ
 են ՎՃարանիցն, քանզի առ Հատինս ՚ի
 նմին աւուր (1 Նոյեմբերի) կատարի տօն
 ամենայն սրբոց, 17) ՀԲ. աշակերտացն,
 18) 19) 20) Մատթէոսի, Մարկոսի և Ղու-
 կասու աւետարանչացն, 21) 22) Անդրէի
 և Թովմայի առաքելոցն, 23) Ս. Բարսղի,
 24) Գր. Աճարանի, 25) Սրբոյն Լէոնի
 Պապին, 26) է. Ժողովոյ, 27) Ս. Նիկողոս-
 յոսի, 28) Ս. Գէորգոյ զօրավարին, 29)
 Թէոդորոսի Սարաթիլատի, 30) Թէոդո-
 րոսի զօրավարին, 31) Մերկեռիոսի, 32)
 Տարագոսեանց, 33) Յովհ. Ոսկերեանի:

Չեռագիր շարականների համեմատու-
 թեան և ուսումնասիրութեան ժամանակ
 № 1606 գրչագրի մէջ ՊԿԱ (1412) թուադ
 կան ունեցող և որը գրուած է ՚ի գրչից
 Ուֆլիցիիէ (հաւանօրէն վրաստանում)
 գտայ Տարագոսեանց շարականը: Հաւա-
 նական է կարծել որ այս գրածը հէնց
 Անաւարզեցու գրածն է:

Ազգային բանասիրաց գուցէ մասամբ
 օժտնդակած լինիմ, եթէ յառաջ բերեմ
 այդ շարականը:

ՇԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԳՈՍԵԱՆԵՑ (ղձ.)

1. Տննչալի տաւնին սրբոցն զուար-
 ճանան այսօր Եկեղեցույ մանկունք տա-
 նելով զյիշատակ Տարագոսի քաջ և արի
 յաղթող վկային, որ է պսակեալ արեան
 իւր հեղածար:

2. Պայծառանայ Սիոնի Մայր Եկեղե-
 ցի, յիշատակաւ սրբոյն Պրորոսի, որ ի
 մարտի անասինացն(*) արիաբար յաղթ-
 եաց ամբարիշտ արանցն և է առ Գս.
 փառաւք պսակեալ:

3. Անարատ գառին հաւր բորձաւդին
 մեղաց անուշահոտ զանձն ողջակիզեաց
 կրանելին Անդրոնիկոս որ զերկնայինն
 խորհելով շարչարեցաւ վասն Գի. թագա-
 ւորելով ընդ նմա յերկինս:

4. Մաղթանաւք սոցա, Տէր, մեզ ու-
 ղորմեա և սպասաւորաջ սոցա ոսկերաց
 որք պարակից երկնաւորաց տաւնախմբեմք
 զյիշատակ սոցա, ցնծութեամբ ընկալ
 զմեզ յերկնային խորանսդ:

(*) Անտիգե կամ ազգի անուն է և կամ հը
 նշանակէ անօրէն:

Այստեղ դնում ենք Մայր Աթոռի ընտիր և հին գրչագիր շարականների համեմատութեան ժամանակ մեր գտած այն երգերը, որոնք վերջին խմբագրութեան և սպոմ շարականների մէջ չկան: Մեր այս գիւտը կտրող է օգտակար լինել նմու բանասէրներին:

I

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՅ

1. Հայր երկնաւոր, անկանիմ առաջի անոխակալ քո գթութեանդ, զի մեզաւք իմովք բարկացուցի, և շար առաջի քո արարի. աղաչեմք զքեզ, ներեալ յանցանաց իմոց որ միայնդ ես ողորմած:

2. Արք անաւրէնք կողեցին զիս հազորդի յարեան մահու. գնացի զճանապարհս ձախակողմեանն, կատարեցի զշար խորհուրդ նոցա. աղաչեմք ևն:

3. Մեծ են յանցանք իմ, Տէր, զոր գործեցի յահէ մահու հրամանաւ իմա՝ յէլեան բռնաւորին. երազեցի հեղուլ զարիւն եղրաւրն. աղաչեմք ևն:

4. Աճ ապուէն և յոյս դարձելոյս 'ի քեզ, յարեանէ փրկեա՛ զիս, Տէր, որպէս թողեր զայն երգողին, թող և ինձ ըզպարտս մեղուցեալ քո ծառայիս. աղաչեմք ևն:

5. Մեղայ, Տէր, մեղայ, Մանասէի ձայնիւ գոչեմք, ընկալ զիս, մարդասէր, ընդ երանելեացն որոց թողան և ծածկեցան յանցանքն. աղաչեմք ևն:

Ինչպէս կ'երեւի աների սկզբնատառերից և վերառութիւնից, շարական գրիւ է Համամանուս անձը, իւր յանցանքների համար աղաչում է Աճուն և ինչպէս երևում է, յանցանքը զործել է իսլամեան բռնաւորի հրամանով:

II

ՅՅԼ ՀԱՐՑ ԱՆՍՏՅԱՆ ԱԾ.ԱԾՆԻՆ

Ուրախ լիք Մարիամ, որ Աճածին, որ յորովայնի քուճ կրեցեր զաէր Աճ հարցն մերոց:

Ուրախ լիք Մարիամ, կոյս անարատ, որ անճառապէս ծնար զորդին քո, զաէր Աճ հարցն մերոց:

Ուրախ լիք Մարիամ, մայր Բի:

քանզի 'ի քէն ծագեաց մեզ լոյս երեաց Բս. Աճ հարցն մերոց:

Ըզաէր աւրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Ձեկեալն այսուր 'ի փրկութիւն ազգի մարդկան, մարդ եղեալ ճշմարտապէս, ընդ հրեշտակս աւրհնեցէք ևն:

Հին աւուրցն մանկացեալ յանարատի Ս. Կուսէն և յանձն առ մկրտիլ ընդ հրեշտակս. աւրհնեցէք ևն:

Գրուած է ԺԳ., ԺԷ. և ԺԸ. Դարերի գրչագրերում, իսկ ԺԶ. և ԺԶ. Դարերի գրչագիր շարականներում չկայ:

III

ԿԱՆՈՎՆ Ս. ԱՊՏՈՒԼՄՈՒՍԷՀԱՅ

1. Աճ հաւար և զքանչելի, որ ընտրեցեր քեզ սիրելի և ծառանգորդ սուրբ արքայութեան Ապտուլմուսէհ ծառայ Գրիստոսի. մաղթանաւք որս Գրիստոս խնայեալ 'ի մեզ:

2. Բանաւոր չուշան հաւտի և աղանի տանն տէրունի ցանկայր այգիլ(*) նացիւն կենդանի բառ սրբոց մանկանցն քրիստոսն էի. մաղթանաւք ևն:

3. Գեղեցիկ ազնիւ մանկանցն ժողովեալ ի ճաշի միջուրէի սաէ և զինչ կամ իմ լինիցիմ խառնիլ ի կարգս ձեր ցանկալի. մաղթանաւք ևն:

4. Դասակցեալ երանելեացն Ապտուլմուսէի ծառայ Գրիստոսի շրջապատեալ գրիկն համբուրեն և բուրէր հաւա անմահութեան որպէս կնդրի. մաղթանաւք ևն:

5. Մտեցաւ յերանելեացն Ապտուլմուսէհ ծառայ Բի. հայցէր մկրտիլ 'ի ձայն հրաշալի, Հայր և Որդի և Սուրբ Հոգի. մաղթանաւք ևն:

6. Բնք պատանի գուով բարի զաւակ ծնաւզի ամբարշտի մերձեալ 'ի յունկս զինդ սոկի և արձակեալ գազանարար զարիւն եհնդ 'ի վերայ վիժի. մաղթանաւք ևն:

7. Երեւեալ փրկիչն Յո. առ 'ի տեսեալեանն 'ի գիշերի 'ի մէջ գրի աղմականի և յայանեաց զատուածութիւն իւր հրաշալի. մաղթանաւք ևն:

(*) Այդիլ թէ յայիլ: Զեռագրում այդիլ է կարծում եմ գրողն է սխալուել:

8. Ընդ անցանելն Արտաշի և այլազգի վաճառականի խոստանայր քեզ տասանորդ ի յոչ կամաի (?) ժողովեցեր զուղտ երամակն առ քոյդ վկայարանի. մաղթուաւք ևն.:

Ինչպէս կ'երեի շարականիս բովանդակութիւնից, երգս նուիրուած է Ապտուլմուսէի վկային, որ հաւատացել է Քրիստոսին և մարտիրոսացել: Հաւանօրէն գէպքը Իննբորդ կամ Տասնբորդ դարի է: Այս շարականը միայն № 1566 գրչագրուան է որ ունի Ռիթ թուականը:

IV

Հսկգսեան շարակամ, որ կայ № 1615 գրչագրուում, որ ունի քի (1451) թուական:

1. Հայր անսկիբըն անեզ անմահ անապական անքննին 'ի յէութեան, քաղցր և ներող երկայնամիտ միշտ, յիշեա զհօգիս ննջեցելոց մերոց և հանգս ընդ սուրբս քո:

2. Որդիդ միածին բանդ 'ի Հաւրէ առաքեցար, էիցն էացուցիչ և եղելոց գոյացուցիչ, յիշեա ևն.:

3. Հօգիդ ճշմարիտ կենդանութեան մարդկան աըւաւ ճշմարիտ խաղաղութիւն աղբիւր կենաց և լցուցիչ, յիշեա ևն.:

1. Արեգակն արդարութեան Գա. և ապաւէն յուսացելոցս 'ի քեզ, որ և զմեղաւք մեռեալ մարմինն կենդանացուցեր փրկիչ. ընկալ զմեր ննջեցեալսն և հանգս ընդ սուրբս քո:

2. Առ քեզ կարգամք անձամբք բեկելովք և արտասուելից հառաչանաւք, որ 'ի գերեզմանն Ղազարու արտասուեցեր. փրկիչ ընկալ ևն.:

3. 'ի քէն հայցեմք բլխուան ողորմութեան պարգևիչ կենդանութեան, որ աւազակին զդրախտն ժառանգեցուցեր, փրկիչ ընկալ ևն.:

№ 1573 անթուական մագաղաթեայ գրչագրուում, ճիւղմերամք վեհագունից շարականի շարունակութիւնը կայ, որ դնում ենք ստորև.:

Արհնաբանող ձայնիւ երգեմք քեզ 'ի բարձունս, Հայր անոխակալ, որ 'ի բոցեղէն սրովբէից միշտ աւրհնաբանիս ան-

լուելի ձայնիւ, հոգիք ննջեցելոցն աւանդի առ քեզ, վերահանգուցիչ սրբոց, հանգս և զմեր զննջեցեալսն ընդ սրբոց քոյոց օրորողս:

Անոխակալ սիրով քո, որդի Այ., հաճեցար բառնալ զմեզս աշխարհի քո խաչելութեամբս. հոգիք ննջ. ևն.:

Յաւէտ անչէլ մշտաշարժ հոսուան և անսպառ աղբեր, անծախաբար բարեաց կենդանանի վտակ և աղբեր բարութեան. հոգիք ննջեցելոց ևն.:

№ 1516 (Ռիթ թուականով) և 1615 (ԹՀ թուականով) գրչագիրներում ճիւղմերամքից յետոյ դրուած է մեղեդի, որ յառաջ եմ բերում ստորև.

'ի հանդերձեալ նորոգմանն նորօքսեանն նորահրաշ Գալստեան քո, Տէր, յորժամ նորոգին հողացեալ մարմինք և միաբանակին առաջի քոյին ռոսկալի բեմին, յայնժամ թողութեան արա ինձ արժանի, զի մեղուցեալ եմ անձամբ և ես գտից 'ի քէն զմեծ գողորմութեան շնորհ, զի դու միայն ես Տէր իմ և Աստուած:

Մշտապայծառ լուսով զարդարին երամք աջագան դասուն 'ի բարձունս հետեալ երկնաւոր փեսային և յանվալճան ուրախութիւնս միշտ զուարճացեալ հրճուիս. յայնժամ թողութեան ևն.:

Երանաւէտ բարբառոյ քո հանդիպիլ բարեացդ արժանացեալ լինին, վերանալ համբարձմամբ ընդ հրաբուն սնուիցն և եղկելի կացեալ մեան լքեալ զատուցն ձախակողմեանն գունդք առաքմամբ 'ի կորուստն յաւիտեանական և անվաղճան տանջանմամբն կորնչին. յայնժամ ևն.:

№ 1598 գրչագիր շարականում կայ հետեալ շարականը, որ վերտառուած է Շարական խնկարկութեան յառաջ բան զՊատարագ

1. Մշտածուխ խնկոյն լուսով փայլածու. աըւեալ, որ 'ի բնութիւնս շնորհ առգրեցեր ծաղկեալդ 'ի բնաւ ընդ մեզ ԱՃ. բանդ 'ի յէէն դաւանիժք ԱՃ ծնընդեամբ աւետաւք 'ի կուսէդ զՅիսուս ընդ մեզ յայնութեամբ սրովբէիւք զաւծեալդ առ միտս բնակեալ. զոր զաւրհնեալդ 'ի մէնջ մեծացուցանեմք:

Ի ՆՔՆԱԿԵՆ ՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԵՐՈՎԲԷՆ ՎՐԴԻ. ՍԱՄՈՒԷԼ ԵՒ ԱՆԻ

Աշխան վերջերը՝ Խրիմեանի Երուսղէմ ժամանումը:

1891 Ապրիլ 16, Գշ. ժամը 7.30ին, յանկարծակի վախճանմամբ առ Աստուած փոխուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Մակար Ա., որոյ թաղման հանդէսը կատարուեցաւ յետոյ Ապրիլ 22, Չատկի Բշ. օրը: Գերեզմանը կը գտնուի Ս Էջմիածին տաճարին արտաքին դրան ձախակողմեան սեան ժող.

1891 Մայիս 1, Գշ.: Այսօր իբրև շրջանաւարտ ելալ և մեկնեցալ ժառանգաւորաց վարժարանէն: 13 ընկերներ էինք, մէկը՝ Զէյթունցի Յովհաննէս վարդանեան կամ Գասապեան, իր յօժար կամօք վարի դասարանը իջաւ և տարի մը ևս մնաց ի վարժարան: 12նիւ էինք հետեւեալները. —

- 1) Մկրտիչ Տ. Պետրոսեան, Մագցի (Արապկիր): (վարժապետութեամբ կը զբաղի):
- 2) Բարթոլոմէոս Ն կարմիրեան, Շապին-Գարահիսարցի: (Յերիտասարդական հասակի վախճանեցաւ):
- 3) Միհրան Նշանեան, Կ. Պօլսեցի: (1898ին վրդ. ձեռնադրուեցաւ Մեսրոպ անունով):
- 4) Ռուբէն Սամուէլեան, Թալասցի, գրիչը:
- 5) Գէորգ Պշաքեան, Թէքրիտաղցի: (1912ին վարդապետ ձեռնադրուեցաւ Արմաշ՝ նոյն անունով):
- 6) Պետրոս Թուր-Սարգիսեան, Հաճընցի: (Յետոյ վրդապ. ձեռնադրուեցաւ 1894ին ի Սիսի՝ Ղևոնդ անունով և վախճանեցաւ 1909ին ի Կ. Պօլսի):
- 7) Կարապետ Օզանեան, Շապին-Գարահիսարցի: (Բժիշկ ելաւ Պէյրութի Ամերիկեան վարժարանէն):
- 8) Յակոբ Մաղլըմեան, Ակնցի: (Քահանայ ձեռնադրուեցաւ Ներսէս անունով):
- 9) Պետրոս Մալամեան Անջրղեցի (Արապկիր): (վարժապետութիւն կ'ընէ):
- 10) Յարութիւն Աստուածատուրեան, Պանարբազցի: (1910ին մեռաւ Աթէնք):
- 11) Անդրանիկ վարժապետեան, Գարամացի: (1907ին մեռաւ Իզմիր):
- 12) Պետրոս Սարահեան, Սիվրի-Հիսարցի: (1898ին վրդ. ձեռնադրուեցաւ Պետրոս անունով. 1914ին Հաճընի թեմին վրայ հպս. ձեռնադրուեցաւ ի Սիս Տ. Սահակ Կաթողիկոսէն): (1940ին ընտրուեցաւ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ յԱնթիլիս և վախճանեցաւ քառամսեայ զանակալութենէ մը կտք — Մ. Խ.):

Մեզմէ երկուքը 1 և 3 վարժապետական պաշտօնով մնացին ժառանգաւորաց վարժարան (ի Չամ-Թաղ), իսկ ասուներնիւ փոխադրուեցանք Իղճիր-Թաղ և սկսանք իբրև միաբան դպիր պաշտօնավարել. աճէն օր առտու երկկոյ ի Սր. Յակոբ դպրական պաշտօն կը վարէինք, կարգաւ Ս. Աստուածածին կ'երթայինք ի սպասաւորու-

2. Աճեան ծննդոցս ցաւղ մկրտման բղխաւ, որ 'ի առաւիղս փողոցն հնչեցար առ մեզ կուսին զքեզ արարակարաւ, արբու՛նն 'ի հաւրէ առ ոգիս որ ակ զգիբդ 'ի հոգւոյն իմաստացուցաւ զոր 'ի խաչին՝ առգրեցար յԱճութեանդ զմիտս ըջոյց մեզ 'ի թողութիւն. զոր աւրհնողդ՝ 'ի մէնջ մեծացուցանեմք:

3. Բոտմամբ առ քեզ սրտիւ պաշաւտիմք մայրդ Աճածին, 'ի հաւրէն լուսոյ հայցեցես յՈրդւոյդ Այ. զմեր զմաքրութիւն 'ի նա մասնութեամբ համարձցիս զմեզ առ հրաշաքեղ ամպդ արտափայլումն յարքայական կառօղ սաւառնիս զհոգի Բարբղի, միջնորդ Տէրունոյ, զոր զաւրհնեալդ 'ի մէնջ մեծացուցանեմք:

(Վերջ՝ 10)

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԱՆ

թիւն Ս. Պատարագի. Թափօրնհրու կարգաւ կը մասնակցէինք ի Սբ. Յարութիւն, երբեմն ոչ կարգաւ Բեթղէմէմ կը զրկուէինք, իսկ մեր վրայ իբր թէ հսկիչ կարգուած էր Մարտչի ծերունազարդ Տ. Խաչատուր Վրդ. Զանսուզեան: Այս միջոցնհրուն քանի մը շարաթ ալ վանքի տպարանը աշխատեցայ իբրև Գրաշար:

1891 Մայիս 28 ին, Գլ., վախճանեցաւ Երուսաղէմի վարադայ վանուց միաբան և Խրիմեան Հայրիկի աշակերտ Տ. Ղևոնդ Մ. Վ. Փիր-ղալէմեան:

1891 Սեպտ. 1 ին, 10 դպիրներս իզմիր-Թաղէն փոխադրուեցանք և Հին Տպարանն կոչուած թաղը, ուր ժամանակ մը մեզ դասախօսեց կրօնական և պատմական ուսումներ Պարոն Թորոս Զուգայեցին:

1892 տարուան սկիզբնհրը, պաղատութեամբ և անզգուշութեան հետեանօք տկարացայ (այն միջոցին կը բնակէինք և Հին Տպարանն կոչուած թաղը) և Յունուար 16 ին Բեթղէմէմ գացի ոգափոխութեան համար, ուր տեսչական պաշտօն կը վարէր Տ. Թովմաս Վրդ. Պետրոսեան (Տիգրանակերտցի): Բեթղէմէմ կը մնայի իբրև դպիր և վարժապետ, ուր սահայն գոհացուցիչ զիեակ մը չուներ:

Այդ միջոցին ծանօթութիւն գոյացուցի Բեթղէմէմի ծանօթ բարերար Հայր Անտօն Պէյլէնի որբարխնամ Խաւաքի վարդապետին հետ (Ապուլէյթթամ), ինչ որ շարունակուեցաւ մինչև իր մահը (որ տեղի ունեցաւ 1903 Յուլիս 27/9 Օգոստ. կիր. և մարմինը յետոյ թաղուեցաւ իւրակերտ եկեղեցւոյն մէջ ի Բեթղէմէմ Յուլիս 29/11 Օգոստ. ին ամենամեծ յուզարկուօրութեան հանդէսներով, յորում և ես ներկայ գտնուեցայ քանի մը հայ վարդապետներու ընկերակցութեամբ):

Այս վարդապետը սրբութեամբ ապրեցաւ և իբրև սուրբ վախճանեցաւ: Կատարելութեան տիպար մը: Իր կեսնքն ու օրինակը մնծապէս ազդած են իմ նկարագրին վրայ:

1892 Օգոստ. 28, Ուրբաթ օր, վերադարձայ Բեթղէմէմէն յերուսաղէմ, և նոյն երեկոյ, 15 դպիրներու ընկերակցութեամբ, կիսատարկաւաք ձեռնադրուեցայ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Սահակ Եպօ. Խապոյանի օրհնութեամբ: Խառատելիակնիս էր Տ. Վահրամ Վրդ. Ազատեան, իսկ նորընտիր Կաթողիկոս Տ. Մկրտիչ Ա. Խրիմեան Հայրիկ ներկայ էր մեր ձեռնադրութեան հանդէսին: Մեզ հետ ձեռնադրուող սարկաւազներէն (անկարգ սարկաւազութեան) երեքը, որոնք երեք տարիէ ի վեր Ուրարկութեան պաշտօն կը վարէին, նայն տարին Արևղայ ձեռնադրուեցան:

Սեպտ. 5, Շբ. առաւօտ, Ս. Գաղաքս ժամանեց Արապկիրի նոյսկին Առաջնորդ Կ. Պօլսեցի Եզնիկ Եպօ. Ապահունի, որ պիտի մնայ իբրև քառօրական:

1892 Սեպտ. 13, Վերացման Խաչի Կիրակիին, Տ. Յարութիւն Պատրիարք հանդիսաւորապէս պատարագեց և կուսակրօն քահանայ ձեռնադրեց Ս. Յակոբեանց առաքին մէջ հետեւալները. —

- 1) Պօղոս Սրկ. Դամասկոսցի (Պօղոս Վրդ., վախճանաւ 1915 ին՝ Ամերիկա),
- 2) Մարաթրոս Սրկ. Խարբերդցի (Մովսէս Վրդ.),
- 3) Սարգիս Սրկ. Մալաթիացի (Աթանաս Վրդ.),
- 4) Արշակ Սրկ. Վանեցի (Եզնիկիէլ Վրդ., վախճանեցաւ 1910 ին՝ Երևան),
- 5) Յարութիւն Սրկ. Շապին-Գարահիտարցի (Յարութիւն Վարդապետ),
- 6) Յովհաննէս Սրկ. Բաղիշեցի (Համօզասպ Վարդապետ),
- 7) Նազարէթ Սրկ. Տէրէնտէցի (Անանիա Վարդապետ),
- 8) Յովհաննէս Սրկ. Կ. Պօլսեցի (Մարկոս Վրդ., Սուլու մականուանեալ),
- 9) Նազարէթ Սրկ. Սերաստացի (Եփրեմ Վարդապետ),

1893 Փետր. 20, Շաբաթէ 'ի Կիրակի լուսնալու գիշերը, ի Ս. Յարութիւն մեր վերնատան մէջ հրգեհ ծագեցաւ (ի տեսչութեան Անտիօքացի Սողոմոնեան Տ. Յովսէփ Վրդ. ի), բայց բարեբաղդաբար առանց շատ շուտուց պատճառ լինելու տալքն առնուեցաւ և այս առթիւ տեսչի կամ լուսարարի անզգուշութեան պատճառաւ:

1892 Նոյ. 18, Դշ., յնէմ. վախճանեցու վարագոյ վանուց միարան և Խրիմ-
եան Հայրիկի աշակերտ Տ. Մեօրոպ Մ. վ. Մոկացեան: Այն օրերը առատաճո ան-
բեկներ կը տեղային, այնպէս որ երեք անգամ յուղարկաւորութեան հանդէսին սկը-
սանք և չհրցանք շարունակել անբեկ պատճառաւ և ընդհատեցինք քարտրուսթիւնը,
որ վերջապէս կատարուեցաւ և թաղուեցաւ երեք օր յետոյ՝ յետ մահուան:

Այս վրդ. ին և Տ. Ղևոնդ վ. Փիրզալէմեանին գերեզմանները իրարու քով
կը գտնուին Սիօնի գերեզմանատան մէջ, որոց տապանադիրները յօրինած է Խրիմ-
եան Հայրիկի:

Այս տարի (1893) Մայիս ամսուն Երուսաղէմի մէջ տեղի ունեցաւ Հաղորդու-
թեան մեծ ժողովը (Գօնկոէ էօքարիսթիք): Տ. Լանժէնիէօ Ֆրանսացի կարօնաւը,
շատ հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մուտք գործեց Մայիս 1ի Շաբաթ օրը:
Ժողովին մասնակցեցան բազմաթիւ Արեւելեան և Արեւմտեան կաթողիկե կեղեցեակա-
ններ, Յոյն կաթողիկէներու Տ. Գրիգոր Պատրիարքը և բազմաթիւ եպիսկոպոսներ:
Հայ կաթողիկէներու Պատրիարք Ստ. Աղաբեան Արք. ին ներկայացուցին էր Առա-
նայի Առաջնորդ Տ. Պօղոս Եպս. Թէրզեան, որ շատ մեծ համակրանք կը վայելէր
ամէն տեղ, սակայն յետ ժամանակաց (1911), այս միևնոյն Եպս. ը պիտի դառնար
ամենէն աւելի ատելի եկեղեցեականը՝ իբրև Խիւրանուշակ Պատրիարք-կաթողիկոս
Հայ կաթողիկ հասարակութեան:

Մայիս 20 Եշ. օրը, Ս. Գաղաքոս ժամանեց Ֆրանչիսկեան կրօնաւորաց ընդհա-
նուր Պետ Տ. Լուի վարդապետ, որ մեծ հանգէսներով ընդունուեցաւ:

Նոյն տարին, Յուլիս 23ի Ուրբաթ օրը, Երուսաղէմ ժամանեցին Ս. Էջմիա-
ծնէն կաթողիկոսական հրաւիրակք — Տ. Արիստակէս Եպս. Սեղբակեան, Տ. Սարգիս
Եպս. Տէր-Գասպարեան, Տ. Եփրեմ վրդ. Սուքիասեան և Տ. Մեօրոպ վրդ. Տէր-
Մովսէսեան: Կ. Պօլսէն անոնք չնկերացած էր Երուսաղէմի Պատր. Փոխ. Տ. Սիմէօն
Արքեպս. Սէֆէրեան: Հետեաւ շաբաթ, հրաւիրակներ հանդիսաւորապէս Հայրապետա-
կան խաչն ու գաւազանը յանձնեցին վեհ. կաթողիկոսին: Այս առթիւ, գրաբար
լեզուաւ շատ գեղեցիկ ուղերձ-շնորհաւորական մը խօսեցաւ հրաւիրակներէն Տ. Ա-
րիստակէս Եպս.:

Օգոստոս 1, կիրակի առաւօտ, Տ. Մկրտիչ Ա. Հայրապետական հանդիսաւոր
Պատարագ մատոյց Ս. Յակոբեանց տաճարին մէջ և շինարարեալի քարոզ խօսե-
ցաւ: Ս. Պատարագին կը սպասուորէին Տ. Տ. Ներսէս Մամբրէ և Սահակ Եպս. ներ-
իրբ Խարիւղաւագ: Տ. Երեմիա Արքեպս. դպրապետ էր: Անոնցմէ զատ կային սպա-
սաւորոզ վարդապետներ, սարկաւագներ և դպիրներ:

Օգոստոս 3ին, Նորին վեհափառութիւնը հրաւիրակներու ընկերակցութեամբ
մեկնեցաւ Ս. Գաղաքէն: Տ. Յարութիւն Պատրիարք, ի գլուխ Միարանութեան,
մինչև երկաթուղւոյն կայարանը յուղարկ դնաց կաթողիկոսին, իսկ Տ. Երեմիա
Արքեպս. և Տ. Մամբրէ Եպս., ուրիշ վարդապետներով, մինչև Յուլիէ իջան: Կա-
թողիկոսը ուղևորեցաւ Աղեքսանդրիա-Թրիէսթ-Վիեննայի գծով և իրեն իբր թարգ-
ման ընկերացու Յուլիէցի Պարոն Սրապիոն Յ. Մուրատեան լեզուալէտ ազգայինը:
Օգոս. 12, Եշ . Տ. Յարութիւն Պարք. Տ. Սիմէօն Արքեպս. ի ընկերակցու-
թեամբ, մեկնեցաւ Երուսաղէմէն դէպի Կ. Պօլիս: Նոյն օրը մեկնեցաւ քաղաքէս
Ֆրանչիսկեան կրօնաւորաց Պետ Տ. Լուի, որ երբ կառքով քաղաքին կայարանը
կ'երթար, իր կառքը գլտորեցաւ դէպի Գէնէնի ձորը, բայց ինքն ըստ ամենայնի
կ'ներթաւ, անփնտառեցաւ և յետոյ քալելով շարունակեց իր նամբան դէպի կայարան,
ուր Տ. Յարութիւն Պատրիարքի սալոն-վակոնը ընդունուեցաւ և ի միասին նստա-
ուր Տ. Յարութիւն Պատրիարքի հետ զարկուց Ֆրանչիսկեան կրօնաւորները
պարտօրդեց դէպի Յուլիէ: Այս առթիւ, Երուսաղէմի Ֆրանչիսկեան կրօնաւորները
գոհարանական աղօթքներ կարդացին իրենց մեծ վանքին Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ:

(Տարւանակիւի՝ 2)

ԳՐԱԴՐՈՍԱԿԱՆ

ՀԱՍԱՌՈՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Քերականական հայերէն երկերու անթոնջ ուսումնասիրող և հրատարակող Պրոֆ. Լևոն Գ. Սաչերեան ի լոյս հանեց նաև Ծործորեցի Յովհաննէս Վարդապետի աշխատութիւնը, «Համառօտ Տեսութիւն Քերականի», (Լոս Անճէլըս, 1984):

Գիրքը կը բաղկանայ 382 էջերէ, հետեւեալ բովանդակութեամբ: Երկու Խօսք, Եփրեմ Եպօ. Թապաղեանի (էջ 7-9): «Աշխատասիրողի կողմից» (11-12): Ներածութիւն (15-108): Համառօտ Տեսութիւն Քերականի, «Բնական Բնագիր» (111-327): «Synopsis», անդերէն (331-348): Ծանօթութիւններ, 1-68 (351-362): Բառացանկ քերականական տերմինների և դժուարիմաց բառերի (363-374): Յանկ Անձնանունների և Տեղանունների (375-376): Յանկ օգտագործուած մատենագրութեան (377-379): Բովանդակութիւն (381):

Յովհաննէս Ծործորեցիի այս երկէն կարևոր օրինակ մը կը դասուի Ս. Յակոբեանց թիւ 1257 Ժողովածոյին մէջ (էջ 357-464) գրուած Անապատ Ուխտ, 1322ին: Չեռագրիս կազմին նորոգութեան ժամանակ պրակներէն մէկը շիտակ չէ դրուած դժբախտաբար: Սոյն ձեռագրի լուսանցքներուն վրայ տեղտեղ կը գտնուին մանրատառ հակիրճ լուծմունքներ ևս: Թերևս աւելորդ չըլլայ արձանագրել այստեղ քանի մը նկատողութիւններ Ծործորեցիի երկին ներկայ հրատարակութեան առթիւ:

1. - էջ 107, ծածկագիր, «ԳՏԵՆՄԾ ԲԳՍ»: - վերձանունով վարդերես:

2. - էջ 118, տող 1. - «յորջորջեր» - Թիւ 1257 ձեռագրին մէջ, էջ 362, տող վերէն 3, մէկը, իբրև թէ սրբագրելով, ըրած է «յորջորջիւր»:

3. - էջ 118, տող 2. - «Մեկէսածին» - Թիւ 1257, ստորին լուսանցքին մանրատառ լուծմունք. «Մեկէն ի յոյն մեղրատէ, և վասն քաղցր և ախորժ վարդա-

պետութեան և յորդառատ Մեկէսածինատէ» (էջ 362):

4. - էջ 143, տող 16. - «որոյ է նմանել» - Թիւ 1257 ձեռագիրը ունի, «որոյ՞ պարտ է նմանել» (էջ 400):

5. - էջ 147, տող 18. - «Զբանն առաջին զոր արար» - ճիշդը, «Զբանն առաջին զոր արարի» (Գործք Առաքելոց, Ղուկայ Աւետարանչի, Գլ. Ա., համար 1):

6. - էջ 153, տող 16. - «Յաղագս կիտից», տարբերակները, «կիտից վասն», «վասն կիտից» - Թիւ 1257 ձեռագիրը ունի «կիտից վասն» (էջ 407):

7. - էջ 177, տող 13. - «Բնձ», տարբերակ «Բնձ», որ ճիշդն է, քանի որ Ծործորեցիին իբր օրինակ թուած բառերուն մէջ նախորդ բառը խոզ կը վերջանայ և յաջորդ բառը՝ կով, ըստ այրութեան կարգի:

8. - էջ 187, տող 4. - «Ե՛կ այսր: Արդ՞ զի ո՛չ ևս դու այժմ պատճառք» - Թիւ 1257 ձեռագիրը ունի աւելի ուշիղ ձևով. «Ե՛կ այսր արդ՞ զի ո՛չ ևս դու այժմ պատճառք» (էջ 376):

9. - էջ 199, տող 13. - «Բի տնկեաց», տարբերակ, «Բի տնկոց», որ նախընտրելի է անտարակոյս:

10. - էջ 201, տող 10-11. - «Երկիր և որ ինչ միանգամ: Ուղղական անուան նշանակիչ գոյի, իսկ անանցականն...» - Թիւ 1257 ունի աւելի ճիշդ ընթերցում. «Երկիր, և որ ինչ միանգամ ուղղական անուն է նշանակիչ գոյի: իսկ անանցականն...» (էջ 384):

11. - էջ 212, տող 7. - «Եւ աղքատ գոլով՝ փարթամ երեւցայց» - Վերջին բառը ուղղիւի կը թուի ըստ խօսքին շարադասութեան, ինչպէս կը տեսնեք էջ 225, տող 7. «Եւ աղքատ գոլով փարթամ երեւց»:

12. - էջ 260. - Թիւ 1257 ձեռագիրը լուսանցքի վրայ լուծմունք մը ունի, լծորդութեանց վերջաւորութեան. «Գ գիր միայն մնաց յամէն այրենիցն որ չէառ ի լծորդութիւնս. յ, վ, ը, ի» (էջ 437):

13. - էջ 315, տող 2-4. - «Եւ խնարհել զիջմամբ ի յիշմն ըստ իս: Թիշնայի ինկեալ բուրուառաւ կամաց սըբրոցն աղաւթիւք առաջի փառացն աթոռոյ»

ԾՆՆԴԵԱՆ ԴԱՐԱԴԱՐՁ ԵՐԵՔ ՎԱՂԱՍԵՌԻԿ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒ

Քառորդ դար առաջ, գրական յոդուածի մը մէջ, «Յորելահաններու սիրահարը անուանած էի մեր ժողովուրդը, երբ, հայրենիքէն ներս ու մանաւանդ դուրս, տեղի-անտեղի իրենց պանթէոններու վեհութեանէն կրկէս կ'իջնցնէր մեր գրական տիրանները, անոնց ծննդեան կամ մահուան 65, 85, 110 կամ 130 և այլ անհեթեթ ամիակներու առիթով, անոնց ներքոն ու գրուածքը հիւտելու էլիւք դարձած ատեն նախադասութիւններով, Յօդուածս կը կնքէի հետեւեալ տողերով. «Թողունք մեր իմացական աշխարհի փառքերը իրենց անքոյթ ու արժանազայել բարձրութեան վրայ ու չիջնցնենք զանոնք հրապարակ անտեղիորէն ու այսքան արագօրէն: Որպէսզի, համեմատական տեւողութենէ մը ետք, անոնց խօսքը դառնայ աւելի յատակ ու հասու, անոնց պատգամը՝ աւելի վեհմ ու մեծիմաստ»:

Այսօր, փնտռել սկսած ենք այդ օրերը, երբ, զգնա մեռիք, կհուր սիրեմ՝ ժողովրդային ասացուածքին հաւատարիմ, դէժ գիտէինք յետ մահու արժանաւոր յարգանքը մատուցանել մեր մշակոյթի

վաստակաւորներուն: Ու մէկ ծայրայեղութենէն միւսին անցած ենք անհաւատալի արագութեամբ: Ու քանի մը կարկառուն դէմքերէ զատ, մոտացութեան տրուած են երկրորդական գրագէտներ, որոնց զլացուեցաւ կենսքը իր լիութեամբը վայելելու բարիքն ու շնորհը, շնորհիւ անգութ թուրքին կամ նոյնքան անգութ թոքախտին: (Յօսք շունիմ կուսակցական կամ խնամիական հաշիւներով կազմակերպուած յորելահաններուն, ուր որչազապարարանութեան մը մուսնտիկներ անձանիերու պանթէոնը կ'առաջնորդուին, շուտ քերուլու՝ չափ մեր իրաւ գրողներուն հետ):

Տարւոյս ընթացքին, արեւմտեան աշխարհը երբ մեծ շուքով նշեց ծննդեան 300ամեակը դասական երաժշտութեան գազաթներէն Գերմանացի Պախիւն և կէս-Գերմանացի կէս-Անգլիացի Հէնտէլին, չմոռցաւ նաև նշել Յօրելահանը նոյն այդ 1685ին աշխարհ եկած իտալացի Սքարլաթթիին, կակտակ որ այս վերջինը չէր համարուած ձայնանիշերու աշխարհի տիրաններէն: Ի՞նչ ըսել ուրեմն մեր ժողովուրդին, երբ թէքէեանը, վարուժանը կամ Սիամանթոն փառաւորելու տոհմ, ստուերի մէջ կը թողու Մեծարհնցը, Ռ. Սևակը, Տէրեանը և այլ ռուզմ առաջեակները մեր մշակոյթին: Ու ժամանկ որ այս երեքը մուսնեցան պատեհութիւնը իմացական բարձունքներուն մատակուր, իրենց կեանքի թէլին անժամանակ փրթու մին հետեւանքով:

Յետոյ, պահանջուածը ամէն անհատ ծառայութիւնն է իր կարողութեան սահմանէն ներս: Թիշուել երեքը արժեարեցիմ իրենց տրուած քանգարները, և նոյն կեցուածքը պէտք է պահուէր անոնց ալ նկատմամբ: Աւետարանի (Ղուկաս, ԺԹ.) մեասնեորու առակին մէջ, Քրիստոս նոյն դովտանքն ու վարձատրութիւնը ըբաւթէ՛ 10 և թէ՛ 5 քանգար վաստկած ծառաներուն, առանց պահանջելու երկու քանգար ստացուէն նոյն արդիւնքը, ինչ որ կը ուղաւէր առաւելագոյնը ստացուէն: Վերջապէս, շորուն որ շատ է արուած, անկէ շատ կը պահանջուի իտօքը մքի

գառինն չ[ե]նլայ ... : — Վերոգրեալ յիշատակարանային տողերը կան թիւ 1257 ձեռագրին մէջ. «Եւ խոնարհել զիջմամբ ի յիշումն ըտախ [նրանտախոյ] — Յիշեսւլիբ խնկեալ բուրժաւու կամայ սրբոցն աղօթիւք, առաջի փառացն աթոռոյ՝ գառինն զենլայ ... » (էջ 459):

14. — էջ 319, տող 9. — «Ընդհալացնէ. — Ըստ երևոյթիմ տպագրական վրիպակ է. Թիւ 1257 ձեռագրիբը ունի ճիշդ ընթերցում. «Ընդհալացնէ» (էջ 461):

15. — էջ 351, ծնթ. 2. — Սբերը ... Սպիտ արգին էր. — կարդալ՝ «Սբերը ... Սաղայի արգին էր» (Հմմտ. Մննդոց, Ժ, 24):

Շնորհակալութեան արժանի է ԳրոՓ. Լ. Գ. Խաչերեան, որ, քանջալան աշխատանքով, ժիջեալարեան հայ հեղինակներէն Մարտիրոսի երկն ալ մտաշելի գարնուց հայագիտութեամբ պարապօղ բանաստեղծներուն:

Ն. ԱՐՔ. ՄՈՎԱԿԱՆ

տարագ մը չէ: Ու ո՞վ կրնայ երաշխաւորել թէ Մեծարենց պիտի չժտեննար Վարուժանին, եթէ քանի մը տասնամակկներ բարդուէին կարճ իր կեանքին:

Միայն է այն կարծիքը թէ գրական խճորով օժտուածները իրենց գերագոյն բուխքը կ'ունենան վաղ երիտասարդութեան: Բացառութիւններ, ինչպէս ամէն մարդի ու ասպարէզի մէջ, հոս ալ կան անշուշտ (յիշել Տ. Կամսարականը): Քիչ չէ թիւը արուեստագէտներու, զիրենք անձմանութեան տաղանթորոց գլուխ-գործոցները իրենց աշունին արտադրած: Ո՞վ կրնար պատանի Արամ Խաչատուրեանի մէջ որջուռնել ապագայի հանրահռչակ երգահանը: Ու խորհիլ թէ մեր գրական անդամատանը որքանո՞վ պիտի շահէր, եթէ յիշեալ երեքը իրենց տարիքի լիութեանը մէջէն նայէին կեանքի հրեռոյթներուն:

Ամենէն վաղամեռիկը Մեծարենց, մեր միասնի բանաստեղծն է: Իր ծննդավայրի (Բիւնկեան) գեղեցիկ բնակարանները իրենց զերը ունեցած են կարծէք անոր հօգե՞ մտաւոր կազմաւորման մէջ, ընկով գինք գերզգայուն անձ մը, նուրբ զգայնութիւններու ու տաշուած մտածումներու մարդը: Իր երկու փոքրիկ զիւանները, սրտնք ճիշդ չգնահատուեցան ժամանակին՝ խոցելով արդէն իսկ հիւանդ իր սիրտը, գերագոյն ապացոյցն են մեր ըսածին: Որո՞նք սրբին պիտի չխօսէին իր շփրակմուտքը, «Աստուածամարը» (յիշել Նարեկացին), «Ա՛խ, Ըլլայի՜ն և ուրիշ շատեր: (Կարգ մը դասագրքեր 1896ը տուած են իրեն որպէս ծննդեան տարիթիւ): 22-23 դարուններ տեսած է լոկ:

Երկրորդը, Բ. Սևակ, բորձրօրէն մշտուած միտք մը, Եւրոպայ տեսած, իր ճճրի Գերթուածները (Կարմիր Գիրքը, -Սիրոյ Վիրքը) ենթախորհրով լաւապէս կը փրկէ թուրքին եսթազիան զոհ այս երիտասարդի տաղանդին մասին, որ 30 տարեկանին քնաց միանալու իր պտպերուն: Կեանքի խոր փորձառութիւնն ուճանաչողութիւնը կանուխէն ըմբռնած, Թէգէտանը յիշցնող բժախնդրութեամբ կազմած է իր ոտանաւորները, ապառաժագլ մակուռութիւն մը հազուադէպով իր տողերուն: Իր ոճը, կարուստ ու զանա-

գեղ, իր տողերը անթերօրէն ճարտարապետելու թէքնիքին միացած, զգաստ ու զուսպ խոհերու ճամբով, մեզի կուտայ պատեհութիւնը արուեստի գործ մը ըմբռնիսնելու:

Վերջինը, Տէրեան, արեւելահայ է, իրեն շնորհուած 35 տարիներու կէսը հայ գրթողութեան նուիրած: Ո՞վ չի յիշեր իր ճշմարտեղի Գաղէլճը, որով մեր պատանութեանը հրաժեշտ կու տայինք հայ դպրոցին: Մեկամղձօտ ու միշնչե իսկ յուսուտայ այս գրթողը սխալ պիտի չըլլար դնել մօտիկը Խահակեանին ու Թումանեանին, զանոնք նկատելով մեր դարու առաջին տասնամակկներուն երեք գագաթները արեւելահայ քնարերգութեան:

Ի տես հայ գրականութեան ու մասնաւորապէս չափածոյ խօսքին դժմ նորահաս սերունդներու անտարբերութեան, գուցէ շատեր յիշին Թէգէտանի խօսքը. «Ոտանաւորը կ'ուտուի»: Այո, կըր մենք ըլլանք միայն սուտելու համար ապրող մարդեր ու մեր կեանքը նկատապա վաղք մը ըլլայ նիւթին ետեւէն, ընտանիք է որ մեր զգայարանքները չկարենան բացուիլ արուեստի ընկալչութեան, ու մենք նեւանանք ինչպէս կրօնքէն՝ այնպէս ալ արուեստէն:

Միտք Մեծարենց (Մեծտաւրեան), Թուրէն Սևակ (Տճթ. Թուրէն Զիլիկիւրեան) և Վահան Տէրեան դիւրաւ ժողովելիք անուններ չեն և պէտք չէ որ ըլլան: Մեզի նման փոքր ու ցիրուցան ժողովուրդները մանաւանդ առաւել կարիքը ունին հաղորդուելու իրենց փառքը կերտող անմահանուն վաստակաւորներուն:

Իրիկ վերջաբան յայտնենք թէ, եթէ Տէրը կամենայ, ծրագրած ենք ձմեռնի իւրաքանչիւր տարուան վերջին թիւին զրակամ բաժնը, փոխան գրախօսականի, յատկապէս նոյն տարւոյ մէջ զուգարկպած մեր գրագէտներու յօդակներուն - ծնունդ կամ մահ - , եթէ անշուշտ յորեկիանը զոյաւորող տարիները ունեան. «Կլործ» թիւ մը: Այլապէս, պէտք չունինք կտրատուած անակներու:

Գ. ՃԱՐՏՐԱՆ

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

**ԵՐՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՆԱԼԴԷՍ
ԺԵ. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՆԱՅԵՐԷՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ**

Այս հանդէսը կատարուեցաւ Երուսաղէմի մէջ, ըստ հին Տամարի՝ Ս. Թարգմանչաց տօնի Շարաթ օրը և վաղորդայնի կիրակին, նախորդ երկուքէին շման կարգով և կանոնաւորութեամբ:

Ուրբաթ երեկոյ, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր նախաժողով, ժամանակցութեամբ բովանդակ Միաբանութեան և ռուսանոցութեան, և ի ներկայութեան ժողովուրդի խուռն բազմութեան և Ս. Թարգմանչաց վարժարանի մօտ 500 աշակերտներուն և աշակերտուհիներուն:

Շարաթ աւաւօտ, ամբողջ ժամերգութիւնն ու Ս. Պատարազը կատարուեցան տօնական մեծ օրերու հանդիսաւորութեամբ: Պատարագի միջոցին, որ մասուցուեցաւ Ս. Գլխադրի սեղանին վրայ, ճաշու ընթերցուածէն հաջք, Սրբազան Պատրիարքը հոգեւոյն Տ. Եղիշէ Ս. Պատրիարքի յիշատակին ոգեկոչուեալն ըրաւ յուզուած սրտով՝ դայն ներկայացուց իր մեծագոյններէն մին ժամանակից հայ հոգևորականութեան այն ղէմքերէն, որոնք ամենէն աւելի հարազատ կերպով կը ներկայացնեն Թարգմանչաց տիպարը:

Ս. Պատարագի աւարտումին, հոգևանդանեան ժամանաւոր պաշտօն կատարուեցաւ լուսահողոյն համար: Անմիջապէս վերջը, միաբանք, աշակերտք և բազմութիւնք ժողովրդեան, գլխաւորութեամբ Սրբ. Պատրիարք Հօր, Թափօրով զօցին ղէպի Ս. Փրկչի վանքը, որուն կից է ընդհանուր հանգստարանը ննջեցեւոց և ներքին բակին մէջ՝ դամբարան հանդուցեալ պատրիարքաց: Ամբողջ գնացքի միջոցին, վարդապետներ, օտրկաւազներ և ժառանգաւորներ սրտաուռ ներդաշնակութեամբ կ'երգէին շեռեւէս եկեւորքը:

Այնտեղ ևս, նորակերտ շիրմին շուրջ կատարուեցաւ հոգևանդանեան պաշտամունք, որ փակուեցաւ Ս. Պատրիարք Հօր սիրոյ և յարգանքի խօսքովը:

Կիրակի առաւօտ, Մայր Տաճարը լեցուած էր մեծ բազմութեամբ: Լուսարարագեա Տ. Մեսրոպ Սրբազան ժառոյց հանդիսաւոր Ս. Պատարագ և Ս. Պատրիարք Հայրը խօսեցաւ օրուան քարոզը:

Կէսօրէ ետք ժամը 4ին, ժառանգաւորաց վարժարանի նեմարան-որանին մէջ կատարուեցաւ դրական հանդէսը, ըստ հետեւեալ յայտագրի.

- 1) Բացման խօսք յանուն Յորիկինական Յանձնարումքի՝ Պր. Շահան Պէրպէրեան:
- 2) ՃՏԵՐ, կեցո դու զՀայաս (մաղթանք):
- 3) Յաւերժական աշակերտութիւնը՝ Բանախօսութիւն՝ Տ. Տիրան Վրդ. Ներսոյան:
- 4) Հատուած մը Մովսէս Խորենացիէ՝ Արտասանութիւն՝ Ծակորոս Գնահան:
- 5) ՃՄՎ մեծաւքանչ զու լեզու (Եռաձայն՝ դաշն. կոմիտաս Վրդ.):
- 6) Ալլիսուսթուղթ (Վ. Թէքէեան)՝ Արտասանութիւն՝ Դրանիկ Դազարեան:
- 7) ՃՏՆին Խորհուրդը (Թ. Ե. Գ.)՝ Արտասանութիւն՝ Ժիրայր Մոզուան:
- 8) Ճեաշը (Եռաձայն՝ Խօսք՝ Ե. Արք. Դուրեան, երժու. Ե. Թ. Գ.):
- 9) Ալլի Օրերուն՝ Խորհուրդ (Թ. Օշական)՝ Արտասանութիւն՝ Ազատ Սրկ. Երէցեան և խումբ:
- 10) Հայրապետական Մաղթանք (Քառաձայն՝ դաշն. կոմիտաս Վրդ.):
- 11) Փակման խօսք նախագահ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:
- 12) Աղօթք Տէրունական (Քառաձայն՝ դաշն. կ. Վ.):

Ներկայ էր Երուսաղէմացի և գաղթական հայութիւնէն հոծ բազմութիւն մը: Փակման խօսքի աւարտին, Ս. Պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց նաև հանդէսին ներկայ եղող Հայ Կաթալիկ հասարակութեան ներկայացուցիչ Մեծ. Տ. Յովհաննէս և Հ. Մանուէլ վարդապետաց և Երուսաղէմի Անկիլիքան Եկեղեցւոյ Դեր. Եպիսկ. Փոխանորդի և Կանանիկոս Պրիմ. մէնի, և շնորհակալելով օրինեց ամէնքը:

]](ԱՄԻՈՅՆ, 1935, Թ. Յարի, Նոյեմբեր, Թիւ 11, էջ 360-362):

Ս. ՅԱՎՈՒԻ ՆԵՐՍԷՆ

ԽԿԵՂՆԵԱԿԱՆՔ-ԲԵՄՍԱԿԱՆՔ

● Եր. 2 Նոյմ. — Ս. չորից Անտարակցացի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան դաւթի արեւելահողմը գտնուող Ս. Յովհաննէս Անտարանի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեան:

● Կիր. 3 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աստուածածնայ խորանի վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Արդ. Ալևանեան:

● Բշ. 4 Նոյմ. — Ս. Յովսէփայ Ասուածաբն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գիթնեմանի Ս. Աստուածածնայ Տաճարն մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչ՝ Հոգչ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան:

● Եր. 9 Նոյմ. — Ս. Երկուստան վարդապետացի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլխաղի: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վանիկ Վրդ. Մանասարեան:

— Կէսօրէ ետք, լուսարարպետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպօսի զլիսուորութեամբ, Միա-

բան Հայրեր ընթացաբար մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի և խաչագիւտի ուխտերէն ետք, վերջնայ կից՝ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատեսակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թաճար Տաճարէն ներս Թափօրարպետն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Վրդ. Երպէթեան:

● Կիր. 10 Նոյմ. — Դիւս Խաչ (326): Գիշերու յին և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովսէփեան: Ապա կազմուեցաւ մեծանշան խաչագործ, որ նախ ի խաչաքիւտի աջը և ապա բարձրանալով վեր, երեք անգամ դարձաւ Ս. Գերեզմանին շուրջ: Խաչդիսապետն էր, ամպնովանի տակ և Ս. Խաչագործի մասունքն ի ձեռին, Գերշ. Լուսաւորարպետ Սրբազանը: Ինչպէս ըստ Գրիստոսոսի երգեցողութեանէն ետք, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ վարդապետաւոր զայ հանդիսութեան:

● Եր. 16 Նոյմ. — Տօն Ամենայն Որքաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեան:

● Կիր. 17 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Արդ. Ալևանեան:

● Ուր. 22 Նոյմ. — Նախատեսակը պաշտուեցաւ Ս. Լրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Եր. 23 Նոյմ. — Տօն Ս. Լրեատկապետաց Գարիկի եւ Մրկայի: Առաւտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լրեշտակապետ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վանիկ Վրդ. Մանասարեան: Ապա, ընկալաւ սովորութեան համաձայն, հոգեհանդուտեան պաշտօն կատարուեցաւ Ս. Աթոռոյս բարերարունի Աղանի ձեղանի բնակարանի համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Մանասարեան:

● Կիր. 24 Նոյմ. — Ըստ սովորութեան, ի Ս. Լրեշտակապետ մատուցուեցաւ Տեսչական Պատարագ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Սեան Վրդ. Դարպետ:

● Եր. 30 Նոյմ. — Առաք. Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլխաղի: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովսէփեան:

● Կիր. 1 Դեկտ. — Բարեկենդան Յիմնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, զոր վերանատարան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Արդ. Ալևանեան:

● Գշ. 3 Դեկտ. — Ընծայման նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Մանասարեան:

● Գշ. 4 Դեկտ. — Ընծայման Ս. Աստուածածին: Առաւտեան, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. զլիսուա-

Հ Ա Ն Գ Ի Ս Տ Տ. ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԳԱՍՄԱՐԵԱՆԻ

Դարձեալ կոկիծը կը կոխէ մեր սիրտը, ի լուր մահուան ամհնասիրելի մը, Աստուծոյ և ազգին պատուական պաշտօնէի մը, որ կ'իյնայ յանկոտ իր կեանքի ամհնէն պայծառ մէկ հանգրուանին:

Փորձառութեան և զարգացումի զոյգ դպրոցներուն մէջ ևսիւժ՝ հասած էր հոգուով, երբ 48 տարեկանին Անթիլիոս փոխարդուեցաւ իբրև վերատեսուչ կիլիկեան Դպրեմանքին:

(Հանգուցեալը, հազիւ 53 տարեկան, յանկոտմահ եղած էր Երևանի մէջ, երբ Մայր Հայաստան այցելութեան էր գացած: Անթիլիոսի իր բարձր պաշտօնը այնուհետև յանձնուեցաւ Ս. Աթոռոյս երիտարդ և զարգացած Միաբաններէն Հոգչ. Տ. Նորայր Վրդ. Պողոթնանի — այժմ Արքեպս., ի Ս. Աթոռ — որ վարեց զայն ձեռնհասօրէն մինչև 1940 — Մ. Ս.):
(Միւռն., 1985, Բ. Յարի, Դեկտեմբեր, Թիւ 13, էջ 308:)

բուժեամբ, Միտքան Հայրեր ինքնաշարժեբով իշան Գեթեմաների ձորը ու շերտաշարառով ձուտք գործեցին Ս. Առաքելածանայ Տանար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանի վրայ օրուան հանդիսաւոր Ս. Գառարազը մատոյց Գերբշ. Հանդիսապետ Սրբազանը: Ընկալեալ սուրբութեան համաձայն, հոգեհեղափոխութեան պաշտօն կատարուեցաւ աղօթի և Ս. Աթոռոյ բարեւոբար Կիւլլապի Կիւլլայէնկեանի և Կիւլլայէնկեան գերբաւտանի նշխեցելոց հոգիներուն համար:

● Եր. 7 Դեկտ. — Գրիգորի Սեանկեպոզոնի: Ս. Գառարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Լոգշ. Տ. Ռոկի Վրդ. Որդիքեան:

● Կիր. 8 Դեկտ. — Ս. Գառարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Կարապետի խաբանի վրայ: Ժամարարն էր Լոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկատարեան:

● Ուր. 13 Դեկտ. — Նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Լանդիսապետն էր Գեբաշտոն Տ. Գառիթ Սպո:

